

355

Յ. ՄԱՆԻԱՍԵԱՆ



ԵՐԴՈՒՄ

ԿԷՊ

Պատմություն

93

ПЕРЕПЛЕТАЯ
ФЕЛЬДШЕННЪ
ГНФЛИСЪ

W 456

Բարձրագույն ակադեմիայի
 ԲՈՂԱՆՆԵՐ ՄԱԼԽԱՆՆԵՐ


ՅՈՒՐԱԲԵՐ ԱՄԵՆԱՆՈՒՄ
 1895 թ. ԿճԱՐՄ
 ՔԻՖԻ

W.

ԵՐԴՈՒՄ

1001
 2368

Վ Է Գ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
 Տպարան Ա. Յ. Մելիք-Չափազարեանի.
 1895

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

2953

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Дозволено цензурою, Тифлисъ, 3-го Ноября 1895 г.



93-2014
1893

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՄԱՐԿԵ

ՄԵԾ. Գ. ՆԻԿՈՂԱՅՈՍ

ԳՐԻԳՈՐԵԱՆԻՆ

1888 թուի գարնանային մի երեկոյ էր։ Արևն իւր վերջին կարմրադեղնագոյն ճառագայթները խուրձերի նման շալտել էր դէպի երկինք, իրեն քողարկող ամպերի եզրները ոսկեզօծելով։

Երկնքի արևմտեան մասը քանի գնում աւելի և աւելի ծածկւում էր ամպերով, որոնք հետզհետէ սքողում էին արևի ճառագայթների խուրձերը։

Ախալքալաք գաւառի Սուլտա գիւղից դէպի հարաւ գտնուած Գէօգդաղ լեռան խոտաւէտ և լայնարձակ լանջերի վրայ միմեանց մօտ առկայծում են մի քանի խարոյկներ։ Դրանց շուրջը շարժւում են ոչխարի ճերմակ մի քանի հօտեր։

Դրանցից բարձր շատ հեռու, ուր սարի կատարների վրայ դեռ կենում է հաստ շերտով ձիւնը, միմեանցից ոչ այնքան հեռու վառւում են ուրիշ

երկու խարոյկ: Այդ խարոյկների շուրջը երկու հօտ ցրիւ տուած արածում են:

Արեն արդէն կորել էր ամպերի ու լեռների ետեւն և մթութիւնը հետզհետէ տիրում էր երկրի երեսին:

Հօտերից մէկը գնալով իւր փարախը պառկեց, իսկ միւսը՝ քամու հակառակ, որպէս ոչխարի սովորութիւնն է, կամաց շարժւում է դէպի լեռան ետեւն գտնուած ձորը: Հօտի առաջնորդ երկարամօրուս և լաղթանդամ նոխազը՝ երկար, վեր ցըցուած պոզերով, գլուխը բարձր բռնած մի առանձին հպարտութեամբ դիմացը նայելով գնում է ոչխարի առջևից:

Հօտի չորս կողմը պատել են մինչև երեսնի հասած, ականջները կտրած, կապտագոյն, քեամա ցեղին պատկանող կատաղի շները, որոնք իբրև հսկիչներ հօտի շուրջը պատած՝ նրա հետ ընթանում են առաջ: Բաւական է մի խուլ շշուկ կամ շատ հեռուն երևացող մի բան՝ ահա կապուտների ոհմակը կատաղի հաջոցով հասնում է ափնտեղ. կամ եթէ հօտից մի ոչխար դուրս է գալիս հեռանալով՝ կապուտն իւր բաց արած ատամներով, զրու մըխտալով դարձնում է նրան՝ դէպի հօտը:

ձերմակ քիւլահների վրայ մինչև հինգ արշին երկարութեամբ ուրած չիթ փաթաթած, քառակուսի, պարկի ձևով, եափնջու տեղ ծառայող քէչաները վրաներն առած, մինչև չորս արշին երկարութեամբ կեռ գլխով մահակներն ուսերին եր-

կարացրած՝ հօտի հետ մի քանի կողմից ընթանում են հովիւները:

— Քիւս, քիւս հա քիւս, էէյեւհ, քիւս, հասան քէր, հասան, Մարկոսի ոչխարը ջրից արդէն բինէն եկաւ, ուշացանք, քէր, էէյեւհ, քիւս:

— Քիւս-քիւս, հիււհ, քիւս—, իբրև պատասխան Հասոի խօսքերին ձայնեց Հասանն և մահակը շարժեց օդում:

Հասոն ևս շարժեց իւր մահակն և մի երկու անգամ թույլ կերպով խփեց դեռ բրդոտ ոչխարների մէջքերին, որից նրանք քալերն արագացրին:

Ոչխարն իջաւ ձորը, շարուեց, գետակի երկարութեամբ, խմեց սառը ջրից, դարձաւ դէպի իւր փարախը:

Հովիւներից երկուսը վրանի մօտ նստած շտապով քերթում էին մի մորթած գառն և միսը կտրատելով լցնում էին խարոյկի վրայ եռ եկող կաթսան: Երբ միւս ընկերներն եկան՝ առան մորթած գառան լեարդն և թընթղուց մսից մի քանի կտոր ու ձգեցին կրակի շղջի վրայ խորոված ա-

նելու:

Մի քանի րոպէից լետոյ ընթրիքն արդէն պատրաստ էր:

Շներն առնելով մսի հօտը՝ արդէն պատել էին հովիւների շուրջը, պառկել փորերի վրայ, գնչերը դրել երկարացրած առաջին ոտների վրայ, իրենց խելօք աչքերն ուղղել էին դէպի տէրերը և պո-

չերը գետնին խփելով պահանջում էին իրենց բա-
ժինը:

Հովիւները կոխում էին խոշոր ձեռները խա-
րոյկի վրայից ետ առած կաթսան, հանում կիսաեփ
մսի կտորներն և ագահութեամբ ուտում:

— Ապրիւս, Բրօ —, ասաց թոփալ Ամօն, արխա-
լուղի փեշերով իւղոտ ձեռները սրբելով, — վաղուց
է գողացած գառան միս չէինք կերել:

— Ի՞նչպէս գողացար, Բրօ, որ չտեսան —, հար-
ցրեց Հասանը:

Հա, բան է տոււմ. երեկոյեան դէմ գալիս էի
ձորի միջով, տեսայ, որ մի գառը ձորի մէջ քրո-
ջերի տակ ման է գալիս, նայեցի՝ Մարկոսի գառն
է, բռնեցի, քէչալիս տակ դրի, բերի:

— Հայի գառն է, տղերք կերէք, անո՛ւշ լի-
նի —, խօսեց Հասօն, — հայերն իրենց մալը չեն ու-
տում, գիտեն, որ մեզ համար է:

— Հայի մալը քրդի համար չէ, հապա ո՛ւմ
համար է —, խօսեցին երկու հովիւ համարեա միա-
սին, — Մուշում, Ալաշկերտում որ հայեր չլինին, հօ-
մենք քաղցած կըկոտորուինք:

— Հայն ո՞վ է, որ սարում ոչխար պահէ —,
խօսեց Հաճօն, որն ըստ երևոյթին ամենից մեծն
էր լինելու:

— Ո՛ւ հովիւներն էլ հայեր լինին —, վրայ բե-
րեց թոփալ Ամօն:

Տղերք կերէք, հայի մալ է, եգուց մէկն էլ

կըբերեմ —, մի առանձին հպարտութեամբ ասաց Բը-
րօն:

— Ե՛հ, հայն ի՛նչ է. վախկոտ կնիկմարդ. հայ
հաւ —, ասաց զուարճութեամբ թոփալ Ամօն:

— Հայ՝ հաւ, ղորդ որ —, վրայ բերին միւսներն
և սկսեցին բարձր-բարձր ծիծաղել:

Ընթրիքից լետոյ Հաճօն իւր ոչ ալնքան եր-
կար թուլութենայուխը կոխեց կտորէ քիսան, լըց-
րեց և սկսեց ֆստֆստացնել: Հովիւներից մի քա-
նիսն ևս մաքսանենգ ծխախոտից պապիրոսներ շի-
նեցին և սկսեցին կծու ծխի քուլաները թողնել օդի
մէջ:

Բրօն ձգեց նրանց առջև մորթած գառան ոս-
կորներն և հացի մնացած փշրանքը: Կապուտներն
խսկոյն վրայ վազեցին և սկսեցին ղումխտալ: Նրան-
ցից ուժեղները դուրս ցցած ժանիքներով ուղեցին
դէն մղել միւսներին, որ իրենց սեպհականեն բո-
լորը. բայց Բրօն մահակի զգոյշ շարժումով արգե-
լեց նրանց, որից կապուտները խորամանկութեամբ
փակեցին աչքերը, պառկեցին փորերի վրայ իբրև
հնազանդութիւն: Բրօն նրանց բաժինը ցրեց մի
քանի տեղ:

Ընթրիքից լետոյ, երբ խարոյկը հանգչելու վը-
րայ էր և հովիւների քունը չէր տանում, Հաբօն
առաւ սրինգն և սկսեց ածել քրդական լօլօ:
Կոպիտ մատների տակից, հաստ շրթունքների ա-
րանքից անհաւատալի էին թւում այդ մերթ մե-
լամաղձային, մերթ ուժգին փոթորկուող ձայները:

Տարածւում էին այդ ձայները գիշերային խաղաղութեան մէջ և քամու ալիքների հետ ցրւում հեռու-հեռու: Ռա նրանց սիրահարական լոլօն էր: Վերջացաւ լոլօն, ահա Բրօն առնելով իւր սրինգն սկսեց ածել քրդական պար: Հովիւները, բացի Հաճօից, որ էլի ֆստֆստացնում էր իւր երկրորդ անգամ լցրած թուլթունչպուխը, թւթւի տուած, զանազան մեծ և արագ, բայց միատեսակ ցատկումներով սկսեցին պարել ըստ եղանակին:

Ոչխարը մշմշալով հանգիստ շունչ էր քաշում և որոճ անում: Փարսխում պտուկած հօտն, երբ հաւաքուել, կուչ էր եկել, տասն անգամ քիչ էր երևում, քան ալածած ժամանակը: Ոչխարների շատերի գլուխը հանգստանում էր միւսի փորի կամ կրծքի վրայ:

Հազար ու մէկ տեղից չլերով ու քէշանների կտորներով կարկատուած հովուական վրանը բաւական մեծ է: Նրա մէջ դարսած են այդ հօտի տիրոջ — Խիւղամի կաթնագործութեան մի քանի ամանեղէններն և հովիւների մի քանի իրեղէնները:

Հովիւներից մի քանիսը գնացին հօտի մօտ քրնելու, մի երկուսը՝ գառան հօտը պահելու, իսկ Հաճօն մնաց վրանում:

Խարոյկը հանգչելու վրայ էր: Հովիւների քուներն արդէն տանում էր: Նրանք արդէն պատրաստւում էին քնելու, երբ յանկարծ կապուտների ոհմակը կայծակի արագութեամբ վրայ տուեց հեռուում, մթութեան մէջ երևացող մի սև բանի:

— Հա՛ա — հէհէհ —, հարայ տուին երկու հովիւ և մահակները բարձրացնելով վազեցին առաջ:

— Հա՛ա — հա՛ա —, լսուեց հեռուից մի ձայն իբրև պատասխան հովիւների կանչին:

Հաճօ, թիւանքը հազրէր, պատրոնը դէր, քանի դեռ չէ մօտեցել —, խօսեց նրա ընկերն, ինքն ևս իւր հրացանը պատրաստելով:

— Ո՛վ է, էհէհ —, նորից հարայ հովիւներն, երբ շները յանկարծ ձայները կտրեցին, — մօտ մի գայ, թէ չէ կխփենք:

Հասան, եկողը ծանօթ է, որ շները ձայները կտրեցին, ձիուց վայր չառան —, խօսեց Հաճօն:

— Մի վախենաք, ես եմ —, պարզ լսուեց եկողի ձայնը, որից հովիւները ճանաչեցին նրա ո՛վ լինելը:

— Աղա՛ —, ձայնեց Հասանը և շտապեց առաջ:

Մթութեան մէջ, ոտից մինչև գլուխ զինուած, ետինջին ուսին, ոչխարի մօրթէ մեծ փափախը մինչև ականջները քաշած, սև ձիու վրայ նստած՝ մօտեցաւ նրանց մի յաղթանգամ մարդ:

— Սո՛ւս, — եղաւ նրա պատասխանը և լռութեամբ շարունակեց ճանապարհը:

Հովիւները լռելեայն հետեցին նրան:

Եկողը հասնելով վրան՝ իջաւ, ձին տուեց Հասօին, ինքը մտաւ ներս և Հասանին հրամայեց հովիւներին կանչել:

— Աղա, դո՛ւ ես —, քնից վեր կենալով խօսեց Հաճօն, — տղոյը բա՛ն ունէիր ասելու, որ կանչեցիր:

—Այո՛—, խորհրդաւոր կերպով պառասխանեց Խիւղամը և վառեց թուփունչպուխը:

Խարուկի դեռ չհանգած կայծերի ալիքանման ճառագայթները ներս անցնելով ընկնում էին Խիւղամի երեսին և լուսաւորում նրա չաղ դէմքն ու խիտ մօրուքը:

—Տղերք—, ցածր ձայնով խօսեց Խիւղամը, երբ հովիւները պատեցին նրա շուրջը, —գիտէ՞ք էս գիշեր ինչ էք անելու:

—Ի՞նչ, աղա՛—, վրայ բերին մի քանի հովիւ:

—Ոչխարը կըձգէք չայիրը (խոտատեղ):

—Չայիր—, աչքերը լայն բացանելով բացականչեցին մի քանի հովիւ միասին, —ի՞նչ չայիր:

—Մահմուդի չայիրը:

—Մահմուդի չայիրը—, այս անգամ զարմանքով վրայ բերին նրանք, —Յարութիւն աղայի՛ չայիրը:

—Այո՛, Յարութիւն աղայի:

—Ի՞նչպէս... ը՛ր՛ը՛... չէ՛ որ Յարութիւն աղան քո բարեկամն է—, խորհրդաւոր կերպով անհամարձակութեամբ հարցրեց Հաճօն:

Հովիւները զարմանք արտայայտող աչքերով նայեցին իրար երեսի:

—Դուք ոչխարը կձգէք չայիրը—, ձեռք քիչ վեր բարձրացնելով խօսեց Խիւղամը, —առաւօտեան Յարութիւն աղան Օսմանի ու մի ուրիշ վկայի հետ կըգայ. կասէք, թէ Մարկոսի ոչխարն էր:

—Մեր գլխի վրայ —, բացականչեցին երկու հովիւ, չհամբերելով խօսքի վախճանին:

—Ինքը Յարութիւն աղան, նրա հետի երկու վկաներն ասելու են, որ Մարկոսի ոչխարն էր, տեսել են... իմացա՞ք...

Հովիւները հասկացան, թէ բանն ինչումն է, ուրախացած իրար ականջի փսփսացին, —Մարկոսի ու նրա հովիւների հախէն գալու ենք հասնա՛...

—Յետո՛յ, աղա՛—, ուրախացած հարցրեց Բրօն:

—Յետոյ Յարութիւն աղան գանդատ կտայ Մարկոսի վրայ, ձեզ էլ կկանչի վկայ:

—Մենք ասելու ենք, որ...

—Մարկոսի ոչխարն էր—, հովուի խօսքն ընդհատելով վրայ բերեց Խիւղամը:

—Լա՛ւ, մեր գլխի վրայ, մեր աչքի վրայ—, չորս կողմից վրայ բերին հովիւները:

—Դրա համար Յարութիւն աղան ձեզ ամեն մէկիդ երեք-երեք ըուրլի փէշքեաշ է ուղարկել:

Հովիւներն ուրախութիւնից շարժուեցին տեղերում և տակից իրար բոթեցին:

—Համա գիտէք, էստեղ էլ, դատարանում էլ—, փողերը բաժանելով խօսեց Խիւղամը, —ասելու էք, որ Մարկոսի ոչխարն էր, տեսել էք:

—Դա մեր բանն է. դու երեք մանէթ տուր, ուզում ես թագաւորի մօտ էլ գնանք—, ուրախացած խօսեց Հաբօն:

—Հիմայ ես գնում եմ. առաւօտեան երբ գլաւան բանեաթիններով գայ վնասը կտրելու՝ այստեղ կլինեմ: Չայիրը մի լաւ արածացրէք, ոչխարը մէջը ման ածեցէք, կխճորել տուէք. իմացա՞ք:

— Շատ լաւ, շատ լաւ. դու հրաման տուր, մենք էնպէս փճացնենք, որ մի խոտ էլ չմնայ—, բացականչեցին հովիւները:

— Կուզէս, աղա, կտաւհատ էլ ձգենք, որ ոչ-խարը չաղանայ. էս տարի դեռ կտաւհատ չենք ձգել—, խօսեց Բրօն:

— Էդ յետոյ—, սլատասխանեց Խիւղամը և վեր կացաւ տեղից:

Հովիւներն ուրախացած իրար ականջի փափր-սալով դուրս եկան վրանից:

Կէս գիշեր վաղուց էր անցել, երբ Խիւղամը ձի նստելով մթուփեան մէջ անյայտացաւ:

Հովիւները վեր կացրին հօտը:

— Քշիւր, էս կողմից քշիւր, նրանց շների աչքով չընկնի, հաւար չձգեն:

Շները կանչիւր, շները, թէ չէ կհաջեն, կիմա-նան...

— Նրանք բոլորն էլ մեռելի պէս քնած են, քշեցէք—, խօսեց երկրորդ հովիւը:

Մի քանի ըոպէից ոչխարն արդէն տարածուած էր մինչև մարդու ծնկները հասնող չա-լիւրի մէջ:

— Գլուխը քարը կտայ Մարկոսը, մէկ էլ էս սարերը ոչխար չի բերի:

— Էլ ոչխար կմնայ, որ բերի:

— Ափսոս, էլ գողացած գառան միս չենք ուտելու:

— Էգուց էստեղ ղալմաղալ կլինի, հաճա...

— Որ բանը հասել է կռուի, է՛ էնքան դա-դանակ հասցնեմ Մարկոսի հովիւներին որ...

— Մանաւանդ էն Եադօին. ես նրանից վրէժ ու-նիմ առնելու. մէկ անգամ ձորում մենակ էի, ինձ մի քանի դադանակ հասցրեց. դեռ ցաւը ջանումս է:

Մարկոսի հօտը, որի փարախն այժմ հեռու չէր այդ չալիւրից, հանգիստ պառկած էր իւր տե-ղում: Միայն երբեմն-երբեմն լսում էր այդ հօ-տի շների դանդաղ հաջոցը, որ նորից կրկին դա-դարում էր. և շները դնչերը կոխելով կուչ բե-րած ոտների մէջ՝ հանգստանում էին:

Անցան ժամեր. Խիւղամի հօտն արածեց չա-լիւրի միջև տարածուած, միքանի անգամ ման ու ման արեց նրա բոլոր տարածութեամբ, խմեց վե-րեւի մասում հոսող առուակից, որը թափւում էր այդ չալիւրի մէջ, ուր և գալիս էր ջուր խմելու Մարկոսի հօտը, և որտեղից հետք կար մինչև այդ հօտի փարախը, պառկեց, հանգստացաւ և լուսադէմին ինչպէս ասում են, փորերը մէջքերին ելած, երբ Կարգաղ գիւղից դէպի Սուլտա գիւղը տանող ճանապարհի վրայ երեւեցան երեք ձիա-ւոր՝ շարժուեց դէպի իւր արօտատեղը:

II.

Կարգաղ գիւղը գտնւում է Գէօգդաղ լեռան հիւսիսային կողմում, բաժանուած նրանից փոքր հարթավայրով: Գիւղի կենտրոնում գտնւում է նրա

Տին, փայտէ սիւների վեալ հանգչող եկեղեցին, որ կասես՝ այս է, փուլ է գալու: Բարձր պարսպի միջից հազիւ է երևում նրա խոտով ծածկուած կտուրը և երկու սիւնի վրայ հանգչող եռանկիւնաձև փոքրիկ կաթողիկէն: Գիւղի հիւսիսային մասում, բլուրի հարաւային փեշերի վրայ երևում է երկյարկանի մի բարձր շինութիւն, հարաւային կողմի ոչ այնքան մեծ պատշգամբով, որի վրայից երկու լուսամուտներ նայում են դէպի գիւղը և դիմացի Գեօգրադ լեռը: Դա Յարութիւն աղալի այվանն է (այսպէս է բնակարանի անուանը):

Վերեւի յարկը բաղկանում է երկու սենեակից և մի խոհանոցից, որ այդ երկու սենեակի մէջ տեղումն է շինուած: Սենեակներից մէկը, որի առջև շինուած է պատշգամբը և ունի երկու բաւականին մեծ լուսամուտներ՝ աղալի և՛ ննջարանն է, և՛ ընդունարանն: Նրա լուսամուտները ծառայում են աղալի համար որպէս երկու աչքեր, որտեղից նա դուրս է նայում իւր կալքին-հողին, որ գնել է մի վրացի հողատիրոջից: Սենեակի մի անկիւնում, դրած է նրա մահճակալը, որի վերև պատից կախ են արած նրա մի զոյգ հին ձևի ատրճանակներն և ուրիշ շատ զէնքեր, որոնք բռնել են ամբողջ պատի և նրա վրայ փռած գորգի երեսը:

Մահճակալի գլխի մօտ դրած է մի երկաթէ մեծ արկղ, որի մէջ դարսած են մի կոյտ բարաթներ, յետկարներ, կատարման թերթեր և այլն.

Արկղի կէս մասում դարսած են թղթադրամների ծալքեր: Սենեակի մէջ տեղում թաղթի մօտ կայ կեղտոտ սփռոցով ծածկուած մի սեղան, որի վրայ դրած է կեղտոտ լուսամփոփով մի լամպար և մի քանի թափթփած իրեղէններ ու թղթեր:

Երկրորդ սենեակում, որն աւելի մեծ է առաջնից և ունի երկու փոքրիկ լուսամուտ, գտնւում են մի քանի տնային իրեղէններ և մի ձեռնկեղտոտ տեղաշոր, իւր ջարդուած մահճակալով:

Ներքևի յարկը բաղկանում է մի դռնից և հացի երկու մեծ շտեմարաններից, որոնք թափէթափ լցուած են ցորենով ու գարով: Գոմի առջևի ընդարձակ բակից փայտէ սանդուխները տանում են դէպի վերի յարկը:

Գոմի անկիւնում կապած է մի սպիտակ, լաւ պահուած, մաքուր և չաղ ձի: Նրանից քիչ հեռու կապած է մի ուրիշ, նոյնպէս սպիտակ, ծերացած նիհար ձի, որի մի աչքը ելած է և առջևի ոտներից մէկը ծուռ: Երևում էր, որ վերջինս երբէք բաղդ չէր ունեցել տիրոջ կողմից հոգացողութեան:

Առաջին ձին փռկալով ուտում էր առաւօտեան իւր բաժին գարին, և, երբեմն-երբեմն բարակ և երկար վզի վրայի փոքրիկ գլուխը դարձնում էր դէպի ետ, սրելով փոքրիկ ականջները՝ խելօք աչքերով նայում էր չորս կողմը:

Միւս ծերացած ձին զբաղուած է միայն իւր դատարկ մասուրը սրբելով:

Ուրախ դէմքով, լիքը, թուր երեսով, թաղ-
թի վրայ բարձին թիկն տուած նստած էր Յարու-
թիւն աղան: Նա բաւական ժամանակ այդ դրու-
թեան մէջ մնալուց յետոյ՝ վեր կացաւ տեղից, չաղ
ձեռներով շփեց երեսն ու ճակատը, սկսեց ման
գալ և հազիւ լսելի ձայնով խօսել. «Ի՛նչ անեմ,
հա՛, ո՛ւմ ասեմ... երկուսն էլ դրսից չի լինի...
կարող են չհաւատալ... բռնել... մէկն էստեղից
է լինելու. ո՞վ կայ... ո՛ւմ ասեմ... ում էլ ասեմ,
էլի մի հարիւր մանէթ է ուզելու, վերջն էլ ո՞վ
է իմանում խօսքը փոխի, խաբի ու խալտառակ ա-
նի... Ի՛նչ անեմ, հա՛...»։ նորեց ճակատն ու երե-
սըն ամուր-ամուր տրորելով նա ընկղմեց մտածմուն-
քի մէջ: Նրա աչքերը յանկարծ փայլեցին ուրա-
խութեամբ և նա կանգնելով սենեակի մէջ տե-
ղում՝ խօսեց. «եղա՛ւ, եղա՛ւ, գտա՛յ, լաւ միտս ըն-
կաւ. Սահակը, Սահակը, բարաթը... եղաւ. նա մի
խեղճ մարդ է, որ ասեմ բարաթը... փողերս տո՛ւր...
կամ կճղեմ բարաթդ... անպատճառ կանի... ե-
ղաւ... Օսմանն էլ կայ ու կայ. երկսով բաւական
են, եղաւ: Ո՛ւր է. նա էլ Ի՛նչ եղաւ...», մինչ նա
խորատուգուած այդ մտածմունքների մէջ, մատը
դրած ճակատին կանգնած էր՝ դրսից լսուեց ձիու
տրոփիւն:

— Հանգրօ, ա՛ Հազրօ:

— Ո՞վ է —, դուրս գալով պատշգամբ հարցրեց
Յարութիւն աղան:

— Ե՛ս եմ, Յարութիւն աղա. տանն եմ:

— Ա՛ւ, Խիւղամ աղա, բարո՛վ, բարո՛վ, աչքս
ճանապարհիդ մնաց:

Յարութիւն աղայի ձայնի վրայ դուրս եկաւ
խուռնացած սրճագոյն չուխան հագին մէկն և բըռ-
նեց ձիու սանձը: Խիւղամը դէպի վերի յարկը տա-
նող սանդուխներով բարձրացաւ վերև:

— Ել ո՛նց ես, քէֆդ-հալդ. նստիր տեսնենք,
նստիր. Թիֆլիսից ես գալիս, Ի՛նչ խաբար. էս բա-
ւական ուշացար:

— Ուշացայ, հա՛. Ղազախում — տանը գործեր
ունէի. գնացի մի քանի օր մնացի:

— Ե՛, էլ Ի՛նչ կայ, ինչ չկայ. ո՛ւմ տեսար:

Խիւղամը յայտնեց մի քանի տեղեկութիւններ
Թիֆլիսից, ասեց, թէ ո՛ւմ էր տեսել իրենց բարե-
կամներից, և վերջը յայտնեց, որ Մարկոսին է տե-
սել:

— Հա՛, նա քանի ժամանակ է գնացել է. նոր
հանած մի քանի գլուխ պանիր է ունեցել, տարել
է ծախելու: Չգիտեմ, ծախել է թէ չէ. երբ է գա-
լու —, փոքր լուութիւնից յետոյ հարցրեց Յարու-
թիւն աղան:

— Ծախել է. էսօր-էգուց կգայ:

— Էսօր-էգուց կգա՞յ —, յօնքերը վրայ բերելով
երկարացրեց նա, — ասել է պէտք է շտապել... Էն
որ միտք ենք արել... քանի դեռ չէ եկել:

— Հա՛, պէտք է շտապել. ես էլ հէնց դրա
համար եկայ: Դու է՛ն ասա, մարդիկ պատրաստել
ես...

— Օսմանը կայ մնում է մէկը, էդ մէկն էլ...—, խորհրդաւոր հայեացքով նրա երեսին նայելով պատասխանեց Յարութիւն աղան, — էդ մէկն էլ մտածել եմ:

— Ո՞վ է:

— Սահակը:

— Ի՞նչ Սահակ. Պոտոզի մանչը:

— Այո, նա:

— Ուրիշ էնպէս մի աւելի...

— Ո՞րտեղից, չկայ. շատ մտածեցի. դու գիտես, որ բոլոր գիւղն ինձ թշնամի է, Մարկոսի կողմն է պահում. վախենում եմ... ում. ասեմ... խօսք տան ու յետոյ... յանկարծ խաբեն...

— Հնա՛ն, — երկարացրեց Խիւզամը և մեծ գլուխը դմբճմբացրեց, — զգոյշ պիտի լինիլ:

— Ապա՛, բոլոր գիւղը ձեռն է առել, — քիչ լռելուց յետոյ շարունակեց Յարութիւն աղան, — Իլդի աւերակը ձեռիցս խլելուց, գիւղացոյց վրայ հաստատելուց յետոյ՝ բոլորին զրգուել է իմ դէմ:

— Տես, տես, — արատասանեց Խիւզամը և ահագին ձեռով մի երկու անգամ շփեց մօրուքը:

— Ողջ աշխահի հախից եկայ, դրան չկարողացայ վախեցնել. ամեն օր մի բան է սարքում. սրբան է խրատ տալիս, նրան է խրատ տալիս...

— Սպասի՛ր, էնպիսի մի բան սարքենք, որ ինքըն էլ հասկանայ, թէ ո՛ւմ հետ դործ ունի, — սև դէմքի վրայ չար ժպիտ խաղացնելով խօսեց Խիւզամը:

Յարութիւն աղան լռեց և դաժան արտայայտութեամբ արծաթէ ծխատուփից պապիրոս հանեց և մէկն էլ առաջարկեց Խիւզամին:

— Ուրեմն թնչպէս անենք —, հանդարտութեամբ հարցրեց Խիւզամը, ծխի թանձր քուլան առատութեամբ դուրս թողնելով քթածակերից:

Յարութիւն աղան փոխանակ պատասխանելու՝ ձեռով շփեց չաղ, սափրած երեսը:

— Հնա՛, ասա:

— Հագրօին կուղարկեմ, Օսմանը թող գայ, — սթափուելով մտածմունքից պատասխանեց Յարութիւն աղան, — դուք երկսով երեկոյեան հստեղ կըլինիք. էս հարևան սենեակում թագ կացէք. կըկանչեմ Սահակին: Օսմանը սուտ հաւար կձգէ, թէ չալիբդ աւերեց Մարկոսի ոչխարը...

— Հնա՛, ասա՛, լաւ ես միտք արել:

— Եթէ կարողացայ դործն աջողեցնել, նրան վկայ բերել տալ՝ դու ձիդ կնստիս, կգնաս չալիբը կվնասես. մնացածն էլ հասկանում ես, էլի...

— Հնանա՛, հէնց էդ է որ կայ. լաւ ես միտք արել, լաւ հասկացայ, — մեծ փափաղի տակ գլուխը շարժելով և աչքերը լայն բաց անելով խօսեց Խիւզամը:

— Եդպէս, — աջ ազդրին շրջփացնելով խօսեց Յարութիւն աղան և ձայնեց, — Հագրօ:

Ներս մտաւ դեղնած, քէօսա երեսով, որի վրայ մազ չլինելուց կարծես և ամօթ չլինէր, մօտ քռասսուն տարեկան մի մարդ:

— Զիդ հեծիր, էս սահաթիս դնա Օսմանի ե-
տեւը. ասա, որ էս երեկոյ անպատճառ էստեղ լի-
նի: Ծովաւ-շուտ, հա զոչաղ Հազրո:

Հազրոն առանց խօսելու, ժպիտն երեսին ե-
լաւ դուրս: Կէս ժամից նստելով իւր ձին, որի վրա-
յից կարծես թափւում էին նրա մաշուած ու
ջարդուած թամբն և կոտրատուած ասպանդակնե-
րը, քշեց դէպի Չլաբը, որտեղ բնակւում էր Օս-
մանը: Չնայած իւր ձիու տգեղ, մինչև իսկ սատ-
կած կերպարանք ունենալուն՝ Հազրոն նրա վրայ
նստած էր ծուռ, աջ ազդրի վրայ, որպէս նստում
էր նրա աղան, գլուխը ցից բռնած, խուճնացած ու
մաշուած չէրքէզի վրայից հին, ժանգոտ, կեռ
թուրը կախած, մտրակով ու ասպանդակներով խը-
փում էր երկվարի կողքերին և «գահ-գահ» անելով
բշուծ:

Նա իւր այդ գրուածքով ներկայացնում էր
մի նոր Սանխո-Պանչա իւր Ռոսինանդով:

— Տղերք, տղերք, Սիբիրից փախածին նա-
յեցէք, Սիբիրից փախածին —, նրա ետեւից բարձր
գոռացին գիւղի չարաճճի մանուկներն և անկիւն-
ներից քարեր ու կոշտի կտորներ ձգեցին նրա վը-
րայ:

— Ե՛ւ, լակոտներ, ես ձեր... գիտէ՞ք ես ո՞վ
եմ —, ձին դէպի նրանց դարձնելով բղաւեց Հազրոն
և ուզեց մտրակով խփել:

Բայց չարաճճի մանուկները փախան, ամեն
մէկը մի տուն մտան:

— Քիւչիւկ (փոքրիկ) աղային նայեցէք, քիւ-
չիւկ աղային, ղուածը (սպիտակ ձի) հեծել՝ Բէ-
ռօղլի է դառել —, կանչեցին նրա երկու կողմից
գիւղում մնացած մի քանի երիտասարդներ:

— Ելի որ քիւչիւկ աղա եմ. քնչ է, չէ՞ք հա-
ւանում... Թէ աչքերդ չէ վերցնում, որ Յարու-
թիւն աղայի...

— Ե՛ւ, պամո՞շնիկ, ո՞ւր ես գնում. էլի խալիսի
տունը քանդելո՞ւ —, լսեց յանկարծ նա դիմացից,
երբ դեռ խօսքը չէր վերջացրել:

Ասողը տարիքն առած, այրուած դէմքով մի
յաղթանդամ մարդ էր, որ յամբ քայլերով գալիս
էր դէմից:

Հազրոն չհամարձակուեց վերջինիս պատաս-
խանել, միայն մտքի մէջ հայհոյեց նրան և մխի-
թարեց իրեն, մինչև իսկ հպարտացաւ, որ Յարու-
թիւն աղայի դուստն է ծառայում, նրա գործերը
կատարելով «քիւչիւկ» աղա և «պամոշնիկ» անուն-
ներն է վաստակել, ընդ սմին վայելում է աղայից
ամեն տեսակ խնամք...

«Դուք ծիծաղեցէ՞ք, Հազրոն իրեն բանը գի-
տէ...», քթի տակ փնթփնթաց նա և շարունակեց
ճանապարհը:

Հազրոն հեռանալուց յետոյ, երբ Խիւղամը,
փոքր ժամանակ մնալով, գնաց հարեան սենեակը
հանգստանալու՝ Յարութիւն աղան մօտեցաւ եր-
կաթէ արկղին, թղթերի կոյտի միջից հանեց հայե-
րէն գրած մի թուղթ, դրեց սեղանի վրայ և

չափազանց մեծ ուշադրութեամբ արտագրեց: Արտագրելուց յետոյ թղթերը ծալեց, նորից դրեց սնդուկն, և մօտենալով լուսամուտին դուրս նայեց եղանակին: Տեսնելով երկնքի արևմտեան մասում փռուած սև ամպերը, որոնք քանի գնում ստուարանում էին և սևանում՝ ժպտաց և ուրախացած շշնջաց, — լաւ է, քանի գնում մթնում է, լուսին էլ չկայ... մութ գիշեր կլինի, լաւ է...

III.

Փոքրիկ տան մէջ, որի տափն ու թնդրափը միասին երեք քառակուսի սաժէն հազիւ լինէին, վառւում էր սիւնից կախ արած նաւթի ճրագը, որի հիսն առատութեամբ բարձրանալով մրոտում էր թոնրի ծխից սևացած առաստաղը:

Թնդրափում կային գիւղական տնային մի քանի իրեղէններ, որոնք թափթփած էին այս ու այն կողմը:

Տափի երեսում երևում էին երեք ձեռ. հին, կեղտոտ տեղաշոր խտիւնների վրայ փռած, որոց բարձերը դարսած էին թնդրափի թմբիկի հետ: Վերջին, ամենամեծ տեղաշորի մօտ, պատի անկիւնում չլերի մէջ ծածկուած, քնած էր մօտ վեց տարեկան մի մանուկ: Նա յաճախակի շարժւում էր իւր աղքատիկ անկողնում և նորից քնում: Նրա ոտները տակ դրած է կապոյտ էյրամի կրտորով կամարը ծածկած մի օրօրոց, որի միջից

լուում էր քնած երեխայի հանգիստ և միատեսակ շնչառութիւնը:

Այդ տան դուռը բացւում է դէպի նրա նեղ բակը, որտեղից մի դուռը տանում է դէպի դոմն, իսկ միւսը՝ դէպի փողոց:

Թնդրափում ոտները թորոնից ներս կախած տաքանում էին մէկը մօտ քսան տարեկան, միջահասակ, ոչ այնքան զանգուր մազերով մի երիտասարդ, միւսը մօտ իննը տարեկան, խարտեաշ աչքերով մի մանուկ: Նրանք նոր էին վերադարձել դաշտից և սպասում էին երեկոյեան ընթրիքին, որ ապա պառկէին հանգստանալու: Նրանցից մի երկու քայլ հեռու, աթարները տակերն առած, միմեանց կողքի նստած էին երկու կնիկմարդ, որոնցից մէկը թէւ այնքան ծեր չէր, բայց ժամանակից առաջ երեսի վրայ առաջացել էին խորշոմներ. այդ խորշոմները նրա մտրած աչքերի հետ վշտի հեռքեր էին ներկայացնում. երկրորդը՝ մօտ տասնևեօթը տարեկան հարուստ կրծքով, լիքն իրանով, կարմիր և ուռած այտերով մի միջահասակ աղջիկ էր:

Երիտասարդն և մանուկը լուռ նստած էին և պարապութիւնից մերթ մերթ բարձրաձայն յօրանջում էին. մայրը գուլպայ գործելով էր զբաղուած, իսկ աղջիկը՝ կարելով:

Նրանց միջև տիրող լուռութիւնը խանգարեց դրսի դռան ձայնը, որ անախորժ ճռուցով բացուեց:

— Չիւ, չիւ—, բակից լսուեց մի ձայն, որից յետոյ դուռը նոյն ճռռոցով նորից փակուեց:

— Մինազւոր ջան, հէրդ ջրից եկաւ. վեր կաց կժերն իջեցրու—, ասաց մայրն աղջկան:

Աղջիկը վերկացաւ:

Քիչ ժամանակ յետոյ ներս մտաւ կարճահասակ, տարիքն առած մի մարդ, որի փափաղի տակից հազիւ երևում էին նրա քիչ սպիտակի գարնող մազերը: Տրեխները հանելով նա նստեց իւր մեծ որդու-Համբարի դիմաց և ոտները ներս կախեց թորոնից:

— Ամի—, քիչ լուռ թիւնից յետոյ խօսեց Համբարը, — Բնջ պիտի անենք, երկու կոտ գարի կար, էն էլ էսօր ցանեցի պրծայ, օրավար ու կէս հերկը մնաց. վաղն Բնջ պէտք է անենք:

Ծերունին փոխանակ պատասխանելու սիրտը քաշելով գլուխը խոնարհեց կրծքին:

Որդին հասկանալով հօր լուռ թեան պատճառըն ինքն ևս լռեց և սպասեց նրա պատասխանին:

— Ումից ուզենք—, քիչ յետոյ խօսեց ծերը, — ո՞վ ունի. բոլոր գիւղն էլ մեր օրին է. ուրիշ տեղից գնելու համար էլ նաղդ փող է հարկաւոր. էէ—, հառաչեց նա:

— Հօ հերկը չենք թողնելու. ինչպէս էլ լինի մի տեղից ճարելու ենք. հա՛, քիչ լռելուց յետոյ շարունակեց նա, — երէկ չէ առաջի օրը տեսայ Հազրօին. հարցրի, թէ աղադ ցորեն-գարի տալիս է պարտքով. ասաց տալիս է:

— Անտէր մնաս քեասիբու թիւն, որ էսպէս օրով մարդու ճիւղը ծուռն ես թողնում—, տխրութեամբ վրայ բերեց ծերի ամուսինն և մօտենալով թորոնին՝ կէս մարմնով ներս կախուեց ու հանեց երկույեան համար տաքացրած կճճով թանէ ապուրը:

— Ուրիշ ճար չկայ, էլի Յարութիւն աղային պէտք է դիմենք. թէ չէ ումից ուզես, ո՞վ ունի:

— Յարութիւն աղայի՛ր—, երկարացնելով վրայ բերեց ծերունին, և ուզում էր ասել. «Բնջ պէս ուզես... կտա՞յ որ... բարաթն էլ էնտեղ...», բայց լռեց և խորասուզուեց անորոշ և տանջող մըտածմունքների մէջ:

— Ողջ գիւղը նրանից է վերցնում. ինչպէս նրանք՝ էնպէս էլ մենք. Բնջ պիտի անես. ձեռդ փող չկայ, որ ուրիշ տեղից գնես—, կրկնեց Համբարը:

— Վերցնում են... բայց Բնջպէս են վերցնում, գիտե՞ս. հինգ կոտ գարուն տալիս են մինչև աշուն տասը կոտի բարաթ, դեռ, եթէ ուշացրին՝ տուգանքն էլ հետը: Վերցնում են... էէ... բարաթի ժամանակն էլ էսօր-էգուց լրանում է. էլի կանչելու պարտքն ուզելու է, ուզածը գրելու... էս եօթը տարի է, գարուց, ցորենից, մալից-մուկից մի գլուխ պարտք ենք տալիս թէ վերջանայ՝ պակասելու փոխարէն աւելանում է... ը-ը... լիսուն մանէթն եկաւ չորս հարիւր մանէթի հասաւ...

— Մեր մէջքն էդ պարտքը կտրեց—, հօր խօսքին վրայ բերեց Համբարը, — էդ պարտքը:

—Պարտք-պարտք, անոնդ մեռնի, որ չես թողնում աղքատի մէկն երկուս դառնալու—, տըխրուլթեամբ խօսեց ծերունու կինն, ապուրը շերեփով կուշը լցնելով:

Աղջիկը խոնջայ գրեց, հացն ու գգալները թափեց նրա վրայ, ապա կուշով ապուրը դրեց խոնջայի մէջ տեղը:

—Անտէր էր մնացել էն մի զոյգ եղբ, որ էդ քեաֆիրից լիսուն մանէթ չէինք վերցրել, չէինք գնել. տուած օգուտները չտեսանք, վնասից զատ. ուր է, սաղ մնային՝ էն էլ էր բան. մի տարուայ մէջ երկուսն էլ սատկան, մեզ էսպէս թողին պարտքի մէջ—, խօսեց ծերի կինը:

—Ախար ինչ ձեռք է, որ մարդ ինչ խէր տեսնի—, Յարութիւն աղային ակնարկելով խօսեց Համբարը:

Այդ խօսքերի վրայ ծերը հառաչեց. երկու անել դրութեան մէջ մնացած՝ նա չէր իմանում ինչ անի. մի կողմից պարտքն աւելանալու երկիւղն էր, որ նրան մահուան չափ տանջում էր, միւս կողմից սերմնացու չունենալու հոգսը, որ ո՛չ մի տեղից ձեռ բերելու յոյս չունէր:—Ե՛հէ՛հ—, գլուխը բարձրացնելով ծանր շնչառութեամբ խօսեց նա,—երբ որ չկայ՝ պիտի վերցնես, ինչ արած... Նրանք շարուեցան փոքրիկ, կոլոր խոնջայի շուրջն և սկսեցին ախորժակով ուտել աղքատ ընթրիքը, որ բաղկանում էր թանէ սպասից, գարի սև հացից և մի փոքրիկ քրէղան լոռից:

—Գոնէ մենակ սերմնացուի հոգսը լինէր..., ալիւրն էլ է հատել. քանի անգամ է ուզում եմ ասել՝ բերանս չէ գնում—, տխրութեամբ խօսեց ծերի կինը:

—Ալիւրը հատել է՛հ—, գդալը ձեռում մնացած, աչքերն ապշուլթեամբ մօրը դարձնելով խօսեց Համբարը, — կէս սոմառ գարի էր, երբ հատաւ:

—Ել ինչ լինի, էս երեք շաբաթ է—, եղբօր խօսքին վրայ բերեց Մինազարը:

—Խսկի՞ չկայ—, գդալը սեղանին աւելի ձգելով քան դնելով և բերանում եղած հացի ծամելը դադարեցնելով հարցրեց ծերը:

—Երկու օր էլ հազիւ բաւական սնայ:

—Հայ օրոցքդ կոտորուի քեասիւպ, որ կուշտ փորով գարի հաց ուտելու էլ կարօտ ես մնացել—, վշտից նեղացած խօսեց ծերի կինը:

Սև օրուայ հոգսի տխրութեան տակ նրանցից ամեն մէկն ուզում էր խօսել, բայց հասկանալով իրար սրտինը՝ բոլորն էլ լռում էին և սև հացի ու լոռի բրդուձները ծուլաբար շարունակում ծամել:

Մինազարը հաւաքեց գդալները կուշի մէջ և դրեց իւր մօտ գտնուած հացի դատարկ սալան:

—Սրան են ասել՝ «դառը դատի՝ դատարկներս տի»։ Ինչ օր է դիւղացու օրը—, հառաջ արձակելով խօսեց ծերի ամուսինն և աջ ու ձախ շարժուեց տեղում:

Մօր հառաչի վրայ ապուշ հայեացքով նայեց

նրան փոքրիկ մանուկը, որի քուռը կոխել էր աչքերը և բերանը լայն բացանելով երկար յօրանջեց:

Կնոջ հառաչն անց կացաւ և ծերին. նա ևս հառաչեց և տրտմութեամբ նայեց աղօտ լոյս արձակող ճրագին, որի ճառագայթների առջև երևացին նրա թուխ դէմքը, ոչ այնքան մեծ քիթն և երկար թերեւորեն երկար աչքերը, որոնք փայլում էին կեանքի վշտով և յոգնածութեամբ: Այդ աչքերի մէջ կարծես հանգել էր կենդանութիւնն և նրա փոխարէն փայլում էր բարութիւն և կարեկցութեան արժանի նայուածք:

— Ինչպէս էլ լինի էգուց աշխատիր երկուսո՛ւմ առ դարի առնել, կեսը տանեմ ջրաղաց, մնացած կէսն էլ՝ հերկը ցանեմ, թէ չէ... — կիսատ խօսեց Համբարը և նայեց դէպի տան դուռը, որ ճճալով բացուեց:

— Բ՛արի երեկոյ:

— Վ՛ո՛ւյ, բիւաքիմ ի՞նչ լինիս... սիրտս փորիս մէջ պատռաւ. Սիբիրից փախած քի Սիբիրից փախած — աննկատելի կերպով ներս մտնող և կիսախաւարի մէջ կանգնող եկաւորի խռպոտ ձայնը յանկարծ լսելով խօսեց ծերի կինը:

— Հա, ի՞նչ է, վախեցա՞ր —, խօսեց եկաւորը:

— Ո՛վ է —, դեռ չճանաչելով եկողին և երեսը դանդաղութեամբ դէպի նրան դարձնելով հարցրեց ծերը:

— Ե՛ս եմ, Սահակ ամի —, դռան մօտից խօսեց եկաւորը:

— Հազրօ՛, դ՞ու ես —, խօսեց Սահակը, — խէր է գիշերով —: Խէր բառն արտասանելիս մի երկիւղ անցաւ ծերունու վրայով:

— Ես եմ Սահակ ամի, խէր է —, պատասխանեց Հազրօն:

— Բեզանից խէ՛ր... —, հազիւ լսելի ձայնով քթի տակ խօսեց ծերի ամուսինը:

— Առաջ արի տեսնենք ի՞նչ ես ասում:

Հազրօն շարժուեց դէպի ճրագի լոյսը, որի առջև պարզ երևացին նրա կիսամաշ կեղտոտ գըլխարկը, դեղնած դէմքը, որ սրճագոյն մահուդէ խունացած ու կիսամաշ չուխալի հետ երկիւղալի տպաւորութիւն էին թողնում նայողի վրայ:

— Յարութիւն աղան քեզ կանչում է:

«Յարութիւն աղան ինձ կանչում է», մտքի մէջ կրկնեց Սահակն և ընկաւ տանջող մտածմունքի մէջ: Նա մտածում էր. «Եթէ բարաթի համար է՝ դեռ ժամանակը լրանալուն մի ամիս կայ. ուրեմն...» — ինչո՞ւ համար է կանչում —, անհամբերութեամբ հարցրեց նա:

— Ձգիտեմ:

Մի քանի վայրկեան նրանք բոլորն էլ խոր հրդաւոր հայեացքով լուռ նայեցին իրար երեսի:

— Ի՞նչ շտապով բան է, որ գիշերով է կանչել. առաւօտը որ մնայ չի լինիլ:

— Ասաց «անպատճառ թող գայ. հարկաւոր բան ունիմ ասելու»:

— Հարկաւոր բան:

—Գնա տես թնչ է ասում. մի բան կլինի, որ կանչել է—, թէեւ կասկածանքով, բայց աւելի դրական կերպով խօսեց Համբարը:

—Մինազար ջան, տես տրեխներս թնչ եղան, տո՛ւր հագնիմ—, քիչ մտածելուց լետոյ խօսեց ծերը:

—Հիմայ կէս գիշերին թնչ հաւար է. թող մնայ առաւօտեան—, սրտում ինչ որ գաղտնի երկիւղ զգալով խօսեց Սահակի ամուսինը:

—Ձէ, Սալվի (այսպէս էր նրա անունը), մէկ հանդիպիմ կգամ. մէկ էլ հազը լաւ պատճառ է:

—Հա .. տես—, հօր ականջին փսփսաց Համբարն, —աշխատիր ինչպէս էլ լինի մի-երկու սոմառ գարի վերցնել:

—Լաւ,— հազիւ լսելի ձայնով պատասխանեց Սահակն, և հագնելով տրեխներն իւր հաստ ու կոլոր ոտները գետնին դմբդմբացնելով ելաւ դուրս:

Աղջիկը վեր քաղեց խոնջալի վրայից հացի փըշ-րանքները, սիւկիով սրբեց սուֆրէն, հացի սալան տարաւ դրեց տան անկիւնն և ապա նորից նստեց մօր կողքին:

—Մայրիկ, դրան ինչո՞ւ Սիբիրից փախած են կանչում—, մօր երեսին նայելով հարցրեց շիկահեր մանուկը, որի քունը Հազրօի մտնելովն առ ժամանակ փախել էր:

—Ես թնչ եմ իմանում, հողեմ դրա գլուխը. մինչև հիմայ էլ դեռ սիրտս փորիս մէջ լսլրտում է:

—Սրանից մօտ տասը տարի առաջ նրան բռնեցին տարան Ուռուսէթի մի քաղաք, արեստանտ ռոտ են ասում, թնչ են ասում՝ չգիտեմ. էնտեղ մնաց երեք տարի—, խօսեց Համբարը:

—Ինչո՞ւ են տարել—, այս անգամ աւելի հետաքրքրութեամբ եղբօրը հարցրեց Մինազարը, որ պարզ չգիտէր նրան երեք տարի «կալանաւորների վաշտն» ուղարկելու պատճառը:

—Նա մէկից ուզեցել է կորզել հարիւր ըուր-լի. դրա համար շինել է սուտ բարաթ, իւզբաշուց (տանուտէրի օգնականից) կնիքը գողացել՝ խփել՝ ներկայացրել է դատարան:

—Յետոյ:

—Յետոյ դատաւորը կանչում է էն մարդուն, որի վրայ զանգատ է տուել. նա մնում է զարմացած: Դատաւորը ցոյց է տալիս բարաթը. նա ասում է, որ իւր ստորագրութիւնը չէ: Ի՞նչտեղ բացում է Հազրօի սուտը: Դրանից յետոյ նրան բռնեցին ու մի տարի բանտարկելուց լետոյ տարան արեստանտ ռոտը:

—Էնպէս գնար, որ էլ ետ չգար. ողջ գիւղը խայտառակ արեց. էլ բան մնաց...—, եղբօր խօսքին զգուանքով վրայ բերեց Մինազարը, —կասես շան չահրա լինի, մարդ չի կարող երեսին նայել:

—Ա՛խիս, գետինը մտնի Յարութիւն աղան, գետինը. նա է պատճառը, որ դա էստեղ է. թէ չէ տուն չունի՝ որ բնակուի, հող ու մալ չունի՝

որ վարուցանք անի, օղլուշաղ պահի. ինչո՞վ պիտի ասընի—, դառնացած խօսեց մայրը:

— Ինչո՞ւ չի պահի. իրեն դուռն շո՞ւնն է շինել. ինչ որ ուզում է՝ դրա ձեռովն է անել տալիս. Շուշան խանումն էլ սիրո՞ւն... —, կիսատ խօսելով վրայ բերեց Համբարը:

— Գիւղումն ինչե՞ր ասես, որ չեն խօսում —, զգուշանքով խօսեց Մինազարը:

— Է՛, քնչ անի խեղճ կինը. ծեծը գլխից ամեն օր անպակասէ. կարո՞ղ է հակառակիլ, ասածը չկատարել... էն ըստէին դադանակն առնում, վրայ է հասնում: Մարդ պիտի շիտակը խօսի—, նկատեց մայրը:

Նրանց մէջ փոքր ժամանակ լուռութիւն տիրեց:

Ներսէսը քնատ աչքերով սկսեց յօրանջել:

— Վեր կաց, Ներսէս ջան, շորերդ հանի՛ր, քրնի՛ր: Մինազար ջան, դու էլ, երեսան զարթեց, լալիս է, օրօրի՛ր, ես հեսջուրը դնեմ—, խօսեց մայրն և վեր կացաւ տեղից:

Կէս ժամից քնեցին Մինազարն ու Ներսէսն. իսկ Համբարն ու մայրը ոտները թորոնից ներս կախած՝ լուռումունջ նստել էին և սպասում էին Սահակի վերադարձին: Նրանք երբեմն-երբեմն մրափելով նորից բարձրացնում էին կրծքերի վրայ յանկարծակի ընկնող գլուխներն և խօսում:

— Տեսնես քնչ հարկաւոր գործ էր, որ էսքան ուշացաւ:

— Հա՛, Համբար ջան, ուշացաւ. մէկ գնայի՛ր ետեւը:

IV.

Յարութիւն աղան ման էր գալիս սենեակի երկարութեամբ և դանդաղ կերպով ծխում էր: Մտածմունքների մէջ խորասուզուած լինելով՝ նրա պղտորուած նայուածքը յառած էր միայն պապիւրոսի վրայ: Նրա դէմքն երբեմն ուրախութեան ժպիտ էր արտայայտում, երբեմն էլ սառչում անշարժանում էր: Յաճախ աչքերն ու յօնքերը վրայ բերելով նա կանգ էր առնում և մտախոհութեամբ շփում էր գանգուր մագերով շրջապատուած ճակատը:

Սեղանի վրայ կճկճալով վառւում էր կեղտոտ լուսամփոփով լամպարն և ոչ այնքան առատ լոյսը սփռում էր կեղտոտուած ծածկոցի վրայ:

Նա այդ մտածմունքների մէջ երկար ժամանակ շրջում էր և յաճախ նայում ժամացույցին:

Իրսից լսուեց ստի ձայն:

Սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ Սահակը: Նա Յարութիւն աղային յարգանքով բարեկուց յետոյ նստեց հեռուն աթոռի վրայ:

— Էլ ո՞նց ես, քէֆդ-հալդ—, սիրալիւ կերպով նրան բարեկուց յետոյ խօսեց Յարութիւն աղան, — էսպէս մօտիկ նստի՛ր:

— Շնորհակալ եմ, աղա ջան, քո լաւութիւնը լինիք —, աշուէլով պատասխանեց Սահակն և աթոռը մօտեցնելով սեղանին՝ աչքը ձգեց նրա երեսին,

անհամբեր սպասելով իմանալու, թէ ինչո՞ւ համար է կանչուած:

— Էս ռոտեղ ես. իսկի չես գնում, չես գալիս:

— Գործով զբաղուած մարդ ենք, աղան ջան, մէկ էլ քեզ պէս աղային ինչպէս նեղութիւն տանք:

— Քեզ պէս լաւ մարդկանց առաջ եմ դուռս միշտ բաց է:

— Շնորհակալ եմ, տեղում մի փոքր կանգնելով շարժաց Սահակը:

— Բաս էդ որ գործով զբաղուած ես, ինչո՞ւ համար որ կանչել եմ՝ ասել է չեղաւ:

Սահակը մի քանի վայրկեան լուռ նայեց նրա երեսին, որի ժամանակ մտածում էր. «հարցնեմ արդեօք ինչո՞ւ համար է կանչել»՝ երբ Յարութիւն աղան ինքը խօսեց:

— Գիտես, Սահակ ջան, գործով զբաղուած լինիս թէ չէ՝ մի խնդիր ունիմ, կատարելու ես:

— Դիւրիս վրայ, հրամայիր, եթէ կարելի է, ինչո՞ւ չէ:

— Ասեմ. կոտերով որ ոսկի բաշխէին, ես էս գիւղից ոչ ոքի սուբաշի չէի վարձի, որովհետեւ գիտեմ, բոլորն էլ ինչ պտուղներ են. քեզ եմ տուած վարձել, գիտեմ որ մենակ դու ես, որ սրանց մէջ մարդ ես:

— Շնորհակալ եմ, աղան ջան, վատութիւն անելուց մարդուս ինչը կաւեւանայ, ինքնասիրութիւնը փափայուած խօսեց Սահակը:

— Հա՛, ապրիս, տեսնո՞ւմ ես, նրանք էդպէս չեն ասում. ես էլ մարդ եմ, տեսնո՞ւմ եմ չէ. քեզ ինչպէս նրանց հաւասար ընդունեմ:

Սահակն ամօթխած ժպիտով նայեց նրա երեսին:

— Հիմա՛յ գիտես, որ չայիրների խօսն եկել կանգնել է. ցանքսերը համարեա վերջացել են. արոսներին հարկաւոր է մտիկ անել. էս բոլորի համար մարդ է հարկաւոր, բայց հաւատարիմ մարդ, որին ես վստահօրէն կարողանալի յանձնել բոլոր հոգսն և սուբաշիների վերակացութիւնը: Եդ բանի համար քեզանից զատ ոչ ոքի չեմ վրտահանում վարձել: Ե՛, գիտեմ, ինքդ էլ աղքատ մարդ ես, հացի-մացի պակասութիւն կունենաս... հազըր...

— Ունիմ, ապա չունիմ, աղա ջան, նրա խօսքերից քաջալերուած խօսեց Սահակը. — ռանչպրի սև օրը քեզ յայտնի է. գեռ ցանքսը չը վերջացած՝ ուտելիքներս ու ցանելիքներս հատել է:

— Տեսնո՞ւմ ես. համ քեզ համար լաւ, համ ինձ համար: Ի՛նչ ասա՛, կարո՞ղ ես յանձգ առնել:

— Ինչո՞ւ չէ, աղա ջան, տանը մնամ ինչ պիտի անեմ. Համբարս Ներսէսիս հետ տանը գործը եօլա կտանի, ես էլ կմտնիմ քեզ մօտ:

— Շատ լաւ, ուրախացած շարժեց Յարութիւն աղան, — իսկ վարձի համար:

— Պարտքիս շահը, նրա խօսքն ընդհատելով խեղճալով հարցրեց Սահակը:

— Զէ, Սահակ ջան, ես մարդ եմ, ես էդպէս նամարդութիւն չեմ անի. լաւ մարդկանց համար հոգիս որ ուզեն՝ չեմ խնայի, ես էդ չեմ անի. դու հացի պակասութիւն ունիս, կտամ էս գլխից ինչքան որ հարկաւոր է: Ինչքան է հարկաւոր, ասա—, շտապով վրայ բերեց Յարութիւն աղան:

— Մի-երկու սոմառ գարի հարկաւոր է:

— Երկու սոմառ. էս ըոպէիս. Հազրո՞ւ—, դէպի դուռը գնալով ձայնեց նա, — Հազրո:

Հազրոն մտաւ ներս և ձեռքերը քարշ ձգելով կանգնեց նրա դիմաց:

— Էն լաւ գարուց երկու սոմառ կչափես Սահակի համար, իմացա՞ր:

— Իմացայ, հրամանք ես—, գլուխը քիչ ցած շարժելով պատասխանեց Հազրոն և ելաւ դուռը:

Մինչդեռ Յարութիւն աղան ման գալով մըտածում էր, թէ մնացած մտադրութիւնն ինչպէս շարունակէր՝ Սահակն ուրախութիւնից չէր իմանում, թէ ինչ անի, ինչպէս վերաբերուի այդ ըոպէին Յարութիւն աղային, որ այդպիսի մեծ օգնութիւն հասցրեց իւր նեղ օրերին: Նա վառեց պապիրոսն, երեսին ժպիտ խաղացրեց և Յարութիւն աղային նայելով ազահոյութեամբ ծուխը մի քանի անգամ կուլ տուեց:

Այդ ժամանակ Յարութիւն աղան տեղում շուռ գալով կանգնեց նրա առաջ:

— Ես շնորհակալ եմ, որ քեզ պէս մի հաւա-

տարիմ և ազնիւ մարդ եմ դործիս մէջ մտնիլ յանձն առաւ. դու էլ շնորհակալ ես, թէ չէ:

— Էլ ինչպէս ասեմ, աղա ջան, էլ ինչպէս...

— Դէ կեցի՛ր ասեմ, Սահակ ջան, վաղուց է սիրտս մարդու առաջ բաց չեմ արել. էս աշխարհս անցողական է. ինչ որ աշխարհինն է՝ էն էստեղ կմնայ. մեռնելուց յետոյ բացի մի թոփ կտաւից մարդս հետը ոչինչ չի տանի. թէ մի լաւութիւն արել ես՝ էն է, մի բարի անուն կմնայ:

Այդ խօսքերի վրայ Սահակը խորը հառաչեց և մեծ համակրանքով նայեց նրա երեսին, որ այդ առաջին անգամն էր լինում:

— Ես էլ որոշել եմ լաւութիւն անել, բայց էնպէս մարդկանց, որ իրենք էլ բարի են և բարութիւնդ մի բանի տեղ կանցնի. օրինակ դու. քեզանից լաւ մարդ ես չտեսայ. ուստի որոշել եմ քեզ էնպիսի մի լաւութիւն անել, որ, որ... ինքդ էլ զարմանաս:

Սահակը սաստիկ ուրախացած ժպտալով նայեց նրա երեսին: Նա հետզհետէ համակրանք էր տածում դէպի այդ մարդը, որի մասին շատ յայտնի և անյայտ բաներ էր լսել, որին շատերն էին հայհոյել և անիծել, հայհոյել և անիծել էր մինչև անգամ ինքը, բայց այդ մարդը այդ ըոպէին նրան խիստ բարի և չար լեզուներից բամբասուած մարդ էր երևում:

Մինչ Սահակն այդ մտածմունքի մէջ էր, Յարութիւն աղան վեր կացաւ տեղից, բաց արեց եր-

կաթէ սնդուկն և մի թուղթ հանելով նորից նըստեց իւր տեղում: — Գերդաստանի և զաւակների տէր մարդ ես, ես ուզում եմ...

Սահակը չհասկանալով, թէ բանն ինչումն է, ինչոր անորոշ ուրախութեամբ նայեց նրա ձեռին: — Հերիք է ինչքան պարտքի տակ չարչարուեցիր: Ել քեզանից ոչինչ չեմ ուզում. ահա, բարաթըդ քեզ եմ բաշխում, առ, պատառիր:

Սահակն աչքերը չուելով խելագարի պէս նայեց Յարութիւն աղային և ուրախութիւնից չէր իմանում ինչ ասի:

— Առ, պատառիր, և գիտցիր, թէ ինչպիսի մարդ է Յարութիւն աղան:

— Աղա, հանաք հօ չես անում —, շփոթուած դրութեամբ խօսեց Սահակը:

— Ի՞նչ հանաք, տօ՛, չորս հարիւր մանէթն ի՞նչ է, որ քեզ պէս մէկ պատուական մարդու հանար... հանաքս որն է, առ, պատառիր, քեզ ասում եմ:

Սահակն առ աւ բարաթը. նրա ձեռները դողդողում էին. նա նորից նայեց Յարութիւն աղայի երեսին և լուզուած ձայնով շշնջաց:

— Աղա, ը՛ր՛ը՛... համաք հօ՛... —

— Ի՞նչ հանաք —, այս անգամ բարձր-բարձր խօսեց Յարութիւն աղան, — հանաքս որն է, առ, հանաք —, և խլելով Սահակի ձեռից բարաթն՝ արագ-արագ պատառտեց:

Սահակը զարմացած և շփոթուած նայում էր բարաթի կտրոններին, որոնք օդի մէջ շուռ ու մուռ գալով ընկնում էին յատակի վրայ, և դող-դող ձայնով խօսեց, — Աստուած արեւդ պահէ, աղա՛, ջան. Աստուած դրա փոխարէն մէկին հազար տայ... իմ տղերքս քեզ...

— Հիմայ ո՞վ է լաւ մարդը, Տ՛ը, ասա՛, ես թէ էն իմ վրայ խօսողները... ձեր էն, էն, էն... Մարկոսը... —, ձայնը խիստ բարձրացրած խօսեց Յարութիւն աղան:

— Ել, էլ, էլ... ի՞նչ ես հարցնում... —, ձեռը վերև բարձրացնելով խօսեց Սահակն և ուզեց շրթութունքները մօտեցնել նրա ձեռներին:

— Լաւ, լաւ —, ձեռն ետ քաշելով խօսեց Յարութիւն աղան, — մենակ այսուհետև որ տեղն ընկնի՝ իմ լաւութիւնս չմոռանաս...

— Ել, էլ... է, հիմայ ի՞նչ ասեմ. թող...

Յարութիւն աղան այս վերջին մի քանի բառը լսելով, որին սպասում էր, անմիջապէս մօտեցաւ պատշգամբի գոռն, պինդ-պինդ հազալով բաց արեց, բարձրաձայն թքեց, ապա թաշկինակով քիթ ու բերանը սրբելով մտաւ ներս և նստեց Սահակի դիմաց:

— Սահակը լուութիւնից օգուտ քաղելով ուզում էր թոյլտուութիւն խնդրել գարին տանելու, իւր սրտի կրկնակի անսահման ուրախութիւնը տրեմեցիներին աւետելու՝ երբ յանկարծ դրսից ձիւտորովիւն և մարդու բղաւոց լսուեց:

— Յարութիւն աղա, ա—ան, Յարութիւն աղա...

— Ո՞վ է, թէն է—, տեղից շփոթուած վեր թռչելով և այս ու այն կողմը նայելով դէպի պատըշգամբ դուրս գնաց Յարութիւն աղան:

— Մէկ դձուրս արի, շուտ, մէկ դձուրս արի:

— Ո՞վ է, թէն է:

— Ե՛ս եմ, Յարութիւն աղա, չայիրդ...

— Օսման... թէն չայիր:

— Չայիրդ աւերեցին, չայիրդ:

— Մէկ ձիուցդ իջիր, արի տեսնենք թէն ես ասում, որ չայիր:

— Մահմուդի չայիրդ, Մահմուդի — , աղաղակեց Օսմանն, և ձիու սանձը ձգելով դէպի Հազրոն, որն այդ ժամանակ մթութեան մէջ երևեցաւ այլանի առջևի հրապարակում, հեալով բարձրացաւ վերև:

Սահակն անորոշ շփոթմունքով դուրս էր նայում և ակամայ ուշադրութեամբ ականջ էր դնում ձիաւորի և Յարութիւն աղայի խօսակցութեանը: Նա այդ ընթացքին այնպիսի խոր ցաւակցութիւն զգաց դէպի Յարութիւն աղան, որ բարկութեամբ լցուեց դէպի նրա վնաս անողը:

Ներս մտաւ միջահասակ, ոտից մինչև գլուխ զինուած մի թուրք, որի տափակ երեսի վրայ աչքի էին ընկնում նրա սաստիկ մեծ բերանը և բարակ ծնօտը:

— Օսման—, անհանգիստ շարժումներով հարց-

րեց Յարութիւն աղան, — թէն ես ասում... թէն չայիր... ո՞վ...

— Մարկոսի ոչխարը...

— Մարկոսի ոչխարը—, ճշաց Յարութիւն աղան և ձեռները բռունցք կազմելով կատաղութիւնից սկսեց դողդողալ:

— Մարկոսի ոչխարը, հա, չայիրդ աւերեց, շուտ:

— Դէ, հիմա թէն անեմ, հը, թէն անեմ —, իրեն կորցրածի պէս կրկնեց Յարութիւն աղան և սկսեց արագ-արագ շրջել սենեակում:

Սահակը բոլորովին շփոթուած դրութեան մէջ կանգնած մնացել էր իւր տեղում և նայում էր Յարութիւն աղային. նա սաստիկ խղճահարուած էր. նրա մէջ արդարութեան կիրքն սկսեց այն ստիճան եռ գալ, որ քիթ տակ ինչոր սպառնական, անորոշ բան մըմուսաց:

— Դեռ ասում են, թէ Յարութիւն աղան վատ մարդ է. թէն անի Յարութիւն աղան, հա, գլուխը որ քարը տալ, հանդարտ կեցած տեղս ոչխարը ձգում են չայիրս: Ե՛, թէնչպէս տեսար, ասա տեսնենք, էլ խելք չմնաց վրէս, որ հարցնէի:

— Գնում էի դէպի մեր գիւղը —, լուզուած խօսեց Օսմանը, — հեռուից տեսայ, որ չայիրի մէջ ինչոր սպիտակ բան է երևում. ձիս քշեցի՝ տեսնեմ Մարկոսի ոչխարը. էլ ոչ գիւղ գնացի, ոչ էլ, ուղղակի եկայ քեզ իմաց տալու:

— Իմացա՞ր, Սահակ ջան, իմացա՞ր —, նրա երեսին նայելով խօսեց Յարութիւն աղան:

— Իմացայ, իմացայ —, գլուխը դանդաղութեամբ պտրտեցնելով ցածր ձայնով պատասխանեց Սահակը:

— Դէ, հիմալ ես թնչ անեմ, դո՛ւ ասա, թնչ անեմ. տեղը չէ՛, որ էս ընկէիս բոլոր ոչխարն ու հովիւներին հրացանով սպանեմ, հա՛... թնչ անեմ, դո՛ւ ասա, թնչ անեմ —, ուսերը վեր շարժելով շարունակեց նա, — ինքն էլ էստեղ չէ, որ — տանեմ աչքը կոխեմ:

— Ես իմ Աստուածս, դրան թնչ անես՝ տեղն է —, խորհրդատու բարկութեամբ վրայ բերեց Օսմանը:

— Ասա՛, անաստուած, թշնամի ես ինձ հետ, մատղաշ չալթրն ինչ մեղք ունի. հ'ը, քեզ եմ հարցնում, Սահակ, դու մի հասկացող մարդ ես:

— Իհարկէ անաստուածութիւն է —, գրեթէ բարկութեամբ լցուած պատասխանեց Սահակը:

— Հիմալ թնչ անենք գիշերով. ո՛ւմ ձէն տանք. իւզբաշին էլ գիւղում չէ, որ...

— Մէկն ես, մէկն էլ Սահակը, երկուսով բաւական ենք, էլ ինչ թնչ ես մտածում, գիշերը մէկ էլ ուրիշներին թնչ զարթեցնես:

— Հա՛, աղա, լաւ ասաց. ես ու Օսմանն հերիք ենք. էլ թնչ ես մտածում, էլ թնչ հարկաւոր է ուրիշներին ձէն տալ — իւր կողմից անմիջապէս պատրաստականութիւն յայտնեց Սահակը:

— Հա՛, կը ինք... լաւ. Հագրօ —, ձայնեց Յարու-

թիւն աղան և ելաւ դուրս, ապա նորից մտնելով սկսեց սոստիկ բարձր խօսել և հայհոյել:

Մինչ Կահակն իւր յայտնած պատրաստականութեամբ ուրախանում էր, որ օգնելու է Յարութիւն աղային, դրսում լսուեց ձիու տրոփիւն, որ աստիճանաբար խլանալով լուեց: Սակայն Սահակը Յարութիւն աղայի գոռգոռոցից չլսեց այդ տրոփիւնը:

— Սահակ ամի, Համբարը դռանը կանգնած կանչում է քեզ —, ներս մտնելով յայտնեց Հագրօն: Սահակն աւելի շփոթուած այլանի իրարանցումից քան Յարութիւն աղան, հազիւ հասկացաւ հագրօի խօսքն և զնաց դուրս:

— Դէ շուտ արա Սահակ. էլ սպասելու ժամանակ չկայ. շուտ արէք —, դէպի Օսմանն ու Հագրօն դառաւ Յարութիւն աղան և ծածուկ դուրս դալով Սահակի ետեւից՝ դռան ետեւից ականջ դրեց նրա որդու հետ ունեցած խօսակցութեան:

— Համբար ջան, դո՛ւ ես. թնչ է:

— Ուշացար, մէրս ուղարկեց ետեւիցդ:

— Ինչ լաւ եկար. — ես չեմ կարող դալ. մենք դնալու ենք զիանը տեսնելու. դու գարին տնայ տուն.

— Ինչ զիան. գարի վերցրի՛ր —, իրար վրայ հարցրեց Համբարը:

— Յարութիւն աղայի չալիըրը ոչխար են ձգել:

— Ո՛վ:

— Մարկոսի հովիւները:

Համբարը մի քանի վայրկեան մտա եց, ուղեց խօսել այդ առթիւ և ասել, թէ «իմ գալու ժամանակ ինչոր սե ձիաւոր էր հեռանում այստեղից», սակայն հարցրեց.

— Ինչքան գարի վերցրիր:

— Երկու սոմառ:

— Ի՞նչպէս. բարաթով, թէ փոխ:

— Ի՞նչ բարաթ, թէ փոխ. էնպէս տուեց:

— Էնպէս...

— Հա, ինչ էլ սուբաշի վարձեց, վարձիցս երկու սոմառ գարի էլ առաջուց տուեց —, ուրախ-ուրախ յայտնեց նա:

Որդին լուեց և ինքն ևս ուրախացած ոչինչ չասեց:

— Մենակ էդ է—, նոյն ուրախութեամբ շարունակեց նա,—բարաթս էլ պատառեց, բարաթս:

— Պատառեց, իրաւ—, չափազանց ուրախացած բարձր ձայնով հարցրեց Համբարը:

— Քրիստոս, պատառեց, իւր ձեռով պատառեց: Մարդն իսկական մարդ է եղել, մենք ինչեր ենք ասում... Ես հիմայ ճանաչեցի. չէ, սրանից յետոյ թէ ուր ասեն՝ չեմ հաւատալու. բոլորը սուտ է: Դէհ, հիմայ էլ երկար ժամանակ չունիմ խօսելու, շտապով գնալու ենք. դու գարին տար տուն, մօրդ յայտնիր և ասա, որ էս գիշեր չեմ գայ: Համա ոչ ոքի ոչինչ չասես. իմացար:

— Իմ տան գաղտնիքն ուրիշն թէ գործ ունի իմանալու:

— Դէհ, հիմայ գնա բանիդ—, շտապ-շտապ վրայ բերեց Սահակն և մթութեան մէջ սանդուխներով վազելով բարձրացաւ վերև:

Յարութիւն աղան այդ խօսակցութիւնից սաստիկ ուրախացած՝ մտաւ հարեան սենեակն, առաւ Աբուլէլայի (այսպէս էր ձուռ անունը) սանձը, տարաւ ձգեց բակը, սանդուխի տակ և ապա մտաւ իւր սենեակը:

Համբարն ուրախութիւնից ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս գնաց տուն, որ ջուալները բերէր, գարին տանէր, և ինչպիսի բերկրանքով պատմեց մօրը բարաթի ոչնչացման ուրախալի լուրը:

Սալվին, որ սկզբից մեծ հրճուանքով էր լըսում որդու ուրախ խօսակցութիւնը՝ յանկարծ ինչոր գաղտնի տխրութիւն զգաց: Մի ինչոր բան կարծես ներսից մի անորոշ վատ բան գուշակում լինէր, որ նա, կնոջ օժտուած յատուկ բնաւորութեամբ զգում էր, բայց չէր կարողանում բացատրել: Այդ տխրութիւնը որպէս թոյն դառնացրեց նրա մի քանի ընկալի առաջ գուարճութիւն զգացող հոգին: Նա այլ ևս ոչինչ չխօսեց, մտաւ անկողին: Քունը հանած, ծածուկ տխրութիւնից երկար ժամանակ նա կողքէ կողք էր դառնում և չէր կարողանում քնել:

յառաջ-յառաջ... — Գրիմա՛յ, Գրիմա՛յ —

— Աղա՛, դէ՛, էլ ուշանալու ժամանակ չէ. չալի-
րըդ հիմա՛յ աւերեցին. շուտ անենք գնանք, ուր է
Հազրօն. Հազրօ—, արդէն իրեն այդ տան մօտիկ
մարդ համարելով ձայնեց Սահակը, որ թէ տխրած
էր այդ դէպքից, որ չալիը վնասել էին և թէ ու-
րախացած, որ դէպքը բերեց, և այն էլ հէնց այդ
երեկոյ, իւր մասնակցութեամբ—օգնութեամբ իւր
ծառայութիւնը մատուցանելու Յարութիւն աղային,
դէպի որը նա այնքան երախտադիտութիւն գգա-
լով հանդերձ՝ համակրանք տածեց. — Հազրօ, որտեղ
ես, գնանք ձիերը թամբենք:

— Ծրագն էի վառում, պատրաստում—, ներս
մտնելով խօսեց Հազրօն:

— Գնանք, գնանք, շուտ—, շտապով խօսեց
Սահակն և Հազրօի հետ իջնելով ներքեւ, մտաւ գոմ:

Նրանց գնալուց յետոյ Յարութիւն աղան բաց
արեց պատի միջև շինուած տուպը (պահարան),
հանեց արաղ, գինի, գառան խորոված միս, հաց,
պանիր, ձու և շաբեց սեղանի վրայ:

— Դէ՛, մօտ արի Օսման մի.մի արաղ խմենք
մինչև Սահակը վերև կգայ:

Օսմանը մօտեցաւ սեղանին, և չէրքէզի լայն
թևերը վեր քաշելով խօսեց, — հիմա՛յ Խիւզամը տեղ
հասած չի՛ լինի, թնչ ես կարծում:

— Դեռ որտեղ. գնալը մի ժամ էլ չկայ. տա-
սը վերստից աւելի է. մութը գիշեր է:

— Ուրեմն մի ժամ էլ հարկաւոր է, որ հասնի:

— Հա՛, դեռ պէտք է սպասենք, մինչև որ ա-
քաղաղներն երկրորդ անգամ կանչեն:

— Ե՛, ինչպէս անենք, որ ուշանալներուս չը-
կասկածի:

— Ո՞վ, Սահակը. անհոգ կաց. էնպէս մի բան
եմ արել, որ կասկածելու տեղ չէ մնացել:

— Ի՞նչ:

— Աբուլէյլայի սանձը պահել եմ. ուրիշ սան-
ձով էլ չի կարելի հեծնիլ:

Օսմանը քթի տակ ծիծաղեց. — ուրեմն էնպէս
պէտք է անենք, որ առաւօտեան էնտեղ հասնինք:

— Հա՛, էնպէս որ ոչ լոյս լինի, ոչ մութ: Մէկ
էլ պիտի աշխատինք, որ Սահակին մի քանի հա-
կոնծել տանք. որ առաւօտ քան չկարողանայ զա-
նազանել—նշմարել... հասկանում ես... քանի
խառնուի...

— Մինչև եդ ժամանակ էլ Խիւզամի ոչխարը
չալիըր լաւ վնասած կլինի, հա՛: Ե՛, քիչ լու-
ւոց յետոյ շարունակեց Օսմանը, — քանի Հազրօն
ու Սահակը չեն եկել՝ իմ...ը՛ը՛...

Յարութիւն աղան հասկացաւ նրա միտքը,
հանեց պորտմանէն և երեսուն ռուբլի դրեց նրա
առաջ:

— Դէ՛, Յարութիւն աղա, ժլատութիւն մի ա-
նիր, Խիւզամին տուածիդ կիսի չափ էլ է տուր.
չնեղանաս, պէտք որ չլինէր... թէ չէ գիտես իմ
ընաւորութիւնը... որ...

«Գիտեմ ինչ շան որդին ես. սուտ վկայ դառնալու ես համա՝ թալանելու ես էլ», մտքի մէջ հայհոյեց Յարութիւն աղան և քսան ըուբլի ևս դրեց նրա առջև, — վերցրո՛ւ. հալալ լինի:

Օսմանը թղթադրամները ծալելով դրեց գըրպանն և վերցրեց արախի բաժակը, որ վաղուց լըցրած նրա առաջն էր դրած:

— Աղա, Աբուլէյլայի սանձը չկայ —, ներս մտնելով միասին խօսեցին Հազրոն ու Սահակը:

— Սանձը չկանայ —, զարմանքով երկարացրեց Յարութիւն աղան. — ո՞րտեղ ես դրել:

— Իմ սենեակումն էր, չկայ:

— ԳԺՈՒԷ՛՛՛ Ե՛ս, ինչ է. գնա գտի՛ր. կորցնելու ժամանակը գտար:

— Հա վալլայ, թարս բանի աշեցէք, է —, իւր կողմից վրդովուած խօսեց Սահակը. — գնանք, գընանք էլի մի լաւ փնտռենք:

— Դու հանդիստ նստիր, նա կգտնի. թող պահած տեղն աշէ —, խօսեց Յարութիւն աղան և նրան նստեցրեց սեղան:

Հազրոն ելաւ դուրս:

— Ա՛ռ, առ խմիր, դուրսը ցուրտ է. մի քիչ էլ բան կեր մինչև Հազրոն սանձը կգտնի: Է՛, ողջ լինիս, Սահակ ջան —, իւր բաժակը բարձրացնելով առաջ տարաւ Յարութիւն աղան, — Աստուած տուե՛ր ու տեղդ առանց փորձանքի պահէ. այ՛ —, գինու բաժակը բարձրացնելով շարունակեց նա, — ես քանի ողջ եմ՝ էս գինու ու հացի

վրայ երդուեմ եմ, որ քեզ համար կանգնած եմ. տո՛ւր ձեռք, տո՛ւր:

— Շնորհակալ եմ, աղա ջան, Աստուած արեւդ պահէ —, ոտի կանգնելով խօսեց Սահակը:

— Աստուած ինձ էլ աջողութիւն տայ. ողջ լինիս, Օսման, շնորհակալ եմ, որ աղուհացս չմոռացար, եկար իմաց տուիր —, բարեմաղթեց Յարութիւն աղան և դատարկեց բաժակը: — Դէ՛հ, խմեցէք, ժամանակ չկայ, կուշանանք:

— Ո՛ղջ լինիս, Յարութիւն աղա, Աստուած քո պակասութիւնը մեզ ցոյց չտայ —, խօսեց Օսմանը, որի ասածը կրկնեց և Սահակն, ապա և երկուսով դատարկեցին բաժակները:

— Դէ, մի-մի բաժակ էլ. Սահակ, բեր գինուդ բաժակը. չուշանանք... Այ գետինը մտնիս, Հազրո, գետինը —, նեղացած խօսեց Յարութիւն աղան և նորից լցրեց նրանց երկսի և ապա իւր բաժակը: — Դէ, միս վերցրէք, լաւն է, ա՛ռ Սահակ, վերցո՛ւ, Օսման. կերէք, էօֆ-էօֆ, լաւ կտորներ են, անո՛ւշ արէք:

Սահակն ուտում էր գառան միսն և լաճախակի նալում դռանը, թէ ներս չէ՞ մտնում արդեօք Հազրոն: Նա մեծ անհամբերութեամբ սպասում էր, թէ երբ են գնալու:

— Վերցրէք, խմեցէք, հա՛ ղոչաղներ, խմեցէք, դուրսը ցուրտ է:

— Աղա, չկայ —, ներս մտնելով երկիւղով խօսեց Հազրոն:

— Ի՞նչպէս թէ չկայ —, բղաւեց նրա վրայ Յարութիւն աղան, — գտիր, թէ չէ էս րուպէիս...

— Չկանայ —, շուարած վրայ բերեց Սահակն, — ուրիշ սանձ չկայ: Մեր տանը պիտի լինի, գնամ բերեմ:

— Ուրիշ սանձով ո՞վ կարող է Սբուէյլային հեծնիլ, քարէքար կտայ —, վրայ բերեց Յարութիւն աղան, — թող հոգին դուրս գայ, գտնի. խըմեցէք դուք:

Օսմանն ու Սահակը վերցրին գինով լիք թէյի բաժակներն և դատարկեցին:

— Կեր, Սահակ ջան, կեր, մարդ (առատածուրն) մարդու մալ է, կեր, վերցրո՛ւ Օսման. ձո՛ւ վերցրէք:

— Աղա՛, չկայ, տեղ չթողի՛ նայեցի:

— Ի՞նչպէս թէ չկայ, տօ՛, Սիբիրից փախած ես դրա համար քեզ շան սատակ կանեմ... Էսպէս օրով ձիու սանձ կօրցնեն... Էս սահաթիս գտիր, թէ չէ՛ էս է, եկաւ —, և ձեռը նրա վրայ բարձրացնելով ոտի կանգնեց Յարութիւն աղան:

— Աղա՛, գնամ միասին փնտռենք —, ոտի կանգնելով խօսեց Սահակն, — էս շատ ուշացանք, աքաղաղներն արդէն կանչում են:

— Ա՛քշի, նստի՛ր, թնջ բան ունիս է. թնջ գիտես որտեղ է ձգել —, Սահակին աչքով անելով խօսեց Օսմանն և փեշից քաշելով նրան նստեցրեց տեղը:

— Խմեցէք տեսնինք. Էդ շաշիուներ պիտի գըտ-

նի՛ թէ չէ, վերցրէք —, նորից լցնելով բաժակները խօսեց Յարութիւն աղան:

— Է՛, աղա՛, հերիք է:

— Խմիր, տօ՛, մի երկու բաժակ գինին թնջ է որ... —, Սահակի խօսքին վրայ բերեց Յարութիւն աղան և բաժակը տուեց նրա ձեռը:

Սահակի աչքերն արդէն ճլտի-պլտի էին ա՛նում. իսկ Օսմանը նստած տեղում գրեթէ մըափում էր:

— Աղա՛ —, հագիւ համարձակուելով ներս մտաւ Հազրօն:

— Հայ զարհրումանք... շը՛ր՛ն... հիմայ բերանս ինչ էր եկել, հա՛... քեզ պէտք է գիւլիլով տալ...

Սահակը, համբերութիւնն արդէն հասած, առանց խօսելու վերկացաւ տեղից և Հազրօի հետ գընաց սանձը որոնելու:

— Սնո՛ւս —, ժպտալով շըշնջաց Յարութիւն աղան, — բանը լաւ է գնում:

— Է՛, արդէն ժամանակ է. հիմայ աքաղաղներն երկրորդ բերան կկանչեն:

— Դէ, դու էլ գնա՛, իբրեւ թէ օգնելու սանձ ուրիշ տակն է...

Օսմանը գնաց դուրս:

Յարութիւն աղան իւր բոլոր ուրախութեամբ ման էր գալիս սենեակում, հրճոււմ էր սրտի խորքից ու ինքն իրեն կրկնում. «աջողոււմ է, աջողոււմ... Մարկոս, քո հէրն անիծելու եմ...»

— Գտանք, աղա՛, գտանք, սանդուխի տակն էր —, սաստիկ ուրախացած ներս վազեց Սահակն աւետարու։

— Գտա՞ք. այ՛ Աստծու աչքի լուսը քեզ լինի, Սահակ ջան. դէ՛, շտապինք. էս մի-մի հատն էլ խմենք։ Օսման, եկա՛ր. վերցրէ՛ք։ Հագըօն ի՛նչ եղաւ։

— Զիերն է գուրս քաշում։

— Դէ՛, խմեցէ՛ք, գնանք։

Օսմանը, որ նոյնպէս արբել էր, և Սահակը դժուարութեամբ վերցրին բաժակներն և խմեցին։

— Դէ՛, գնանք. ես Տէր Աստուած, դո՛ւ իմ գործին աջողութիւն տաս —, ձին նստելիս արտասանեց Յարութիւն աղան։

— Աւալ Աստուած —, միասին վրայ բերին Սահակն ու Օսմանն և հետեցին Յարութիւն աղային։

Երբ նրանք դուրս եկան գիւղից, աքաղաղներն երկրորդ բերան արդէն սկսել էին կանչել։

— Դէ՛, քշեցէ՛ք, շուտ արէ՛ք քանի գեռ չէ լուսացել, և քանի գեռ չեն հանել ոչխարը չալիւրից. քշեցէ՛ք, որ հասնինք, կարողանանք բռնել —, առաջ ընկնելով խօսեց Յարութիւն աղան և Աբուլէյլայի սանձը շարժեց։

Դեղեցիկ ձին մեծ քայլերով սրընթաց բարձրանում էր լեռն և գլուխն երբեմն թափահարելով ֆռկում. կարծես նրա վրայ բեռ չլինէր։

— Հիմա՛յ որ չհասնինք՝ վատ կլինի հա՛, լուսով մեզ կտեսնին, ոչխարը կհանեն —, խօսեց Օսմանը։

— Ա՛խ, քեզ ի՛նչ ասեմ Հազրօ, քեզ ի՛նչ տեսմ...

— Լոյսը բացւում է, շուտ անենք, աղա —, խօսեց իւր կողմից Սահակն և անպանդակներով ու մտրակով մի քանի անգամ խփեց ձիուն։

Մօտ վեց վերստ գնալուց լետոյ նրանք հասան մի բարձրավանդակի գլուխ։

Դեռ նրանց էլի մնում էր գնալու չորս վերստ։

— Քշեցէ՛ք, քշեցէ՛ք —, ձայնեց Յարութիւն աղան, երբ հասել էին բարձրավանդակի գլուխը։

Արեւելքն արդէն սկսել էր շառագունիլ։

— Կաց նայենք, աղա —, խօսեց Օսմանն և ձիու սանձը ձգեց։

Նրանք ևս իրենց ձիերի սանձերը ձգեցին և մի քանի ըոպէ կանգնած սկսեցին դիտել։

— Հրէն-հրէն, ոչխարը չալիւրի մէջն է, այ՛. այ՛-այ՛ նոր են դուրս հանում, տես, տես Յարութիւն աղա —, մատով ցոյց տուեց Օսմանը։

— Հա՛ աղա՛, ոչխարը նոր են դուրս հանում, մտիկ արա՛, դէպի վերեւ ձօրը քշեցին, տես —, փոքր դիտելուց լետոյ մատով ցոյց տուեց Սահակը։

— Վալ Հազրօ, քեզ ի՛նչ ասեմ. սատկիս դու հա՛, սատկիս, որ մեզ ուշանալու պատճառ դարձար. քշեցէ՛ք, շուտ, շուտ, ժամանակ չկա՛ —, նեղացած խօսեց Յարութիւն աղան։

— Դիտես աղա, մեզ որ տեսան հանեցին։

— Հա՛, ճշմարիտ նկատեց, մեզ որ տեսան՝ հանեցին —, Օսմանի խօսքին վրայ բերեց Սահակը։

... — Հօ աչքերովդ տեսաք, դէ, էլ մի նայէք. քշեցէք, քանի շատ չեն հեռացրել —, Սահակի խօսքից ուրախացած ասաց Յարութիւն աղան և այս անգամ ձիուն մտրակեց:

Նրանք ևս ձիերին մտրակեցին և արօտատեղերի ու արտերի միջով հետևեցին, Յարութիւն աղային:

VI.

Արեւը բաւականին բարձրացել էր երկնքի երեսին, երբ Յարութիւն աղան իւր նոր սուբաշին ետեւը ձգած՝ մտաւ Վաչեան գիւղը: Հասնելով չարդախ ունեցող մի դռան, իջաւ, ձին տուեց Սահակին և ձեռի մտրակը խաղացնելով շարժուեց առաջ:

— Մատոս, ա՛ Մատոս:

Բակում պառկած շները տեսնելով եկաւորին, բարձրացրին իրենց անախորժ մուգիկը:

— Օ՛շտ, ճշտ, թո՛ւլա —, դուրս վազելով շներին հեռացրեց մի աչքով կոյր, տարիքն առած, բարձր հասակով, չորացած չիլ դէմքով մօտ լիսուն տարեկան մի մարդ:

Դա տանուտէր Մատոսն էր, որի աչքն երիտասարդութեան ժամանակ հանել էր եզը՝ լուծը քաշած ժամանակ:

— Ա.ա՛, Յարութիւն աղա, բարձով, բարձով. էսպէս առաւօտ կանուխ քնչ խաբար:

— Տունս քանդել են, սրանից էլ լաւ խաբար:

— Ի՞նչ է, քնչ է եղել:

— Ի՞նչ պիտի լինի. ահագին չափիւս արածացրել, փճացրել են:

— Ո՞վ:

— Էն հարամգաղա Մարկոսն, ո՞վ:

— Դէ, էլ ինչո՞ւ ես նեղանում, հէր օրհնած. դատաստան կայ, օրէնք կայ. կգնանք, կտեսնինք: Դնանք, գնանք ներս մի արաղ անուշ արա:

— Ե՛ւ, մարդ քնչպէս չնեղանայ, որ... Հա՛, Սահակ —, յանկարծ դէպի նրան դառնալով խօսեց Յարութիւն աղան, — ձիերը բռնիր, էստեղ կաց, հիմայ մենք կգանք:

— Թող ձիերը ներս քաշի: Յարութիւն աղան փոխանակ պատասխանելու՝ տանուտէր Մատոսին աչքով արեց. — չէ՛ հարկաւոր չէ:

— Ե՛, քանիսի ակոտ անենք —, գոմի տափի մէջ կանգնած Յարութիւն աղային հարցրեց տանուտէր Մատոսը:

— Յանձր խօսիր —, ասաց Յարութիւն աղան և նայեց չորս կողմը:

— Ոչ ոք չկայ. դու ասա:

— Ինչքան շատ՝ էնքան լաւ. գիտես, էլի, հօ առաջին անգամը չէ. էնպէս արա՛, որ օկրուժնի սուղը չընկնի...

— Լա՛ւ... ը՛ր... Համա լաւ ժամանակիս հասար, կեանքիդ մատաղ —, քիչ լուելուց լետոյ մի աչքով նրա երեսին ժպտալով արտասանեց տանուտէր Մատոսը, — որ ասես՝ գրպանումս գրոշ չկայ...

— Համա՛, զոչա՛ղ Մատոս, քեզ տեսնի՛մ, գործըն էնպէս տանես, որ...

— Եդ իմ սաղ աչքիս վրայ, դու անհոգ կաց—, խօսեց տատնուտէր Մատոսն և ձեռը դրեց աջ աչքին։

— Դէ, ահա քո փէշկեաշդ։

— Ե՛, Յարութիւն աղա—, փողերն համարեւոյց յետոյ խօսեց տատնուտէր Մատոսն, — երեսնի գործն էլ երեսնի կըլինի...

— Դէ լա՛ւ, դէ լա՛ւ, մի՛ նեղեմար, ահա տաւրն էլ։

— Ի՞նչ ես հոգուցդ քաշում, հէր օրհնած. տո՛ւր էլի, տո՛ւր, որ ես էլ ուզածիդ պէս գործ անեմ։

— Լա՛ւ, ահա տասն էլ, խաթրդ չմնայ։

— Ա՛յ, հիմայ եղա՛ւ։

Նրանք պորտմանէները դրին գրպանները։

Կարճ ժամանակ լռութիւն տիրեց։

— Իսկ բանեատի՛ (ПОНЯТЫЙ) —, մտածման մէջ ընկնելով հարցրեց Յարութիւն աղան։

— Քանիսը. երկուսը բաւական է։

— Բաւական է, իհարկէ։

— Հիմայ ո՛րն ես ուզում. Սատանայ Մաթոսին ու Թովալ Թաթոսին, թէ՛ թէ Սառճի մանչուն ու Շուռտի մանչուն, դրանք իրար ընկերներ են։

— Սատանայ Մաթոսն ու Թովալ Թաթոսը կարծեմ աւելի զոչաղ են. նրանց կանչել տուր։

— Լա՛ւ. էս սահաթիս. Յոսէփ, Յոսէփ—, բըղաւեց տանուտէր Մատոսը, դէպի գոմի դուռը գնալով։

— Հրամէ, աղա—, լսուեց մի խռպոտ ձայն, որից յետոյ ներս մտաւ մաշուած էպովէտներով, անճաշակ չէրքէզով, կեղտոտ և ուռած երեսով, որից կարծես ձէթ էր կաթում, թուրքի լայն զանկապանները սրունկներին, անճոռնի մարմնով տանուտիրոջ եասաուլը։

— Ա՛րի քո փէշկեաշդ տամ, զոչա՛ղ Յոսէփ—, խօսեց քիչ հեռուից Յարութիւն աղան և մի բուրբի դրեց նրա բուռը։

— Դէ, աղային շնորհակալութիւն արա։
Եասաուլը փափաղը վերցրեց և գլուխ տալով հեռուում կանգնեց։

— Գնա՛, որտեղ էլ որ լինին, էս սահաթիս Սատանայ Մաթոսին ու Թովալ Թաթոսին գտիր, նրանք իրար հետ են լինում. ասա՛, որ գան, իմացա՛ր. ասա՛, որ Յարութիւն աղան ու գլաւան կանչում են։ Ոչ ոքի ոչինչ չասես. դէ, գնա՛։

— Ե՛ս սահաթիս—, հլու կերպով պատասխանեց Յոսէփն և վազեց դուրս։

Տանուտէր Մատոսն իւր հիւրին տարաւ գոմի օդէն, որտեղ նրա աղջիկն արդէն սեղան էր պատրաստել։ Նա հանեց շշով արաղն, առաջ ինքը խմեց, ապա տուեց Յարութիւն աղային։ Երկրորդ

գաւաթները դատարկելուց լետոյ նրանք նստեցին սեղան: զանգ արձակեց զայսոս զճառարն քմար

— Սահակին կանչէինք դար, ձիերն էլ ներս քաշէր—, սեղան նստելիս խօսեց տանուտէր Մատոսը.

— Չէ... թող մնայ. նրան դուրսն տօնանձին թող տան. ձիերը կուշտ են—, սառնութեամբ պատասխանեց Յարութիւն աղան:

«Մէջդ մի շանորդութիւն կլինի, հա, որ չես կանչում. ես փորձելու համար քեզ հարցրի», մըտքի մէջ խօսեց տանուտէր Մատոսը:

Գոմի դուռը բացուեց և ներս մտան մէկը սև, սափրած գէմքով, երկար ու լղար երեսով, միւսը սև-ձիթագոյն գէմքով, քիչ ցանցաւ մօրուքով, երկուսն էլ մօտ քառասուն տարեկան, շապկաները գլխներին, կապոյտ չէրքէզ հագած՝ երկու դիւղացի: Նրանց բաց թողած լայն շալուարների տակ երևում էին ճարպ քսած եամանիները (չուստ):

— Ա.ա. համմեցէք, համմեցէք, Մաթոս աղա, Թաթոս աղա, համմեցէք. Բնչպէս էք, քէֆերդ-հալերդ, համմեցէք—, երեսին Ժպիտ խաղացնելով և տեղում շարժուելով խօսեց Յարութիւն աղան:

— Շնորհակալ ենք, Յարութիւն աղա, ձեր քէֆըն ենք հարցնում—, խօսեցին նրանք և ձեռ տալուց լետոյ նստեցին սատուների (Թաղթ) վրայ, իրար հանդէպ: Նրանք երկուսով անմիջապէս հանեցին ծխատուփերն՝ և կափարիչներից սեղմելով ցուցա-

մատերի ու միջամատերի մէջ՝ ոլորեցին պապիրոսներ: Նրանք նայելով ծխախոտին մտածում էին.

«է, բաներս լաւ է երևում»:

— Մօտ եկէք մի-մի արաղ անուշ արէք—, խօսեց տանուտէր Մատոսն և արաղի բաժակը լրցնելով տուեց Սատանայ Մաթոսին:

— Անուշներ:

— Անուշ կենաս, ջանդ անուշ—, արաղի ագդեցութիւնից երեսները ծամածռելով պատասխանեցին նրանք:

— Ե՛, էլ Բնչպէս էք. մէկ չէք գալիս, չէք հարցնում, թէ Յարութիւն աղա, սաղ ես, մեռած ես:

— Գալդ նոր իմացանք, աղա ջան. հա, զորդ, էդ Բնչ է պատահել, ասացին որ չափիդ արածացրել են—, գրեթէ միասին հարցրին նրանք:

— Բա Բնչ են արել, սիրտը քաշելով խօսեց Յարութիւն աղան:

— Յոսէփն ասաց: Ասել է դրա համար ես եկել—, ծխաքարշերի մէջ փչելով նորից հարցրին նրանք:

— Հա-ա, հէնց դրա համար է եկել, ու ձեզ կանչել է, որ բանեատի լինիք:

— Մեր աչքի վրայ—, ասացին նրանք և նրանց աչքերի մէջ ուրախութիւն փայլեց.— աղալի խաթեր համար մենք...

— Էլ Բնչ ասել կուզի, որ դուք էլ...—, նրանց ընդհատեց տանուտէր Մատոսը կիսատ թողնելով իւր միտքը:

— Եդ մեր բանն է. փառք Ստոծու, սա հօ առաջին անգամը չէ:

— Դէ, մօտիկ եկէք, անուշ արէք,— նրանց աչքերին խորհրդաւոր հայեացքով նայեց տանուտէր Մատոսն և կերակրի ամանները շարժեց դէպի նրանց:

Նրանք մօտենալով խոնջային՝ աչքերը ձգեցին Յարութիւն աղայի երեսին ու մտածեցին. «Երբ պիտի տայ»:

— Դէ, Յարութիւն աղա, տղոցն էլ մի-մի բան բաշխիւր—, ժպիտն երեսին խօսեց տանուտէր Մատոսն և հաւի մսից մի-մի բլրակ աւրած տուեց նրանց:

Յարութիւն աղան ձեռը տարաւ գրպանը:

Սատանայ Մաթոսն ու Թովալ Թաթոսը դադարեցին ծամելուց, և աչքերը ձգին նրա գրպանին:

«Ինչքան փող ունի շան որդին», մտքի մէջ հայհոյեցին նրանք:

«Ինչ էք նայում, շան որդիք», մտքի մէջ հայհոյելով պատասխանեց Յարութիւն աղան:

— Ահա ձեզ երկսիդ փէշկեաշ՝ քսան մանէթ:

— Ե՛հ, Յարութիւն աղա, քսան մանէթն քնչ է եդպիսի մի բանի համար. դու մէկ տուր, որ մենք տասը նշանակենք:

— Դէ, հերիք է. տանը որ մնայիք, ձեզ ո՞վ երկուս գրոշ կտար—, վրայ բերեց տանուտէր Մա-

տոսն և խոնջայի տակից կոխեց նախ նրանց երկսի, ապա և Յարութիւն աղայի ոտը:

«Հնա, ասել է շատ ուզենք», այդ նշանից մտածեցին Սատանայ Մաթոսն ու Թովալ Թաթոսը:

«Հնա, ասել է քիչ տամ», մտածեց Յարութիւն աղան:

«Դուք երեքդ էլ ինձ լաւ մարդու տեղ ընդունեցէք», մտքի մէջ խօսեց տանուտէր Մատոսը:

— Զէ, աղա, քիչ է, դրա համար հոգի սեպելը չարժէ:

— Ահա, լաւ, թող լինի երեսուն, էլ ձայն չբահանէք—, խօսեց Յարութիւն աղան և տասը բուրբլի ևս դրեց նրանց առջևը:

Նրանք ոչինչ չստացին: Տանուտէր Մատոսի երեսով միջանհանգիստ շարժում անցաւ: Նա խօսեց.

— Ծնւր, տնւր, Յարութիւն աղա, տնւր, մեր տղերքն են, ամեն ժամանակ մեզ պէտք են դալիս, հինգ մանէթ էլ տո՛ւր.— ապա Սատանայ Մաթոսի երեսին նայելով՝ Յարութիւն աղայից ծածուկ, հինգ մատը չռեց և ձեռով կրծքին կամաց խփեց, որ նշան էր, «Եդ հինգ մանէթն իմս է, հա-ն»:

«Շան որդի՛ն տես», մտքի մէջ հայհոյեց Յարութիւն աղան և գրպանից հինգ բուրբլի ևս հանելով խօսեց.

— Համմեցէք, Մատոսիս խաթրը հինգ մանէթի համար իսկի կկոտրեմ...

Նախաճաշն անելուց լետոյ կոչուած վկաները վեր կացան տեղերից:

— Ապասեցէք, շները կխածեն —, խօսեց տանուտէր Մատոսն և վազեց նրանց ետևից. — Է —, բակում ցածր խօսեց նա, — իմ հինգ մանէթը, թէ չէ միւս անգամ չեմ կանչի:

— Ահա, գլաւ աղա, չարդ տանի —, մտքի մէջ հայհոյելով հինգ ընկերանոցը նրան տուեց Սատանայ Մաթոսը:

Նրանց դուրս գնալուց հազիւ էր անցել երկու ընկեր, որ գլաւայի հետ ներս մտաւ սաստիկ երկար հասակով, ինչպէս ասում են՝ զօզօ բոյով, սև ու բութ դէմքով, ճպրոտ և ուռած աչքերով, գլուխը ցից բռնած մօտ երեսուն տարեկան մի երիտասարդ, որի ռեվոլվերի դայթանը կարմիր շալէ չէր քեզի վրայից զարդարել էր նրա լայն և դուրս ընկած կուրծքը:

— Ահ, բարով, բարով, պարոն Ղազար, բարով. էս օրտեղ ես, էսքան ժամանակ է ետևդ մարդ ենք ուղարկել չես երևում, աչքս քեզ մընաց. քանի անգամ հարցրի՝ ասացին կգայ:

— Քնած էի, Յարութիւն աղա, բարով ես եկել. ինչպէս ես, լաւ ես: Հա, իրաւ, ինչ է պատահել, ասում են չալիրդ ուտեցրել են:

— Հա, Ղազար ջան —, խեղճացած ձայնով պատասխանեց Յարութիւն աղան, — էնպէս որ էլի մի ակտ ես գրելու:

— Աչքիս վրայ. մեր գործն ապա ինչ է:

— Դէ որ էդպէս է, էս քսան մանէթը քեզ փէշկեաշ:

— Տես, Յարութիւն աղա, ես էլ քսան մանէթանոց ակտ կգրեմ —, նրա երեսին ժպտալով վրայ բերեց Ղազարը. — Տօ գիտես, որ ինչէլ որ անէք՝ առանց ինձ ոչինչ է:

— Տուր, տուր, մեր Ղազարն է, կորուստ տեղ չէ, տուր, մի քանի մանէթ էլ տուր —, խօսեց տանուտէր Մատոսն և միջուկի պնակը նրա առաջ քշելով ողջ աչքը խփեց, որ անսովոր մարդը կը կարծէր, թէ դա սովորական աչք թարթել է, բայց Ղազարի աչքը, որ սովոր էր՝ հասկացաւ, թէ «շատ ուզիր, որ ինձ հասնելիքն էլ շատ լինի»:

Յարութիւն աղան հինգ ընկեր ևս տուեց նրան: Ղազարը ձեռ չտուեց:

— Վերցրո՛ւ.

— Եհ, կարմրցրո՛ւ:

— Թֆո՛ւ —, մտքի մէջ երկսին էլ հայհոյելով վերցրեց հնգանոցն և նրա փոխարէն դրեց մի կարմիր տասանոց. — Էս էլ կարմիր. եղաւ...

— Հը՛ր —, ժպտող դէմքով ձայնեց գրագիր Ղազարն և փողերը դրեց գրպանը:

Ներսում մինչդեռ ուտում-խմում, զուարճանում էին, և փողի առևտուր անում, դրսում քարերի վրայ նստած՝ ձիերը պահում էր Սահակը: Նա մենակութիւնից հայեացքը յառել էր ձիերի ոտներին և ակամայից խորասուզուել մտածմունք-

քի մէջ: Երբ դինու ազդեցութիւնից քիչ զգաստացած զգաց իրեն՝ նրա մտքովն անցաւ բոլոր գիշերն ու առաւօտը: Ընկղմուած այդ մտածմունքի մէջ նրա մտքովն այսպիսի մի հարց անցաւ. «մի՞թէ խկապէս Մարկոսի ոչխարն էր. հա՛. թէ՛ ուրիշի՞նը»: և ինքն էլ չկարողացաւ հասկանալ, թէ ինչպէս սարի գլխին ասել էր, թէ «տեսայ ձեր ոչխարն էր, տեսանք...»:

Մինչ նա այդ մտածմունքների և ապա իւր տան կարիքների լիշողութիւնների մէջ ընկղմուած անթարթ նայում էր ձիերի ոտներին, դուրս եկաւ տանուտէր Մատոսն և նրա համար արաղ և կերակուր բերեց:

— Սահակ, ի՞նչ ես անում, ղոչաղ Սահակ—, տանուտիրոջ ետեւից դուրս գալով խօսեց Յարութիւն աղան և առնելով արաղի շիշը նրա ձեռից՝ երեք բաժակ իրար վրայ լցրեց և խմացրեց Սահակին:

Կէս ժամից ձի նստած վերադարձան Սատանայ Մաթոսն ու Թովալ Թաթոսն, իսկ տանուտէր Մատոսի, Դազար գրագրի ու իւր ձին արդէն թամբել էր եասաուլ Յոսէփի:

VII.

Կէսօրը մօտ էր:

Կարմիր ձիու վրայ նստած Կարգաղ էր մըտնում մօտ քարասուն և հինգ տարեկան յաղթան-

դամ, բարձրահասակ, մի ղիմուած մարդ, որի սատիկ երկար պեխերը փռուել էին նրա սափրած այտերի վրայ: Մարկոս Վարդիկեանն էր, որ յայտնի անուն և որոշ դիրք էր ձեռ բերել իւր հասկացողութեամբ: Յարաբերութիւն ունենալով արտաքին կեանքի հետ՝ նա բաւականին փորձուել էր: Նա պարզ տեսել էր, որ Զաւախէթի չոր երկիրն իւր փտած հողով և խիստ կլիմայով չէ վարձատրում քրտնաթոր գիւղացու ծանր աշխատանքն և բաւականութիւն չէ տալիս նրա առօրեայ ապրուստին. նա հասկացել էր, որ այդպիսի լեռնոտ, ցուրտ և խոտաւետ տեղում գիւղացու աշխատութիւնը վարձատրող ամենից լաւ պարագմունքը կարող է լինել անասնապահութիւնն, ուստի ինքն արդէն հինգ տարի էր, ինչ սկսել էր պարապել դրանով. նա գնել էր մօտ չորս հարիւր ոչխար, որի տուած արդիւնքով պահում էր իւր բազմադամ գերդաստանը:

Նա շատ բաներում գիւղի համար առաջնորդ ընտրուելով՝ հաւատարմատար էր ընտրուել և իւրի կոչուած աւերակի պաշտպանութեան համար, որ վեճի տակ էր Յարութիւն աղայի և գիւղացիների միջև, և որը տալիս էր Յարութիւն աղային տարէնը մինչև վեց հարիւր ռուբլու արդիւնք: Երկար աշխատանքից լետոյ նա կարողացել էր ցոյց տալ, որ այդ այդ աւերակն արքունական է, հետեւապէս պատկանում է գիւղացիներին: Դրանից

առտակացել էր նրա և Յարութիւն աղայի միջև եղած թշնամութիւնը:

Հասնելով տուն նա վայր առաւ զանազան իրերով լիքը խուրջինը: Կինն և որդիքն ուրախ դիմաւորեցին նրան: Նա ձին քաշեց գոմ, թամբը թուլացրեց, առջևը խոտ դրեց, ապա վերադարձաւ եազղ (ամարանոց) կոչուած սենեակն, ուր արդէն նրա համար սեղան էր պատրաստած: Մարկոսը նստեց սեղան: Կինն և որդիքը շրջապատելով նրան, ուրախ-ուրախ խօսում էին հետն և խուրջինի մէջ եղած իրերը հանում: Իսկ փոքրիկները փաթաթուած էին հօր վզով, համբուրում նրա երեսը, կամ մտնում գիրկը: Հայրը համբուրում էր և բերած նուէրները տալիս էր նրանց:

— Իմս է լաւ, թէ քոնը —, պարծենալով առաջ ամենափոքրից մեծն և ցոյց տուեց իւր կօշիկները:

— Ի հարկէ, իմս. քոնն ինչ է, էնպէս չէ, հայրիկ, իմս նրանից լաւ է —, դառնալով հօրը հարցրեց ամենափոքրը:

— Հա, դառնուկս. քոնը լաւ է —, համբուրելով նրան պատասխանեց հայրը:

— Ձէ, իմս է լաւ. տեսէք, ինչպիսի բաներ ունի. ձերը որ չունի —, մէջ մտաւ երրորդ որդին, որ կլինէր մօտ 8 տարեկան, և վազեց դէպի հայրը:

Ամենափոքրը չուզենալով մեծ եղբորը տեղ

տալ հօր մօտ՝ մտաւ նրա գիրկն և ձեռներն ուղղեց դէպի եղբայրը, որից վայր ընկաւ հօր ձեռի բրդուճը:

— Դէ լաւ, թողէք հալալ հաց ուտէ. բոլորինդ էլ լաւ է —, վրայ բերեց Թաղանը (կինը) —, հիմալ քթիցը կբերեն —, և նեղանալով փոքրիկին վերցրեց հօր գրկից:

Մանուկն այդ զրկանքից սկսեց սաստիկ աղմուկ բարձրացնել և ոտները տափովը տալ:

Երբ մայրը նրա թևերի տակից բռնած պահում էր, և մանուկը ոտերով խփում էր գետնին, և երբ միւսները զուարճանում ու ծիծաղում էին նրա վրայ՝ յանկարծ սենեակի դուռը սաստկութեամբ բացուեց և շնչասպառ ներս ընկաւ նրանց հովիւներից մէկը:

— Մարկոս աացու, շուտ, շուտ —. հազիւ կարողացաւ շնջալ նա, և այլալուած դրութեամբ տեղում մնաց կանգնած:

Հովուի անսպասելի կերպով երևալն և յուզուած դրութիւնը վալրկենաբար շփոթեցրեց նրանց:

— Ի՞նչ է, ի՞նչ է եղել —, աչքերը նրա երեսին չօւելով հարցրեց Մարկոսը:

— Յարութիւն աղան, Յարութիւն աղան —, հազիւ կարողացաւ արտասանել հովիւը:

— Յարութիւն աղան... ի՞նչ կայ —, աւելի շփոթուած հարցրեց Մարկոսն և վեր և կացաւ սեղանից:

— Յարութիւն աղան գնաց գլխաւ բերելու: — Ի՞նչ է եղել արդեօք, Աստուած ջան—, վախեցած խօսեց Թազանն և աջ ձեռով խփեց ծընկանը:

— Ասա տեսնենք ի՞նչ է—, մի վատ բան գուշակելով բարկացաւ հովուի վրայ Մարկոսը:

— Չգիտենք, գիշերը Խիւղամի ոչխարն է ընկել չայիրն, ի՞նչ է...

— Ի՞նչ ոչխար, ի՞նչ չայիր—, համարեա սարսափած վրայ տուեց Մարկոսն և մի անհանգիստ շարժում գործեց:

— Առաւօտ եկաւ, մեզ վրայ ձգեց:

— Վճռւյ, քողանամ ես, ի՞նչ է ասում—, յուսահատ ձայնով ճչաց Թազանն և այս անգամ երկու ձեռներով ամուր խփեց ծնկներին:

Որդիքն այդ անսպասելի բռնիք և աղմուկից քարացած մնացին իրենց տեղերում կանգնած և հայեացքներն լառեցին ծնողների այլալուծած երեսներին:

— Տօ, պարզ խօսիր տեսնինք ի՞նչ ես ասում:

— Առաւօտ ոչխարը տարանք չայրի վերեւի առուն ջրելու էդ ժամանակ Սահակի ու Օսմանի հետ եկաւ Յարութիւն աղան, թէ չայիրն արածացրել էք:

— Է, լետո՞յ:

— Մենք զարմացած մնացինք. ասացինք ի՞նչ չայիր, ի՞նչ բան: Նա ասաց, որ սարի գլխից Սա-

հակի ու Օսմանի հետ տեսել է մեր ոչխարը չայրից դուրս գալիս: Մեզ քաշեց տարաւ չայիրը:

— Է, ի՞նչ:

— Ի՞նչ պիտի լինի. չայրի մէջ ոչխար էր ձրգած:

— Ո՞վ է ձգել. Խիւղամի...

— Սաքօն ու Եադօն էդ ժամանակ ասացին, որ առաւօտ վաղ տեսել են Խիւղամի ոչխարը չայրից դուրս գալիս:

Մարկոսը հասկացաւ, թէ բանն ինչու՞մն է, ձեռը խփեց ճակատին և մնաց լուծ: Նրա լուգմունք յայտնող աչքերն այդ րոպէ արտայայտում էին և մի խորին մտածմունք:

— Կանչեց Խիւղամի հովիւներին—, շարունակեց հովիւը,— նրանք չորս կողմից սկսեցին բղաւել, թէ մեր ոչխարն է եղել. իրենք տեսել են:

— Վճռւյ. էս ի՞նչ բռն էր—, նորից խօսեց Թազանն և հառաչեց:

— Էլ ժամանակ չկայ. շո՛ւտ, շո՛ւտ, ձին դուրս քաշիր—, մտածմունքից սթափուելով շտապեցրեց հովուին Մարկոսն և դուրս ելաւ:

Հովիւը ձին դուրս քաշեց, և Մարկոսը շտապեց դէպի սարը:

Չնայելով, որ կենդանին երկար ճանապարհից եկած յոգնել էր և քրտնել՝ սակայն Մարկոսը մշտնադիմ և ասպանդակներով ամուր-ամուր խփում էր նրա կողքերին ու փորին և սաստիկ արագութեամբ քշում էր դէպի իւր հօտը: Կենդանին տըն-

քալով և Փշշալով բարձրանում էր զառիվերով և ծածկւում քրտնքի ու փրփուրի մէջ: Մարկոսը հազիւ էր մօտեցել իւր հօտին, և հովիւներին հարցրել դործի էութիւնն՝ երբ տեսաւ, որ հեռուից սարի ստորոտով ահագին աղմուկով, վրալի զէնքերը չըխկըխկացնելով, մտրակները ձեռներէ մէջ խաղացնելով, ճանապարհի հետ երկու-երկու շարուած, ինչպէս զօրք, բարձրանում էր մի խումբ ձիաւոր: Այդ խումբը հեռուից կարծես ենիչարիների մի հրոսակ կամ աւաղակային մի խմբակ լինէր, որ լցուած աւերի և ապականութեան կրքով, գնում էր մի տեղ թալան անելու, կամ վերադառնում էր կողոպուտի և սպանման տեղից: Առջևից գնում էին տանուտէր Մատոսն ու Յարութիւն աղան, որոնք իրար աշանջի շուտ-շուտ փսփսում էին, նրանց ետևից գրազէր Ղազարն ու եսասառլ Յոսէփն, ապա Սատանայ Մաթոսն ու Թովալ Թաթոսը—հասկացողներն. ամենից վերջը Սահակը, որ զբաղուած էր միայն իւր ծուռոտ ձիուն մտրակելով:

Հասաւ այդ զօրքը, որի անդամներից իւրաքանչիւրն իւր պաշտօնն ունէր կատարելու և շարժուեց դէպի իւր արշաւատեղը: Զօրքի հետ միացաւ և Օսմանը, որ առաւօտից մնացել էր Խիւղամի վրանում և կանդնած սպասում էր նրա գալուստի:

VIII.

Էս ինչ են արել հովիւներդ. գիշերը մարդու չայիրը ողջ արածացրել, փճացրել են. ամօթ չէ—, բարձր ձայնով խօսեց տանուտէր Մատոսը, մի աչքով Մարկոսին նայելով, միւս—կոյր աչքը ծածկած ունենալով ծուռ՝ քթին դրած տափակ փափաղի տակ:

—Իմ հովիւները գիշերն էստեղ ոչխար են բերել: Ո՛վ է ասում:

—Ա՛յ, տեսնողներն են ասում—, վրայ բերեց տանուտէր Մատոսը, ցոյց տալով Խիւղամի հովիւներին, Օսմանին ու Սահակին:

—Ի՞նչ են տեսել, թող ասեն:

—Ա՛յ, վկաներ, առաջ եկէք. ինչպէս տեսաք:

—Է՛ն—, վկայեց Օսմանը,—որ երբ էսօր առաւօտ ես, Յարութիւն աղան և Սահակը գնում էինք դէպի Սուլտա՝ ճանապարհից տեսանք, որ մի ինչ որ սպիտակ բան դուրս է գալիս չայիրի միջից. ձիելս քշեցինք և տեսանք, որ Մարկոսի հովիւներն են, Մարկոսի ոչխարը:

—Ի՞նչն ու քո Աստուածդ, հա՛, որ մեր ոչխարն էր. ինչու ես սուտ խօսում. Խիւղամի ոչխարը չէր, որ եկաք մեր գլխին կանգնեցիք—, տաք տաք խօսեց Մարկոսի հովիւներից մէկը:

—Ձէնդ կտրիր, հարամգաղա. քեզ ո՞վ իրաւունք տուեց խօսելու—, մտրակն օդում շարժելով նրա վրայ լարձակուեցաւ տանուտէր Մատոսը: Հովիւը լռեց և վախեցած ետ քաշուեց:

— Դ՞հա ինչպէս տեսար—, հարցրեց տանու-
տէրը Մատոսը դէպի Սահակը դառնալով:

— Սահակը վայրկենաբար չփոթուեց. շփոթուեց,
որովհետեւ մինչև առաւօտեան պատմութիւնը հաս-
նելը՝ գիշերուայ պատմութիւնը կար, որ արել էր
Օսմանն, և որն իւր վկայութեան ժամանակ կուլ
տուեց. «ինչո՞ւ չասաց», մտածեց նա և յիշեց Յա-
րութիւն աղայի խօսքը, որ Վաչեան գնալիս ասել
էր, «ինչ որ կասի Օսմանը, դու էլ էն ասա»: Մտքի
շփոթութիւնից նրա լեզուն կարծես կապուեցաւ,
և նա անկարող եղաւ իսկոյն պատասխանել: Յա-
րութիւն աղան նկատելով այդ, իսկոյն մօտեցաւ
նրան և ականջին ասաց.

— Խօսիր, էլ ի՞նչ ես լռել. Օսմանն ինչ որ
ասաց՝ դու էլ էն ասա...

— Ի՞նչպէս տեսար, ասա—, Յարութիւն աղա-
յի փափսոցն ընդհատեց տանուտէր Մատոսն, այս
անգամ ձեռն իշխանաբար բարձրացնելով:

— Ի՞նչպէս Օսմանն ասաց, էնպէս էլ ես տե-
սայ—, պատասխանեց Սահակը:

— Ուրիշ էլ ո՞վ կայ վկայ, թող գայ առաջ—,
ձայնեց տանուտէր Մատոսը:

— Ել ո՞ւմ ես կանչում. Խիւղամի հովիւներէն,
որ վնաս անողն են. նրանք վկայ լինիլ չեն
կարող—, համբերութիւնը հատած խօսեց Մար-
կոսը:

— Քեզ ո՞վ է պրիստաւ դրել իմ գլխին, որ
խրատ ես տալիս—, բարկութեամբ ասաց տանու-

տէր Մատոսն, և վզի շղթան շարժելով միակ աչ-
քը պշտեց նրա երեսին:

Այդ ժամանակ Խիւղամի հովիւները շարժուե-
ցին առաջ:

— Դուք ի՞նչպէս տեսաք, ասացէք:

— Տեսանք—, միաբերան աղաղակեցին Խիւ-
ղամի հովիւները,—որ առաւօտ վաղ սրանք—, ցոյց
տալով Մարկոսի հովիւներին,—ոչխարը հանում էին
չայիրի միջից:

Այդ ժամանակ սարի ետեւից երևեցաւ Խիւղամը,
որ հանդարտ կերպով գալիս էր դէպի իւր հօտը:
Նա տեսնելով զօրքի պատերազմը, մօտեցաւ
նրան և հարցրեց.— ի՞նչ է, ի՞նչ խաբար է:

— Հա, լաւ որ եկար. ի՞նչ խաբար—, նրան
պատասխանեց Յարութիւն աղան,—գիշերը ոչխա-
րը ձգել են չայիրս, ուտեցրել են, վնասը ձգում
քեզ վրայ. իբրեւ թէ քո հովիւներդ են արել:

— Ի՞նչ, իմ հովիւներս, կհաստատէք, թէ չէ
գիտէք ես ձեզ ինչ կանեմ—, աչքերը Մարկոսի
հովիւների երեսներին չռելով խօսեց Խիւղամը,—
որ վնասն ինքներդ անէք և ինձ վրայ ձգէք:

Մի քանի վայրկեան բոլորը լռեցին:

Մարկոսը բոլորովին մենակ մնացած այդ զօր-
քի մէջ՝ կատաղութիւնից և բարկութիւնից չէր ի-
մանում ի՞նչ անի, նա տեսնում էր, որ այդ սար-
քովի դործի դէմ ոչ մի գէնք չունէր կուռելու:
Նա նայեց Սահակի երեսին, որ գլուխը կախած
կանգնած էր Յարութիւն աղայի մօտ, և խօսեց.

— Այ մարդիկ, երկնքում Աստուած կայ, գետնի երեսին խիղճ կայ, ինչո՞ւ էք սուտ խօսում, ինչո՞ւ ճշմարիտը չէք ասում. մի ամաչեցէք, մի ամաչեցէք, է... Ախար իմ հովիւներս երբ են ոչ խար բերել էդտեղ:

— Դու թնչ ես իմանում, թէ չեն բերել. դու գիշերն էստեղ էիր, գիտես. հովիւներդ արել են և քեզանից վախճնալով սուտ են խօսում —, նրան պատասխանեց տանուտէր Մատոսը:

— Աստուած վկայ, գլխւո՞ւ աղա, իրեն խիղճամի ոչխարն էր, խիղճամի հովիւներն էին. նրանք են գիշերով ծածուկ արել, որ յանցանքն առաւօտ մեզ վրայ ձգեն. և առաւօտ դիտմամբ բերին մեր մօտով անցկացրին, որ...

— Զէնդ, զուռումսաղ —, չթողնելով շարունակելու նրա վրայ գոռաց տանուտէր Մատոսը, — քեզ ո՞վ է խօսեցնում, և դու թնչպէս ես համարձակում իմ դէմ էդպէս խօսիլ —, և կատաղի հայեացքով նրան նայելով մտրակի մի քանի սաստիկ հարուածներ հասցրեց նրա թիկունքին ու վզին:

Հովիւը մտրակի ծանր հարուածներից ատամները կրճտացրեց և թիկունքը մի քանի անգամ բարձր ու ցածր արեց ու հեռացաւ:

— Ե՛յ, գիտէ՞ք, ես ձեզ ցոյց կտամ... վկայ եղիր գլխւո՞ւ աղա —, կողքից գոռաց խիղճամը, — տղէ՛ք:

Նրա խօսքերի և շարժումների վրայ քիւրդ հովիւները մահակները բարձրացրին:

— Ե՛յ, է՛յ, դաճանակներդ, դաճանակներդ —, բղաւեց Մարկոսն և առաջ շարժուեց. — էս բոլոր տո՛ւն քանդող, աւազակ, քեզանից է, ա՛յ, որ խալխի տները քանդելով ման ես գալիս, հիմա՛յ էլ իմ տունս ես ուզում քանդել. զո՞ղ, մարդասպան, անհաւատ... —

— Ասո՞ւ դաճանակներն ետ քաշեն. զակոնով մեզ վատ կլինի —, ցածր նկատեց գրագիր Ղազարը տանուտէր Մատոսի ականջին:

— Գլխւո՞ւ աղա, վկայ եղիր, որ էս մարդն ինձ քո ներկայութեամբ անպատուում է. խնդրեմ էդ էլ մտցնես ակտի մէջ:

— Դաճանակներդ, դաճանակներդ, թնչ էք անում —, քիւրդ հովիւներին նայելով հրամայեց տանուտէր Մատոսն և ապա դարձաւ դէպի Յարութիւն աղան. — ինչ էիր ասում:

— Կասեմ, ո՞չ ակտից կվախենամ և ոչ գլխալից, թող մտցնէ. զո՞ղ ես, աւազակ ես, մարդասպան ես... — կատաղութեամբ վրայ տուեց Մարկոսը:

— Ե՛յ, է՛յ, — ձայնեց տանուտէրն և ուզում էր շարունակել, բայց Մարկոսը նրան հերթ չտուեց.

— Գրեցէ՛ք, ամեն բան գրեցէ՛ք. ես ոչնչից չեմ վախենում. դատաստան կայ, օրէնք կայ. գրեցէ՛ք...

Յարութիւն աղան Մատոսի փեշիցը քաշեց և աչքով արեց, որ գնան դէպի չայիրը. ճանուտէր Մատոսը հասկացաւ, որ այդ նշանակում է. «բա»

նիդ նայիր, գործ սկսիր», հասկացողներին ասաց. —
էսքանը հերիք է ապացուցանելու համար. եկէք
վնասը տեսէք:

— Գնացէք, տեսէք. մէկ էլ էդ բանատինե-
րըն են մարդ, չէ՞. ես ուրիշ բանատի բերել
կրտամ. իրեն կորցրածի պէս նրանց ետևից խօսեց
Մարկոսը:

Բանիատիները լէշ կերած շան նման ձիերի
բաշին նայեցին և համարձակութիւն չունեցան
խօսելու: Նրանք իրենց հրամանատարի ետևից մը-
տան չայիրը, սկսեցին ձիերն աջից ձախ, ձախից
աջ քշել և խօսիլ:

— Էստեղ հազար հինգ հարիւր մանէթի վը-
նաս կայ —, ասաց Թոփալ Թաթոսը:

— Ի՞նչ ես ասում. գլխիդ հետ ես խաղում,
ինչ է. էստեղ երկու հազար հինգ հարիւր մանէ-
թի վնաս կայ. ի՞նչ հազար հինգ հարիւր մանէթ —,
ձին դէպի միւս կողմը քշելով վրայ բերեց Սատա-
նայ Մաթոսը:

— Ձէ, երկու հազար հինգ հարիւր չէ՞ համա
երկու հազարից քիչ աւել կըլինի —, իւր կողմից
աւելացրեց տանուտէր Մատոսը:

— Դու ի՞նչ ես ասում, Թաթոս —, հարցրեց
նրան Սատանայ Մաթոսը:

— Հազար հինգ հարիւր մանէթ, դո՛ւ —, Սա-
տանայ Մաթոսին հարցրեց Թոփալ Թաթոսը:

— Ես էլ ասում եմ երկու հազար հինգ հա-
րիւր:

— Դէ, վերջացրէք. մի կերպ միացրէք —, խօ-
սեց տանուտէր Մատոսը:

— Երկու հազար. լաւ գին դրի՞ —, Թոփալ Թա-
թոսին հարցրեց Սատանայ Մաթոսը, — համաձայն ես:

— Լաւ է, համաձայն եմ —, պատասխանեց
Թոփալ Թաթոսը:

— Երկու հազար. հա, աւել էլ չարժէ. նկա-
տեց տանուտէր Մատոսը:

— Երկու հազարից աւել չկայ, Յարութիւն
աղա, մենք աւել չենք կարող —, միասին խօսեցին
հասկացողները:

— Լաւ —, ուսերը վեր թռթռելով վրայ բե-
րեց Յարութիւն աղան, — ինչպէս արդարութիւնն
է, ինչպէս ձեր խիղճն է:

— Ղազար —, հրամայեց տանուտէր Մատո-
սըն —, ինչպէս ցոյց տուին վկաներն և որոշեցին
բանիատիներն՝ ակտը գրիր. ահա, փէչատն էլ առ
խփիր, հազրէր:

Մինչդեռ Ղազարը գրում էր ակտը, հովիւ-
ները գառի մսից խորուած էին պատրաստում, շամ-
փուրներով իրար կողքի դարսում: Իսկ Հաճօն խառ-
նում էր եռ եկող մսով լիքը կաթնան:

Ինը հոգուց բաղկացած զօրքը փռուեց վրանի
առջև և սկսեց ախորժակով ուտել գառան միսն
և կոնծել կարմիր գինին:

Ինչպէս որ խոսեցինք, այնպէս էլ խոսեցին
այնպէս որ խոսեցինք, այնպէս էլ խոսեցին
այնպէս որ խոսեցինք, այնպէս էլ խոսեցին

IX.

Անարդար իրողութեան դառն տպաւորութեան տակ կատաղի բարկութեամբ լցուած Մարկոսը վերադարձաւ գիւղ: Այն միաքը, որ նա կարող էր զրկուիլ, և շատ հաւանական է, որ զրկուէր, իւր ունեցածից՝ սպանիչ ներգործութիւն էր ունենում նրա սրտի և ուղեղի վրայ: Եւ քանի գնում նրա դիտակցութեան մէջ աւելի էր հաստատուում այն հաւատը, որ այդ փորձանքից ազատուելու ոչ մի հնար չկար, քանի որ ոչոք չէր տեսել, որ վկայ լինէր, Իսկ ուրիշին կանչել վկայ, կամ ճիշտն ասած, վարձել սուտ վկայ՝ անյուսալի էր: Անյուսալի էր, որովհետեւ արդէն յարմար ժամանակն անց էր կացել, բացի դրանից, ով որ յանձն առնէր՝ կարող էր փոխուիլ, որովհետեւ մի կողմից Յարութիւն աղայի երկիւղը կար, որ ամենի վրայ սարսափ էր ազդել, միւս կողմից ամենքն էլ վախենում էին ապագայից, երկրորդ Յարութիւն աղան կարող էր փողով գնել վկային, կարող էր վրականերով, մինչև իսկ փողի ուժով սուտ վկաներով մերկացնել իւր վկային, և երրորդ՝ այդ կոչուած վկային Յարութիւն աղան երգուեցնել կտար, որ պիտի մտքի հետ Մարկոսը չէր կարող հաշտուել, որ վկան երգմամբ սուտ վկայութիւն տար: և, քի վերջոյ եթէ այդ վերջին մտքի հետ էլ հաշտուէր, այդ վկան արդեօք յանձն կառնէր երգմամբ սուտ վկայութիւն տալ, համոզուած լինելով, որ Յարութիւն աղան այդ կարող էր բաց անել:

Զիւնց իջնելով մտաւ եաղլըղը, գլուխը դրեց աջ ձեռի դաստակին և պղտոր հայեացքով սկսեց նայել չորս կողմը: Չնայելով, որ նա ամբողջ օրը ոչինչ չէր կերել, բայց և այնպէս պատահած դէպքը կապել էր նրա ախորժակը:

Սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ Թաղանը: Նա տխուր հայեացքով նայեց ամուսնու երեսին և հարցրեց. — Բնչ էր եղել, Բնչպէս վերջացաւ:

Մարկոսը նոյն պղտորութեամբ հայեացքով նայեց նրա երեսին, մի վայրկեան ուզեց բարկութեամբ խօսել կնոջ հետ, բայց լուեց և ոչինչ չպատասխանեց:

— Հա, ինչպէս վերջացաւ. Բնչ արիւր տխուր էս —, այդ լուութիւնից աւելի հետաքրքրուած նորից հարցրեց Թաղանը:

— Ինչո՞ւ պիտի տխուր լինիմ —, յանկարծ բռնկեց Մարկոսը, որի բարձր ձայնից Թաղանը գրեթէ վախեցաւ, — ես տղամարդ եմ. ինչ էլ որ լինի, ես իմ գլուխս ցածացնող չեմ: Ես նրան ցոյց կտամ, ես աշխարհ կհաւաքեմ, բոլորին դատարան կտանեմ. կապացուցանեմ, թէ նա Բնչ մարդ է. բոլոր աւագակութիւնն էնտեղ կպատմեմ, մինչև թագաւորի մօտ կգնամ: Ես գլխիս էլ փափաղ չեմ ծածկի, թէ նրանից վրէժ չառնեմ. Սիբիր կը գնամ, բայց նրա էլ լէշը կփռեմ. ինձ Մարկոսեն ասում... անաստուած, անհոգի, Խիւղամի ոչխարը դիտմամբ իւր չալիքը ձգել տայ, իմ վրայ դնի:

էս էն ժամանակները չեն, որ սարերն ընկած սպանէր ու թալանէր... օրէնք կայ, դատաստան կայ: Սպասիր... — Ասել է վնասը մեզ վրայ են ձգում... վոյ, էս քնչ բան էր, աստուած ջան —, ծնկանը խփելով խօսեց Թազանն —, ախր ոչոք չէ տեսել, ոչոքի չը-հարցրիր:

— Էն չղում ո՞վ պիտի տեսնէր... ամեն տեղ ճանապարհին, ցածր կեցած թուշերին, բոլորին հարցրի. ոչոք ոչինչ բանից խաբար չէ. անհոգին էնպէս ճարպիկ է սարքել թակարդը:

— Եղպէս հօ չի լինի. մի ճար պիտի անէր, թէ չէ. քանի դեռ ուշ չէ, քանի դեռ բան չէ եղել:

— Ի՞նչ ճար. աստ տեսնիմ:

— Տես, էլի հարցրո՞ւ. թէ չեղաւ, քնչ պիտի անես, մէկ... կիսատ խօսեց կինն և լռեց:

— Ի՞նչ անեմ —, զայլացած հարցրեց Մարկոսը:

— Գնա մօտը, ասա, աղաչիր...

— Ի՞նչ —, այս անգամ բարձր ձայնով նրա վը-րայ բղաւեց Մարկոսը, — գնամ, աղաչեմ...

— Ապա քնչ ճար կայ, ինչ պիտի անես. մի նա-խիր մանր ու խոշորի տէր ես, հօ քաղցած չէ՞ս թողնի —, խեղճացած խօսեց կինը:

— Դու գիտես, ինչ ես ասում. ես գնամ նրա մօտ խնդրեմ, աղաչեմ. . . որ նախդճայ —, դէպի կի-նը շարժուելով գոռաց Մարկոսը:

— Վոյ, տունդ ու տեղդ բրիշակ լինի, Յա-րութիւն աղա, վոյ:

— Եդ ես չեմ անի, իմ նամուսիս չեմ ուտեց-նի:

Թազանը Մարկոսի բարկութեանը դիմադրող պատասխան չգտնելով՝ ասաց.

— Ապա քնչ ճար ունիս, այ մարդ:

— Որ բոլորդ էլ քաղցած կոտորուելու լինիք չեմ անի —, աչքերը նրա երեսին չուելով ճչաց Մարկոսն, — երեք տարի է, ես նրա դուռը ոտ չեմ կոխել, հիմայ էլ չեմ կոխի:

Թազանն անգոհ մնացած ամուսնու խօսքե-րից և նրանից վախեցած ալ ևս չուզեց այդ առ-թիւ խօսիլ: Նրա մտքովն այդ ըստէ անցկացաւ, որ ինքն անձամբ գնայ Յարութիւն աղայի մօտ. գուցէ այդ բանն աւելի նշանակութիւն ունենար և չարժէր Յարութիւն աղայի կարեկցութիւնը: Այդ միտքը նա ուզում էր լայտնել ամուսնուն, բայց քաջուեց, մտածելով, որ Մարկոսը չհամա-ձայնելուց զատ՝ ծանր խօսքեր կասէր, ուստի լռեց:

Նրանց մէջ կարճ ժամանակ լռութիւն տիրեց:

— Ա՛խ խ... քնչ ասեմ քեզ, — լռութիւնն ընդ-հատեց կինը, — բոլոր մեղքը քոնն է. էն գլխից ասացի, թէ դրա հետ մի ընկնիր թող, ինչո՞ւ է հարկաւոր գիւղի գործը, որ առաջ ես ընկել. ինքդ մալ չունիս, բան չունիս... չլսեցիր: Ո՞վ իմացաւ քո լաւութիւնդ. էն ամենալաւ բարեկամդ, որ խլածդ աւերակից լաւ արտ ստացաւ, քեզ քնչ

գուտ տուեց: Մի գատարկ շնորհակալութիւն էլ չարին: Հէնց մէկը Սահակն. աչքը բռնէ, ահագին հոդ ստացաւ:

— Սահակը —, քիչ հանգստանալով մտածումն էր մէջ ընկղմած կրկնեց Մարկոսը: Նրա համար անհասկանալի էր այն բանը, թէ ինչպէս Սահակը սուտ վկայ էր հանդիսացել, ինչ գաղտնիք կար այդտեղ... «խափած կըլինի կամ կաշառած», մտածեց նա և մտքումը դրեց, որ Սահակին տեսնի, խօսի և համոզի, որ ետ կենայ: «Բայց կարո՞ղ է: Յարութիւն աղայի ճանկից բան ազատել»...

— Ես որ քեզ ասում էի, թէ գիւղացիների համար էդ շան հետ գէշուլաւ մի լինիր, օձի ձագ է, մէկ օր կվնասէ՝ չլսեցիր: Տես, հիմայ ասածս կատարուեցաւ:

— Ինչ ես խօսում. ուրեմն ես իմ մարդկութիւնից իջնէի, կատու դառնայի, հա՛:

— Լա՛ւ. դէ հիմայ գիւղացիներդ թող գան օգնեն —, առաջ տարաւ Թադանը. — բայց տես, մէկի էլ պէտքն է. կմտածեն, թէ իրենց պատճառով է օջաղդ մարում...

— Մարկոսը նայեց կնոջ երեսին, և համոզուելով նրա ասածի ճշմարտութեանը՝ լռեց:

— Հէնց քո ամենալաւ բարեկամներդ, որ գովում էին քեզ. չեմ տեսնում, գալիս են... իրենք լաւ-լաւ տեղեր ստացան, վերջը կուժը քո գլխիդ կոտրուեց —, սիրտը քաշելով խօսեց Թադանը:

Մարկոսն արդէն ուշադրութիւն չէր դարձ-

նում կնոջ ասածին, նորից խորասուզուել էր մըտածումների մէջ և մտածում էր մի կերպ տեսնել Սահակին, խօսիլ, համոզել, մինչև իսկ կաշառել, որ ճշմարտութիւնն ասի, ետ կենայ այդ բանից և իրեն ազատի փորձանքից: «Այդ զգուշ և ծածուկ է անելու», քթի տակ մըմռաց նա:

Իսկ Թադանն այդ ժամանակ մտածում էր, որ իւր ամուսինը Յարութիւն աղայի մօտ գնալու չէ. ուրեմն ինքն ինչպէս անի, ինչ ժամանակ գնայ, որ կարողանայ նրան տեսնել, խօսիլ նրա հետ, խնդրել նրան: Այդ մասին դեռ վերջնական որոշում չանելով դարձաւ ամուսնուն.

— Այ մարդ, քեզ ասում եմ մէկ գնա՛, խօսի՛ր... գուցէ կարողանաս մի բան անել... Ինչ կըլինի:

— Ես քեզ ասում եմ, որ էդ բանն անողը չեմ —, բղաւեց Մարկոսը:

— Գնա՛, եթէ չվերջացրեց՝ մի քանի մանէ-թով...

— Տէ՛ր Աստուած —, աչքերը նրա երեսին ուրերելով մըմռաց Մարկոսը:

— Ինչ կլինի. լա՛ւ, քեզ համար հօ չես գընում. որդոցդ համար ես գնում. ինչ անենք, գործըն էնպէս է բերել, որ...

— Զէնդ, քաթառ պառաւ. մէկ էլ չլսեմ —, ճչաց նրա վրայ Մարկոսը, — որ գիտենամ, թէ նա մարդ է, խիղճ ունի, չեմ գնալ. դու գիտես, թէ էդ մենակ դու ես իմանում...

Թագանն այդ վերջին նախադասութիւնն իմանալով, լռեց և հաստատապէս որոշեց, որ վաղն և եթ, հիշտեկ երեկոյով անպատճառ գնայ Յարութիւն աղայի մօտ:

X.

Կինն և որդիքը պատրաստուում էին քնելու, երբ Սահակը թոյլտուութիւն ստանալով Յարութիւն աղայից վերադարձաւ տուն: Նրանց հարցերին, թէ ինչքան էր վնասն, ինչպէս վերջացրին, ինչ եղաւ՝ նա շատ կարճ կերպով պատասխանեց: Մինչև այդ րպէ նա իրեն ուրախ էր զգում և ազատ, բայց երբ փոքր ինչ հանգստանալուց յետոյ լուրջ կերպով մտածեց՝ նրան մի տեսակ երկիւղ պատեց: Կարծես այժմ նա վախենում էր քսաննչորս ժամ առաջ իւր ունեցած սրտի գոհունակութեամբ աւելու, պատմելու այն ամենն, ինչ որ տեղի էր ունեցել առաւօտից մինչև գիւղ վերադառնալը: Ինչ էր այդ երկիւղի պատճառը.— ամօթ, թէ լանցանք, նա չէր հասկանում:

Կամենալով վերջ տալ իրեն վրայ ճնշում գործող նրանց տուած հարցերին՝ նա տեղեկութիւն հարցրեց որդուց, թէ ինչ էր արել այդ օրը:

Որդին կարճ կերպով իմացրեց, որ հերկի կէսը ցանել է, կէսն էլ վաղն է ցանելու և երրորդ օրը մնացած մի սոմառ գարին տանելու է ջրաղաց:

Դիշերից բաւականին անցել էր, որ նրանք պառկեցին քնելու:

Չնայելով երկար ժամանակի յագնածութեան, սակայն Սահակի քունը չէր տանում. նա երբեմն շուռումուռ էր գալիս տեղաշորի մէջ, երբեմն էլ հանդարտ պառկած նայում էր բաց երթկին, որտեղից լոյս չէր ներս ընկնում: Տան մէջ տիրում էր խաղաղութիւն. միայն լսում էր նրա կնոջ և որդոց միակերպ, հանդարտ շնչառութիւնը:

Սահակի մտքում նորից յարուցուեց այն կասկածը, որ ծնուել էր տանուտէր Մատոսի դռանը. «արդեօք Մարկոսի ոչխարն էր», և որքան էլ այժմ ուզենար այդ կասկածն իւր ուղեղից հեռացնել՝ չէր աջողում, նրան ակամայ մտածել էր տալիս: Բայց այն մեծ օգնութիւնն և բարութիւնը, որ հասցրել էր նրան Յարութիւն աղան՝ փոքր ինչ թեթեւութիւն էր տալիս նրան. սակայն դա երկար չէր տևում. իւր կատարած գործի մասին նրա մէջ ծագած կասկածը նորից տիրում էր նրան և աւելի ու աւելի անհանգստութիւն էր պատճառում:

— Ե՛հ —, շշնջաց նա և կարծես ուզում էր տոել. «այս ինչ է ինձ տանջում, և ինչո՞ւ...»

Օրօրոցում պառկած երեխան լաց եղաւ: Մայրը նրա ձայնից զարթեց և ձեռք վերմակի տակից երկարացնելով՝ սկսեց օրօրել: Երեխայի լացի հետ բակում արձագանգ տուեց աքաղաղի ձայնը: Երեխայի լացն, աքաղաղի ձայնը, տան անդամների շնչառութիւն, այդ բոլորը պատկերացրին Սահա-

կի առջև իւր օջաղն. այն օջաղը, որ տասը տարուց աւել էր, այսինքն Յարութիւն աղայի այդ գիւղը ոտ դրած օրից, ինչ թշուառութեան էր մատնուել և քանի գնում գէպի վատն էր ընթանում, որից դուրս գալու ոչ մի աջողութիւն չէր երեւում... և ահա... լանկարծ բաղդն ազատում է նրան պարտքից, նեղութիւնից, խոստանում է նրան նախկին լաւ, նախանձելի վիճակը. բայց... — Էէ —, նորից շնչաց նա և նորից նրա մտքերը խառնուեցին և ինչ որ ներքին մրկուող բան խանգարեց նրա մէջ առաջացած խաղաղութիւնը: Նա նորից սկսեց մտածել օրուայ գէպքի մասին: Աքաղաղն երկրորդ անգամ կանչեց. այս անգամ նրա ձայնն աւելի բարձր արձագանգ տուեց սրահում. նրա ձայնից էր, թէ ինչից, քիչ առաջ քրնած մանուկը զարթեց և նորից սկսեց լալ:

Սալվին այս անգամ վերկացաւ տեղից, քնատ լեռնուց օրօրոցի կամարին և ծիծր դրեց երեխայի բերանը: Երեխան սկսեց ծիծր ճաճալացնել:

Սալվիի արթուն լինելն և երեխայի ծծելու ճրպաւորը Սահակին մի տեսակ անախորժութիւն էին պատճառում: Նա ուզում էր, որ իւր չորս կողմում տիրէր խոր, ամենախոր լռութիւն և մենակութիւն:

Սալվին երեխային ծիծ տալուց լետոյ սկսեց նրան օրօրել և մեղամողձոտ ձայնով նանիկ ասել: Այդ թախծալի նանիկը Սահակին ինչ որ մեղմ, անհասկանալի վիշտ էր պատճառում: Դա կարծես մի

մօտալուտ ծանր թշուառութեան նախերգանք էր, որ հանդարտ կերպով ողբում էր օճաղի հետզհետէ մարումը:

Սահակը ցածր կերպով հառաչեց և դարձաւ միւս կողքի վրայ:

— Դեռ չես քնել:

— Չէ, քունս չէ տանում —, ցածր ձայնով պատասխանեց Սահակն և գլուխը կոխեց վերմակի տակ: Նա այնուհետև բոլորովին անշարժ մնաց:

Առաւօտը մօռեանում էր: Վաղօրդեան լոյսը երթկից կամաց-կամաց փարատում էր տան մէջ տիրող խաւարը:

— Ո՛ւհ, ո՛ւհ, Սալվի...

— Հա-հա, ինչ եղաւ —, քնից վեր թռչելով գէպի Սահակը դարձաւ Սալվին:

— Ս՛հ, դո՛ւ Կ... ո՛րտեղ եմ —, քնաթաթախ խօսեց Սահակն և բարձրացնելով գլուխն երկար, բայց ծանր շունչ քաշեց:

— Ի՛նչ է, ի՛նչ եղաւ երազիդ մէջ վախեցա՞ր, ի՛նչ է:

— Հա. օհ-օհ... ի՛նչ վատ երազ էր. օհ, ի՛նչ սարսափելի, հիմալ էլ դեռ...

— Յիսո՛ւս ու Քրիստո՛ս —, խաչակնքեց Սալվին և կողքում դրած շերեփով լի ջուրը վերցրեց. — խմիր, խմիր վախդ անցնի:

— Իբրեւ թէ օրը նոր էր ճաշ դառել —, ջուրը խմելուց լետոյ պատմեց Սահակը, — մի փոքրիկ ամպ եկաւ մեր գիւղի գլխին կանգնեց. էդ ամպն

սկսեց սեւանալ ու մեծանալ. էնքան մեծացաւ, էնքան սեւացաւ, որ իւր մեծ փեշերով մեր ամբողջ գիւղը ծածկեց, մթնացրեց. յետոյ մի սարսափելի գոռգոռոց բարձրացաւ, էնպէս որ կասես ափանջիդ տակ թնդանոթներ էին արձակում. էդ գոռոցի հետ էնպիսի մի անձրև եկաւ, որ մի չքտեսնուած հեղեղ ելաւ, մեր բոլոր գիւղը ջրի մէջ կորաւ. ձուկն էնպէս էր խաղում *), որ մարդու աչքերը ծակծկում էր. հեղեղն էլ էնպէս պղտոր էր, որ կարծես կուպը լինէր, և մարդիկ նրա մէջ սեւացել ածուխ էին դարձել:

— Յիսուս ու Քրիստոս —, նորից խաչակնքեց Սալվին:

— Էդ ժամանակ նրանք երեսները դարձրին դէպի արևելք և տեսան, մեռնիմ սուրբ զօրութեանը, Մայրիկ Մայր-Ստողածածնայ պատկերը:

— Մեռնիմ նրա զօրութեանը —, աչքերը վերև լառելով երկու անգամ խաչակնքեց Սալվին:

— Բոլորը նրա առջև ծունկ չոքեցին, սկսեցին լալ, աղօթել, որ էդ ամպն հեռացնի: Ես երեսս դարձրի դէպի ամպը և տեսայ, որ մի տեղ պատռուել է և լոյսն ընկել է մեր տան վրայ ուրախացայ դրանից և թողի Մայր-Ստողածածնան նայելը... օհ, մէկ էլ լանկարծ...

— Ի՛նչ —, շտապով և երկիւղած վրաբերեց Սալվին և սարսափած ամուսնու ձևերից և դէմքի արտայայտութիւնից նորից խաչակնքեց:

*) Փայլակը փայլատակում:

— Յանկարծ կայծակը խփեց մեր տանը և բոլորը վառուեց... օհ-հ-հ... սիրտս թրթռում է:

— Վա՛յ ի՛նչ պիտի լինի, Աստուած ջան, գէշ երազ է... Խմիր, քիչ էլ ջուր խմիր, վախդ անցնի. երեկոյեան կանչեմ Շարօին, թող վախդ բռնէ... Հիմայ գնա՛ եկեղեցի, Մայր-Ստողածածնայ պատկերի առաջ մի զոյգ մոմ վառիր, աղօթք արա, որ երազդ իբարին կատարի. մեռնեմ նրա սուրբ զօրութեանն —, երկիւղածութեամբ խօսեց Սալվին, վեր կացաւ տեղից և ձայն տուեց իւր դեռ ևս քնած որդիներին:

Սահակն ևս վերկացաւ տեղից, լուռ հագնուեց, երկու բուռ ջուր խփեց երեսին և արխալուղի փեշերով սրբելով ելաւ դուրս: Նա այդ սոսկալի երազի տպաւորութեան տակ դողում էր մինչև ոսկորները: Քիտի տակ «Հայր մերը» մրմուռով և երբեմն-երբեմն երեսը խաչակնքելով նա գնում էր դէպի եկեղեցի. նա գնում էր կարծես մի բանից իբրև փախստական, գնում էր շտապով, և երկիւղած հայեացքով նայում էր չորս կողմը, կարծես վախենում էր, որ իրեն չտեսնէին, չբռնէին: Նա գնում էր իբրև հալածական, որ ինքն էլ չըգիտէր ինչից:

Արճազոյն թանձր մառախուղը գոլորշու նման տարածուել էր գիւղի վրայ. նրա մասնիկները միանալով կազմում էին բարակ փոշու նման մանր կաթիլներ, և սրսկուելով երկրի երեսին առաջացնում էին առաւօտեան շաղ: Խոնավութիւնը զգալի էր:

Գիւղում գեռ ևս տիրում էր խաղաղութիւն։
Հետզհետէ ճոնչալով բացում են միւս գո-
ւները։ Գիւղացիները տներէն գուրս թափուած, որ-
պէս մըջիւնները գուրս են թափուում բներէն, քոր-
ծի են գնում։ Գիւղում տիրում է շարժում, և
երբեմնակի խօսակցութեան ձայներ են լսուում։

Լսուում է գիւղական զանգակների միապա-
ղաղ զօրանքը, որ առաւօտեան թալմ օդի ու խա-
ղաղութեան մէջ տարածւում է հեռու։

Մէքը սկսում է քիչ-քիչ վերանալ, ցրուել
գիւղի վրայից և նրա տեղ սկսում է թափառորդ
լոյսը։ Արևի առաջին ճառագայթները սկսում են
խաղալ երկնքի երեսին, արևելքին մի ախորժելի,
վարդակարմիր գոյն տալով։ Կենդանութիւնը հե-
տըզհետէ տիրում է գիւղում։ Նախիրը լիք ծծե-
րով վերադառնում է իւր գիշերալին փարախից։
Կովն իւր հորդուկին աւետարեր բառաջ արձակե-
լով, ճօճալով և գլուխը դէսուդէն շորորելով
մտնում է գիւղ։

Արևն հետզհետէ բարձրանում է վեր և իւր
առաջին, ոսկենման ճառագայթներով ողջունում է
նոր զարթոյ գիւղին։ Նրա շողերը սկզբից փայլում
են լեռների ձիւնապատ բարձր կատարներին և ա-
պա իջնում ստորոտները։

Կարճ կեանք ունեցող, գէպի վեր ցնդած մա-
ռախուղի տեղ իւր թւերը հետզհետէ տարածում
է գիւղի վրայ թօրոններից միաժամանակ սիւնեակ-
ներով բարձրացող ծուխը, որ սկզբից երթիկներից

նեղուելով, կծիկ-կծիկ դուրս վիժուելով, այնուհե-
տե օղակ-օղակ բարձրանալով և ապա անօրաւա-
լով տարածւում է օդի մէջ։ Նրա կապոյտ քուլա-
ները գիւղի տների անհարթ մակերևոյթի վրայ
շերտեր են կապում։

Արևն իւր առաջին ճառագայթներով չքաց-
նելով արձագոյն թանձր մառախուղն՝ այդ կա-
պոյտ շաղարշանման ամպերի միջից ողջունում է
շէնին և շինականին։ Զառամեալ ծերունին լսելով
եկեղեցու զանգակների ձայնը, կարճ ցուցի օգնու-
թեամբ, տնքտնքալով, դող-դող քալելով շտա-
պում է ժամ, և բաց անելով երկար խսելի գու-
լուլը, քիւլահն ու ցուպը գնում է առջևը, ձեռ-
ներն ուղղում է գէպի վեր, և աղօթում է իւր
հոգու փրկութեան համար։ Նրա ետևից շարը ձը-
գած գլխին, չանթերը հագին գնում է չորացած,
կռացած պառաւն, և եկեղեցում մութ անկիւնում
իւր օթոցի կամ այծի մորթու վրայ կանգնելով
նոյնպէս ձեռներն ուղղում է գէպի վեր։

Եկեղեցում երբեմն-երբեմն լսուում է տէրա-
րի կրծքից լանկարծակի դուրս թռչող, սթափե-
ցնող ձայնն, երբեմն տիրացունների միապաղաղ եր-
գելն և երբեմն մանուկների սուր ձայնով փոխա-
սացութիւնը։ Հին եկեղեցին լուսաւորուած է սե-
ղանի վրայ վառուած մէկը մեծ, երկուսը փոքր
մոմերի աղօտ լոյսով և ճաղերի վերևից կախ արած
կանթեղի արձակած թոյլ ճառագայթներով։

Այդ կէս մթութեան և տաղտուկ լուութեան

մէջ չորս կողմից անընդհատ լսում է մի խուլ և թախծալի մրմունջ, որ լսողի վրայ խորհրդաւոր տպաւորութիւն է թողնում. դա աղօթքի մրմունջն է:

Եկեղեցու դռան մօտի խաչքարը համբուրելով ներս մտաւ Սահակը: Ոտը շէմքից ներս դնելու պէս՝ նրա վրայով մի սարսուռ անցաւ. նա ետ ցնցուեց և երկիւղած աչքերով նայեց սեղանին, Մայր-Աստուածածնայ պատկերին, որի կողքերին դրած երկու աւետարանի և մէջ տեղի խաչի առջև աղօտ լոյսով վառւում էին դեղին մոմերը: Մարմնով քարացած՝ նա լիջեց էլի այն զարհուրելի երազը, որի երկիւղալի տպաւորութիւնը մինչև այդ րոպէ չէր անցել: Հազիւ կարողանալով ներս մըտնել՝ նա քաշուեց մի անկիւն, որտեղից սիւնն արգելում էր նրան սեղանը տեսնելու, գլուխը քարշ ձգեց կրծքին, հալեացքը յառեց գետին: Նա այդ դրութեան մէջ բաւ չէր գտնում ասելու, խօսք չէր գտնում աղօթելու: Իրեն համար անհասկանալի, օտարօտի յուզմունքը, որ խուլ կերպով շարունակ փոթորկւում էր նրա կրծքում, տխրեցնում, թուլացնում, անզօր էր դարձնում նրան: Փոխանակ աղօթքի, փոխանակ երկրպագութեան նրա առաջև շարայարեցին անցեալ գիշերից մինչև այդ րոպէ տեղի ունեցած մտապատկերներն. — ահա Յարութիւն աղալի օգնութիւնն, ահա վկայութիւնը. . «Մէթէ իսկապէս Մարկոսի ոչխարն էր». այս անգամ արդէն կասկածը զօրեղացած, կարծես մարմին առած դուրս թռաւ նրա բերանից:

«Ոյ, ո՛չ, այդ նրանը չէր». կարծես մի խուլ ձայն ասում էր նրա ականջին: Այդ րոպէ այն գիտակցութիւնը, որ նա առանց հաստատ տեսնելու միայն կասկածաւոր վկայ էր եղել՝ սաստիկ ազդեց, մինչև իսկ ընկճեց նրան. այդ ճնշումի մէջ նա ուզում էր որոշել ճշմարտութիւնը, բայց չէր կարողանում: Նա ջղերի թուլութիւնից կուչ գալով չոքեց գետնին: Մտապատկերները շարունակւում էին. ահա նա գնում է Յարութիւն աղալի ետեւից, մարդիկ նրան տեսնում են և կարծես մի անտանելի ատելութեամբ և արհամարհանքով նայում են նրա վրայ և ինքը սաստիկ — սաստիկ ամաչում է... Գնում է նա աչքերը գետնին կամ ձիւլ բաշին յառած, գնում է և... ահա սարը, Խիւղամի հովիւներն, Օսմանը, Յարութիւն աղան, Խիւղամը, կոյր աչքով տանուտէրը, Մարկոսի հովիւները, հասկացողներն, ահա և Մարկոսը, որի աչքերը ինչ որ բանով լցուած նայում են բոլորի և աւելի շատ իւր վրայ. ինչ փալ էր այդ, նա չէր հասկանում, միայն զգում էր, որ այդ նայուածքի մէջ կայ ինչ որ կրակի նման վառւող, հալածող ոյժ, մասամբ աղերսող բան... «էյ, էյ», դեռ կըրկնւում էր նրա ականջում տանուտէր Մատոսի ձայնը, որ գոռում էր մերթ սրա, մերթ նրա վրայ. ահա քիւրդերի մի լէգէօն, ահա և դազանակներ, կռիւ, բղաւոց... — ուհ — ցնցուելով հառաչեց և շարժո ելով իւր տեղում կարծես աշխատեց ա-

ւելի կաշիւ գետնին, խրուիլ նրա մէջ, և երեսը
դրեց հողին: Բայց... ահա երազն, ահա Տիրամօր
պատկերն, ահա կայծակի շառաչն, — ուհ, — նորից
լսելի ձայնով հառաչեց նա և երեսն ամուր սեղ-
մելով հողին՝ աչքերը փակեց: Մի րոպէ, մի րո-
պէ նա կատարելապէս անկարող էր գլուժ իրեն
բարձրանալ տեղից և վեր նայել: — Ձէ, չէ —, անգի-
տակցաբար շշնջաց նա, որ ինքն էլ չէր հասկա-
նում, թէ ինչ «չէեր» էին, որ դուրս էին թըռ-
չում բերանից, և ձեռներով ամուր սեղմեց աչքե-
րն ու երեսը: Կոյր մարմնով կուշ եկած, որ-
պէս դաշտում ընկած մի քար, նա հազիւ էր ե-
րևում սիւնի և պատի կազմած անկիւնի միջև:
— Ձէ, չէ —, էլի դուրս թռաւ նրա բերանից. և նա
թմրութեամբ հանգստացած ձեռներն հեռացրեց
երեսից և ուղղուեց տեղում. նա նայեց չորս կող-
մըն և տեսաւ, որ մնացած մի քանի ծերունիներն
ու պառաւերը համբուրում էին քահանայի կրծքի
վրայ հանգչող աւետարանը: Նա դողդողալով վեր
կացաւ տեղից, յանցաւորի քայլերով մօտեցաւ ե-
րէցփոխի սեղանին մի գոյգ մօմ առաւ, վառեց,
կայրեց պատի միջև եղած մի խաչքարի առջև,
և առանց համբուրելու աւետարանը, միայն ան-
գիտակցաբար խաչակնքելով երեսը՝ փախաւ այդ
իրեն սարսափ ազդող տեղից, որ իւր ողորմածու-
թեան և գթութեան հետ այժմ մի անողորմ և
անգութ բան էր երևում նրան. փախաւ առանց

ետ նայելու: Ինչո՞ւ էր այդպէս թռում նրան, ին-
չո՞ւ էր փախչում, նա այդ չէր հասկանում: Երե-
սի գոյնը գնացած, ոյժն սպառուած, գիտակցու-
թեամբ շփոթուած՝ նա հազիւ հասաւ այլանն և
դռան քարերի վրայ նստեց հանգստանալու:
«Ի՞նչ եղաւ ինձ», մտքի մէջ ինքն իրեն հար-
ցրեց նա և բարձրացնելով գլուխը նայեց եկեղե-
ցուն, որի խոտով բսած — ծածկուած կտուրն և փայ-
տէ խարխուլ կաթուղիկէն հազիւ էին երևում բար-
ձրը պարսպի միջից:

Այդ ժամանակ լուսամուտի վարագոյրի ծայրն
ետ քաշած այլանից Սահակին նայում էր Յարու-
թիւն աղան և դիտում:

Արևն արդէն բաւականին բարձրացել էր. նրա
երկրի երեսին ապրածուած թեք ճառագայթները
խաղում էին ցօղով փայլող խոտերի տերևների հետ
և քաղում էին նրանց վրայի զովարար շաղը:

Նախիրը հաւաքում էր դիւղի արևելեան մա-
սում, իսկ հորթերն՝ արևմտեան: Նախրճիներն ու
հորթճիները սկսեցին կամաց-կամաց շարժել նրանց
դէպի արօտ: Կովերի և հորթերի բառաջը տարած-
ւում էր ամբողջ դիւղում: Նրանք կարծես իրար
մնաս-բարով էին ասում: Արևը հալելով իւր դի-
մացը դտնուած շղարշանման ամպերը, բարձրա-
նում էր վեր: Գիւղում հետզհետէ՝ դանդաղութիւն
և լուրթիւն էր տիրում:

Յարութիւն աղան երկար դիտելուց յետո՞ւ

քթի տակ մի բան միմուռաց և ձայնեց. — Սահակ, ինչո՞ւ ուշտացար. եկ վեր:

Սահակը վեր կենալով տեղից մտաւ այվանը:

XI.

Շաբաթ երեկոյ էր: Գիւղացիները սովորականից աւելի վաղ էին վերադարձել դաշտից:

Յարութիւն աղայի բռնած գործի լուրը տարածուել էր ողջ գիւղում: Ամենքը, թէ մեծ և թէ փոքր խօսում էին դրա մասին:

Երկու սիւնի վրայ հանգչող բաւականին մեծ չարդախի տակ նստել էր տարիքն առած մի գիւղացի: Նա ծուլաբար ծխում էր և կծու ծխի կապոյտ քուլաները բարդ-բարդ թողնում էր օդի մէջ:

— Բարի երեկոյ, Նահապետ տացու, — նրան մօտենալով բարեւեց մի ուրիշ գիւղացի, — ճիշտ է Յարութիւն աղայի տուած գանգատը Մարկոսի վրայ:

— Ապա ինչ է. Աստծու բարին. դրանից ինչ չի կարելի սպասել:

— Ասա մարդու տունը քանդուելու է, էլի:

— Քանդուիլ ասացիր ու պրծանար:

— Ասում են երկու հազար մանէթի գանգատ է տուել, հա՛. էնտեղ թնչկայ, որ ինչ երկու հազար մանէթի վնաս լինի. բոլոր խոտը որ քաղես՝ ութ հարիւր մանէթ հազիւ բռնէ:

— Ինչո՞ւ ութը հարիւր, միտդ չէ՞ մի տարի նախկին աղայի օրով վեց հարիւր մօնէթով քաղեցինք: Դրա տունը քանդուի, տունը, ոնց որ ուրիշներինը քանդեց, ուր է, մարդու ոչխարն ընկած լինի, էլի ասենք մի բան է, մեղք ունի. ոնց որ ես ու դու էդ բանից խաբար չենք, էնպէս էլ նա:

— Սպա ինչպէս. ինձ ասացին...

— Խիւղանի ոչխարն է ընկել —, խօսակցին ընդհատեց Նահապետը:

— Ծ՛ր, ծ՛ր, ծ՛ր —, շրջնաց խօսակցին և գլուխը պտտեցրեց, — քանդեց էս գիւղը, քանդեց:

— Վրէժ ունէր Մարկոսից՝ հանեց... կիւտ խօսեց Նահապետը:

— Էն Իլդիի գործը —, վրայբերեց խօսակցին և՛ ուզում էր շա՛ռնակել, երբ նրան խանդարեցին մօտ եկող ուրիշ երեք գիւղացի:

— Ի՞նչ է, Յարութեան աղայի տուած գանգատի մասին էք խօսում. նոր իմացանք. լսելուն պէս կասես թէ կէսերս կտրեցին. ինչ գուշում է եկել խեղճի գլխին, խեղճ Մարկոս:

— Մարդու վրայ թանկ նստաւ էլի էդ աւերակի գործը:

— Ի՞նչ է. բարի երեկոյ ձեզ. էլի էդ չողակած աղայի մասին էք խօսում. դրա էն... տնտես... տուած...

— Աստծու բարին, Պալաս: Ահա, մէկն էլ էս խեղճի գարին —, խօսեց Նահապետը:

— Յանոց օրով ճիտս ծուռը, թողեց, քանի օրէ ձեռս ծոցումս ման եմ գալիս. սաղ ամբարս դատարկեց տարաւ. ան —, ատամները կրճտացնելով խօսեց Պալասն. — Էն Հազրօն տեսնում էք...

— Զէ, ուրիշ հնար չկայ, նրան պէտք է գիւղից հանել տանք. էլ բան չմնաց, որ մեր գլխին չբռնէր էդ Սիբիրից փախածը —, վրայ բերեց երրորդ գիւղացին:

— Էն օրը ձիով չգիտեմ ո՞ւր էր գնում. փողոցում պատահեցայ, բէյաբուռ արի՛, տէրը չեղաւ —, խօսեց Նահապետը:

— Գիշերն երկու ջուալ գարի —, նեղացած սկ եց պատմել Պալասը, — բերել ամբարս է լցրել, ճանապարհին էլ գարու հատիկներ է ցանել, հետք չինել, որ իբր թէ գարին ես եմ գողացել: Առաւօտ մէկ էլ տեսնիմ մի նախիր շուն, թուրք — մուրք հետն առած՝ ահագին զաւթաղալով եկաւ դուռս կտրեց, թէ գարին դու ես գողացել: «Ի՞նչ գարի, ի՞նչ բան», զարմացած մնացի ես: Ինչ զօրով տարան ամբարս, թէ՛ ահա... Երգում — պատճառ, չեղաւ, չեղաւ. թէ գարին դու ես գողացել: Էդ ժամանակ մէկ էլ տեսնիմ քոռ գլաւան Հազրօի հետ ձիով եկաւ գլխիս կանգնեց. էլ ոչ հարցնել, ոչ բան, բոլոր գարին ձեռիցս առան: Դա մարդ է... ան, դրան մի գնդակի պէտք է հանել, մի դընդակի...

Գիւղացիները, որոնք գիտէին այդ միջոցն իր առաջ տեղի ունեցող դէպքի պատմութիւնը,

խօսեցին. — շատ անխղճութիւն իմացել ենք, համա սրա արածների վրայ հատել է...

— Բարի երեկոյ. ի՞նչ, էլի Յարութիւն աղայի բաներն էք պատմում. վերջ ունի նրա արածները, որ պատմէք. եօթն օր եօթը գիշեր որ պատմէք չի հատնի: Զլինի էն խեղճ պառաւի բանը, որ մինչև հիմայ էլ քանի միտս է ընկնում միսս վրէս սրսըռում է:

— Ո՛րի, Մաքոյենց:

— Զէ. էն կայ ու կայ, Փէրմանց:

— Հա, եղաւ. հերու աշուն էր, չէ:

— Հերու աշուն էր —, շարունակեց նոր եկող գիւղացին, — խեղճ պառաւը մի թէ՛ ցորեն էր հանել. ունեցած — չունեցածն էր մի թէ՛ ցորենն էր. գիշերը թուանը թողել էր մօտը քնելու:

— Ո՛րին, Աւեսին:

— Ապա ո՞րին. ամենից մեծն Աւեսն է. ի՞նչ պիտի լինի, ինը — տասը տարեկան մոռթ: Գիշերն էն սատկելու Հազրօն առնում է ոսկորը, տանում ձգում է փեջատած թէ՛ ճի վրայ. շներն առնում են մսի հոտն, ելնում են թէ՛ ճի գլուխը՝ ցորենը խառնում: Միւս օրն, աղա, էլ մի գողում, էլ մի գոչում, էլ մի հայհոյանք, որ չեմ կարող ասել, թէ փեջատս քանդել, թէ՛ ճը խառնել, ցորենս տարել էք:

— Ապա, եդպէս է. ես էլ էի էնտեղ —, վրայ բերեց մի ուրիշ գիւղացի:

— Խեղճ պառաւը լաց, աղաղակ, ձեռներն ընկնիլ, ոտներն ընկննլ, աղաչե՛լ, պաղատե՛լ... չեղաւ, չեղաւ. բոլոր թէճը ձեռիցն առաւ, տարաւ իրեն ամբարը լցեց:

— Մարդ որ մի քիչ միտք է անու՛մ, ո՛հ մըռուռ է. անաստուածութիւն քի անաստուածութիւն:

— Քեաֆիրն իմանի կգար, ինչպէս որ լալիս էր խեղճ պառաւը: Վերջը տեսաւ, որ չի լինում՝ գնաց նրա դռան առաջ չոքեց, կուրծքը բաց արեց, մի անէծք, մի անէծք թափեց Յարութիւն աղայի գլխին, որ...

— Տօ, էդ էն մարդն է, որ անէծք չէ, Աստուած էլ հախէն չի կարող գալ:

— Մէկ էլ էդ անէծքի վրայ դուրս արծաւ էդ անհոգին, ես աչքովս տեսայ, խեղճ այլի պառաւին ձգեց ոտի տակ. էլ տուր որ կտաս. միքանի անգամ կօշկի քթով էնպէս խփեց խեղճի կրծքին ու կողքերին, որ քիչ մնաց մեռնէր: Մենք էս կողմից վրայ հասանք, հազիւ հազ ձեռիցն առանք, թէ չէ կսպանէր...

— Հայ, արդա՛ր Աստուած, որտեղ ես. էնտեղ եւ եթ պատիժը տալիր:

— Հէնց էդ էն օրերն էր, երբ Մալխասենց հետ թշնամացել էր, մալը թուրքերի ձեռով տանիլ տուեց: Մարդկանց վեց լուծք ու մի թաք եզը տարան. կալինուկտին առանց մալի թողին...

— Ե՛հ, դրա արածների ո՛ր մէկը պատմես... առաջին խօսողին ընդհատեց մի ուրիշ գիւղացի, — ասածի պէս հատնելու բան է...

— Նորից եկան միքանի գիւղացի: Խօսակցութիւնը քանի գնում ընդհանրանում էր: Նրանցից իւրաքանչիւր մէկը կամ իւր գլխին եկածներից, կամ մի ուրիշ բան էր ուղում պատմել Յարութիւն աղայի մօտին: Գիւղացիների հառաջանքներն ու հայհոյանքները միախառնւում էին իրար հետ:

— Ե՛հ, — ամբոխի խօսակցութիւնն ընդհատելով բարձր խօսեց Նահապետը, — որ օրը դաշառուշը թաղ չէ արել, դանգատ չէ տուել... Տաս — տասնուհինգ տարի է էստեղ է, ամեն տարի հարիւր դանգատ է տուել, քսան տուն է քանդել: Մէկ միտք արէք, վրաներս էլ հալ չմնաց. պարտքերս մինչև կոկորդներս է հասել. կուշտ փորով գարի հաց ուտելու կարօտ ենք մնացել. թէ չէ առաջ էս գիւղն էսպէս էր. քանի էս անաստուածը չէր եկել՝ ամեն տանից մի քէլլան ձի, միքանի լուծք եղ ու գոմէշ, տասնեակներով կովեր ու ոչխարներ էր դուրս գալիս. բարին տներիցս անպակաս էր: Ինչ որ ունէինք, ծախեցինք — ծխեցինք տուգանքի ու պարտքի տեղ էս անկուշտին տուինք՝ էլի չպրծանք:

— Սրա հողի սահմանը մինչև սարի էն կողմն անցաւ —, Նահապետին ընդհատեց մի ուրիշ հասակն առած գիւղացի, — առաջուց դրան էդքան

հող որտեղից էր. բոլորդ էլ գիտէք, վրացի աղա-
լից գնեց մի աւերակ. վերջն էնքան արեց, որ
ստով ու փողով սաղ աշխարհին տէր դառաւ
Ինչո՞ւ, հէնց մեն չգիտենք, թէ որ հողը որ ա-
ղալինն էր:

— Դրան էդքան փող որտեղից էր—, մէջ մը-
տաւ մի երիտասարդ գիւղացի, որին ինչպէս երե-
ւում էր, շատ քիչ բան էր լալտնի Յարութիւն
աղալի մասին:

— Որտեղից. ապա իսկի չես իմացել, որ սրա-
նից քսան—քսանուհինգ տարի առաջ դա էս կող-
մերում առաջին աւազակն է եղել. ապա չէս լսել
նրա թալանածներէ ու սպանածների մասին:
Զգիտես, որ էդ թալանածներով ահագին հա-
զարներ է գիզել. վերջը քանի տարի էլ բանտում
նստել: Էդ փողերով է առել, էլի:

— Է՛դ որ Խիւղամի ոչխարն է ընկել, մարդ չէ
տեսել—, խօսակցութիւնը փոխելով հարցրեց մի
նոր մօտ եկող գիւղացի:

— Սարի գլուխն ո՞վ է գնում, որ ո՞վ տեսնի:

— Ո՞վ է տեսել ապա, որ Մարկոսի ոչխարն
է—, խօսեց մի ուրիշ գիւղացի, որ ուզեց աւելի
իւր իրաւաբանական հասկացողութիւնը ցոյց տալ:

— Օսմանն, ու Սահակը:

— Օսմանը, չի անցնի, նկատեց մի գիւ-
ղացի:

— Ինչո՞ւ չի անցնի, քանի որ մէկը—Սահա-
կը մեր գիւղից է—, վրայ բերեց, երկրորդը:

— Ի՞նչ Սահակ. էս մեր Պոտոզի մօնէր—,
հարցրին մի քանի գիւղացի, որոնք Սահակ ա-
նունը լսելով, չէին իմացել, թէ ի՞նչ Սահակ էր:

— Այո՛, Պոտոզենց Սահակը:

Շատերը, որոնք դեռ հաստատ չէին լսել
Սահակի վկայ լինելը, զարմանք արտայայտող աչ-
քերով նայեցին իրար երեսին: Նրանք բոլորը ճա-
նաչում էին Սահակին իբրեւ բարի, միւսնոյն ժա-
մանակ և իբրեւ խեղճ մարդու, ուստի չէին կարո-
ղանում բացատրել, թէ ի՞նչպէս Սահակը վկայ էր
դարձել: «Սահակը սուտ վկայ», հարցնում էր նը-
րանցից իւրաքանչիւրն իւր մտքում և զարմացած
մնում:

Զարդախի տակ հետզհետէ աւելացող գիւ-
ղացիների թիւն արդէն քառասնից անցնում
էր:

— Ասա, Սահակ, դու ի՞նչպէս խղճիդ ուտեց-
րիր, էդ ծեր հասակիդ սուտ վկայ լինիլ, հա՛: Սա
անի, նա անի—, խօսեց Նահապետը, ձեռով ցոյց
տալով մի քանի դեռահաս երիտասարդի,— ասենք
էլի ոչինչ, դեռ ջահել են, դեռ խելքերը գլուխ-
ները չէ. էդ լիսուն-վաթսուն տարեկան հասա-
կիդ, մազդ ու միւրուքդ եկել ձերմակել է, ի՞նչպէս
խղճիդ ուտեցրիր:

Այդ ժամանակ նրանց մօտով անցաւ Համբա-
րը, որ հանդարտ քայլերով տուն էր գնում: Նա-
հապետը նրան տեսնելուն պէս վեր կացաւ տե-
ղից, քիչ կաղի տալով մօտեցաւ նրան:

—Տօ, հէրդ ինչպէս չամաչեց էդ անհաւատի համար սուտ վկայ լինիլ, հա. թփիւլ—, համբարի երեսին թքելով՝ բարկութեամբ շարունակեց իտ, — զնա հօրդ ասա, որ, ալ, դուռ ու դրկից նրան էլ մեզ դրացի չենք ընդունում. բոլորս թըքում ենք նրա երեսին. այսուհետեւ թող էլ մեր մէջ չմտնի. թոյլ Յարութիւն աղայի այլանը մնայ, նրա դռան շուրջ լինի, ինչպէս որ Հազրօն է: Դեռ որ դրսում պատահի՝ մի լաւ էլ պիտի թաղեմ: Մենք գիտէինք, թէ նա մարդ է եղել, մարդու տեղ էինք ընդունում. նա անհաւատ շուն է եղել: Ձեր տանն, իշալլահ, բրիշակ պիտի լինի, բրիշակ. էս հիշտեկ գիշերով ուրիշ բան չեմ խնդրում:

Համբարը սաստիկ կարմրեց այդ նախատինքից: Նա մտաբերեց հօր ասած խօսքերը դարին բերած երեկոյեան. յիշեց, թէ հայրն ինչ ասաց բարավրի ոչընչացման և ստացած հացի համար, որոնք պարզ ապացոյց կարող էին լինել նրա սուտ վկայ լինելուն, և ոչինչ չկարողացաւ պատասխանել: Դրացիների կողմից ստացած նախատինքն այն աստիճան ազդեց նրա վրայ, որ ամօթից չէր իմանում ինչ տնի: Նա սաստիկ կատաղեց իւր հօր դէմ, որ անուանարկող մի գործ էր բռնել և մաքում դրեց, որ տուն հասնելուն և հօրը «եսնելուն պէս» նրան մի քանի ծանր խօսք ասի, անպատուի և իւր նախատինքի վրէժը լուծի, առանց քաշուելու այն բանից, որ մինչ օրս

ոչինչ համարձարկութիւն չէր ստացել, իրեն թոյլ չէր տուել հօր դէմ հակառակ խօսելու:

—Ո՞քեր են կտրել վնասը—, Համբարի գնալուց յետոյ հարցրեց տարիքն առած մի գիւղացի:

—Քոռ գլաւան ու նրա բերած բանեատինները:

—Ո՞վքեր են բանեատինները:

—Սատանայ Մաթոսն ու Թոփալ Թաթոսը:

—Օ՜հ—, լսուեց չորս կողմից, — ինչ մարդիկ են եղել բանեատի:

—Ասա գլաւայի շներն, էլի:

—Դժողբից դուրս արածները:

—Աշխարհի տուն քանդողները:

—Ապա զրանց գործն ինչ է. ոչ ցան ունին ոչ վար. էդպէս բանի են ման գալիս, որ ուրիշի աշխատանքով, տուն քանդելով ապրին:

—Տեսնիս ամեն մէկը քանի մանէթ կերած կլինի:

—Քոռ գլաւային պիտի հարցնել. նա կը գիտենայ:

—Ախր իրեն ձեռով է եղել, չի գիտենայ:

—Բոլոր մեղքը ձերն է, ալ, երեսներդ եմ տսում. քանի անգամ ասացի, թէ տղերք, էդ քոռին մի ընտրէք, դա մարդ չէ. չեղաւ, չեղաւ:

—Ապա ո՞ւմ ընտրէինք, Նահապետ տացու, բեզ ասացինք՝ չուզեցիր. մէկ էլ նա էնքան մարդ էր բերել իրենց գիւղից, որ ուզէինք՝ չուզէինք՝ նրան էին քար (քուէ) տալու: Դէ, եղբի, մի տարի է մնացել ժամանակը լրանա-

լուն. մենք բոլորս քեզ համար կանգնած ենք:

— Ես որ լինիմ, առաջ էդ Սահակի, Թովալ Թաթոսի ու Սատանայ Մաթոսի սէս մարդկանց հախէն կգամ:

— Էդպէսներուն ողջ—ո՞ղջ պիտի քերթես, ողջ—ո՞ղջ—, լսուեցան միքանի ձայներ:

XII

«Մայրիկ Մայր - Աստուածածին, դ՛ո՛ւ չարը խափանես, բարին առաջնորդես, դ՛ո՛ւ գութ տաս անխիղճ մարդուն, մանրս ու խոշորս կրակից ազատես. դ՛ո՛ւ չթողնիս օջաղս մարելու, ո՞վ Սուրբ Աստուածածին, դ՛ո՛ւ մեզ օգնական պահապան լինիս, քեզ եմ ապաւինել...»: Տիրամօր պատկերի առաջ ձեռները կրծքին խաչաձև ծալած՝ աղօթում էր Թազանը: Աղօթքը վերջացնելուց յետոյ նամիքանի անգամ ծունր դրեց, ոյժ և կարողութիւն խնդրեց իրեն, և համբուրելով պատկերի շրջանակը՝ գնաց Յարութիւն աղայի այվանը:

ձանապարհին նրան հետզհետէ պատում էր մի տեսակ անվստահութիւն, նրա սիրտը սկսում էր բաբախել և մարմինը դողալ:

Մթութիւնը տարածւում էր գիւղի վրայ:

Հասնելով այվանի առջևի փոքրիկ հրապարակին՝ նրա անվստահութիւնն աւելացաւ:

Այվանի լուսամուտներից հրապարակի վրայ տարածուած լամպարի լոյսը մի վայրկեան կարծես

կաշկանդեց նրան: «Ո՛ւր եմ գնում», փոքր ինչ կանգ առնելով, կարծես ուշքի եկած ինքն իրեն հարցրեց նա: Այդ ժամանակ նա յիշեց իւր ամուսնուն, որի ազդած երկիւղը սաստկացաւ, և նա մտածեց ետ դառնալ: «Ո՛չ, կգնամ. ի՛նչ կայ. թո՛ղ իմանայ. ի՛նչ ամօթ բան է արածս. կգնամ», շշնջաց նա և շարժուեց առաջ: Մօտենալով դռանը՝ նա նայեց չորս կողմը: «Հա՛, արդեօք բաց կլինի. չլինի՞ թէ բակում մարդ լինի, իմանայ իմ գալուստն՝ իմաց տայ Յարութիւն աղային, և նա... հրամայի, որ ներս չթողնեն»:

Նրա երկիւղն աւելի սաստկացաւ, և վախից չհամարձակուելով դուռը բաց անել՝ ձեռք դռան երեսին՝ մնաց անորոշ դրութեան մէջ: Զուրի ճնշումից չփակած դուռն ինքն իրեն կամաց բացուեց: Թազանը սարսափած նայեց բակը, մթութութեան մէջ: «Ձէ, մարդ չկայ... կմտնեմ... բայց եթէ... ախ... ի՛նչ անեմ, Աստուած ջան... դ՛ո՛ւ ինձ կարողութիւն տաս: Է՛, կմտնեմ, զօրով կմտնեմ, ո՞վ կարող է...» հազիւ լսելի ձայնով խրախուսուած խօսեց նա և ոտը դրեց շէմքից ներս: Միքանի քայլ առաջ անցնելով՝ բակի մթութեան մէջ նա ամմածելով գտաւ դէպի վերի յարկը տանող սանդուխն, և թաթերի վրայ քայլելով բարձրացաւ վերև: Հասնելով սանդուխի ծայրին՝ նա մի քանի վայրկեան նորից մնաց անորոշ և քարացած դրութեան մէջ: Նրա սիրտն այնպէս սաստիկ բաբախում էր, որ կարծես ուզում էր տեղից դուրս

Թուշիլ: «Ախ...ինչ անեմ... Մայրիկ Մայր—Աստուածածին. դու օգնես ինձ», շշնջաց նա և նորից քայլերն առաջ շարժեց: «Էստեղ էլ ոչոք չկայ: Բայց եթէ յանկարծ դուրս գայ Հազրօն, մութ տեղը տեսնի ինձ կանգնած, գոռայ վրաս... Ինչ անեմ...» անի», նորից հառաչեց նա և հազիւ կարողացաւ տիրապետել թուլացած մարմնին, որ կարծես արդէն նրան չէր հնազանդում: Նա բըռնեց պատից և նայեց դէպի սենեակի դուռը: «Ռուան ծակից լոյս է երևում. ներսը խօսում են... մէկը Յարութիւն աղայի ձայնն է. միւսը... հա, Հազրօյի ձայնն է. ուրիշ ոչոք չկայ: Կըմտնեմ, ինչ ուզում է լինի, կմտնեմ...» նորից հառաչեց նա և ձեռք տարաւ դռանը, երբ յանկարծ ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս դուռը բացուեց, և ինչպէս ինքը յայտնուեց Յարութիւն աղայի սենեակում:

Յարութիւն աղան նստել էր թաղթի վրայ, թիկն տուած բարձին:

Հազրօն, նրանից քիչ հեռու, լուսամտի մօտ նստել էր աթոռի վրայ:

Յարութիւն աղան տեսնելով Թազանի անսպասելի կերպով երևալը, հասկացաւ թէ ինչու համար էր այդ կնոջ գալը, նայեց Հազրօի երեսին և ուղղուեց իւր տեղում:

— Յարութիւն աղա —, դող-դող ձայնով խօսեց Թազանն և մօտեցաւ սեղանին:

Յարութիւն աղան — խորամանկ, բայց սառն հայացքով նայեց նրա երեսին:

— Ի՞նչ է:

— Հեշտեկ գիշերով եկել եմ քեզ աղաչանք անելու, — աղերսախառն ձայնով խօսեց Թազանը, — դու գիտես, օջաղդ եմ ընկել, աղատիր մեզ էս կրակից, մի թողնիր մի օջաղ աւերուելու, տունս ու տղերքս քաղցած մնալու:

— Ի՞նչ. դեռ ևս երես էլ ունիք խնդրելու...

— Աղա ջան...

— Հիմայ հա, երբ օջախս աւերեցիր, հա, երբ ահագին չայիրս վճացրիք... մտիկ արա. համ մարդը վնաս անել տայ...

— Իմ մարդս էստեղ չէր. Աստուած է վկայ, դա մեր արածը չէ, դա թշնամու գործ է. մենք դրանից անպարտ ենք:

— Անպարտ էք... ոնց որ Իլդի աւերակի գործից էք անպարտ:

— Իլդի աւերակը. ախ... Յարութիւն աղա... մենք անպարտ ենք էս վնասից:

— Ապա ո՞վ է արել:

— Մեզ յայտնի չէ ո՞վ է արել. թող միայն հախ Տէրը դադատտան անէ, որ վերեւից ամեն բան տեսնում է. խնդրում եմ Յարութիւն աղա, էս հեշտիկ գիշերով արեւոյդ սատաղէն, որդոցս սատաղէն...

— Վնասն արել էք՝ պէտք է տաք:

— Յարութիւն աղա, դու գիտես մեր կարո-

ղութիւնն. ինչ ունինք, որ թնչ տանք. ազատիւր մեզ—, արտասուենքն աչքերին աջ ձեռով տրորեց կուրծքը Թազանը:

—Ի՛նչ ինչ. ա՛յ ոչխարը:

—Ոչխարը—, այդ անսպասելի լուրից սարսափած ճչաց Թազանը.— ոչխարը... մեր միակ կարողութիւնը, մեր ապրողստը... եթէ դա էլ...

—Ի՛նչ անեմ. ինչո՞ւ մարդդ առաջուց չէր մտածում:

—Յարութիւն աղա, իմ եղբայրս, իմ բերանիս սրբութիւնը, դա ուրիշների կողմից զրպարտութիւն է, սուտ է. մենք անմեղ ենք—, հառաչեց նա արտասուքների մէջ խեղդուած և շարունակեց.— Ելի աւերակի համար... մի անգամ մտքումըդ դրել ես վրէժ հանել՝ էն Աստծո՞ւդ թող, Յարութիւն աղա... համարիւր թէ մի ողորմութիւն ես անում:

—Եդ ինչո՞ւ մարդուդ չէիր ասում, որ... ես բաշխելու աւելորդ մալ չունիմ:

—Յարութիւն աղա, խնդրում եմ, տես, ոտերըդ եմ ընկնում, իսէր մեր լոյս հաւատի, իսէր Լուսաւորչի, ի՛նչ խղճա, իմ մանր ու խոշորիս խղճա. հաշուիր, թէ մի քոյր ունիս էս աշխարհի երեսին, էդ մի չափիդ՝ նրան ես բաշխում... մեզ խղճա, եթէ նրան չես խղճում:

—Մի երկարացնիր. ասացի չեմ անում... վեր կաց:

—Յարութիւն աղա, դու էլ մարդ ես, տան տէր ես, գո՛ւթ ունեցիր. մի՞թէ իմ որդոցս լաց ու

արտասուքը տեսնելիս խիղճդ քեզ տանջելու չէ: Խնդրում եմ, տես, ծնկաչոք առաջդ ընկած աղաչում եմ—, շրթունքները նրա ոտներին մօտեցնելով աղերսում էր Թազանը:

—Տէ՛ր Աստուած, թնչ էր էս սատանայ կինը...

—Աղաչում եմ, տես, պաղատում եմ, իմ որդոցս անէծքը մի առնիր վրադ:

—Վնասն արել էք՝ պիտի տաք. կարճ, էլ մի երկարացնիր:

—Լա՛ւ, վնասը մենք ենք արել. հիմայես եկել հոքդ եմ ընկել, ներողութիւն եմ խնդրում. բաշխի՛ր, հաշուիր թէ Աստծուդ ես բաշխում, լացով ու արտասուքով ինձ մի եդ դարձնիր:

—Ո՛ր մի վնասին համբերեմ. ես հօ գանձ չունիմ:

—Ա՛խ, Աստուած. թնչ անեմ:

—Քեզ ասում եմ հերիք է, զահլահ մի՛ տանիր—, բարկացած ձայ՛ով խօսեց Յարութիւն աղան և ձեռով հեռացրեց նրան:

—Օ՛հ, անօրէն, անհաւատ—, ինքն իրեն կորցրածի պէս յանկարծ ճչաց Թազանը,— դու անխիղճ ես, դու Աստուած չունիս. էլ ոչինչ չեմ խնդրում... Ո՛վ, երկնքի երկրի Ստեղծող, Քեզ եմ թողնում, դո՛ւ սրա արդար դատաստանը տեսնիս:

—Դո՛ւրս կորիր էստեղից, ջահու պառաւ—, բարձր ձայնով գոռաց նրա վրայ Յարութիւն աղան և ոտով հրեց դէպի դուռը:

— Դու սրտ պատիժը տաս —, վերև նայելով խօսեց Թադանն և կանգնեց ոտքի, — էն Ասածուց խնդրում եմ էս տունդ ու տեղդ բրիշակ լինի, չըվայելես, որ մեզ պէս խեղճ մարդու օջախն ու զուլմ ես մարել։

— Քեզ ասում եմ դուրս —, սաստիկ գոռաց Յարութիւն աղան և կանգնեց ոտքի։

— Քեզ որ ասում են՝ «դուրս գնա», դուրս գնա, էլ մի երկարացնիր —, խօսեց Հազրօն և նրա թևից քաշեց դէպի դուռը։

— Աւերի, աւերի... յուսահատ ձայնով կրկնեց Թադանն և հեծկտալով ելա դուրս։

Թադանը դեռ չէր վերադարձել տուն, որ Մարկոսը նկատելով նրա բացակայութիւնն և սրտում ինչոր անորոշ կասկած զգալով՝ հարցրել էր իւր որդոց նրա մասին, և նրանցից լսելով կրնոջ եկեղեցի գնալն՝ աւելի քան զօրեղացել էր այդ կասկածը նրա մէջ և անհանգստացրել։ Մինչ նա մտածում էր, թէ արդեօք ավանը չէ՞ գնացել իւր ամուսինն, երբ շալի մէջ փաթաթուած՝ ալլալ լուած ներս մտաւ Թադանը։

Մարկոսի հարցերին, թէ ինչո՞ւ է այդպէս ալլալուած, վերջապէս ուր էր. Թադանն իրեն կորցրածի պէս կցկտուր կերպով պատմեց բոլորը։ Մարկոսը սաստիկ կատաղեց, երբ իմացաւ նրա Յարութիւն աղալի մօտ լինելը։

— Քեզ ով ասաց, որ գնաս, հա՛, ա՛յ քաթաթա —, աղաղակեց նա, — ով ասաց գնաս, որ հիմալ է

աղաղակեց նա —, ով ասաց գնաս, որ հիմալ էլ լալով գանգատուում ես. քո ինչ գործն էր. դու պիտ ինրա սիրտը գուլթ ձգէիր. մէկ չհարցնէիր, չի մանայիր. և վերջապէս ինչպէս պատուիրդ ուտեցրիր նրա առաջը չոքել, քեզ էլ ցածացնել ինձ էլ, հա՛, ինչպէս թույլ տուիր իմ պատիւս ոտի տակ տալ, հա՛ —, և Մարկոսը մի ըոպէ պատրաստուեց յարձակուիլ կնոջ վրայ, խփել, ջախջախել նրան, բայց պահեց իրեն, միմիայն հեռուից թքեց նրա կողմը և շարունակեց. — Էդ էիր ուզում, որ էնպէս շունը քեզ անպատուէր, լացով ճանապարհ գնէր... տեղն էէ...

Թադանը լսում էր այդ խօսքերն և շալի ծայրերով սրբում իւր թաց աչքերն. և մինչ նա պատրաստուում էր մի քանի խօսքով արդարացնել իւր վարմունքը, յայտնել ամուսնուն, որ այդ բոլորի պատճառն ինքն ամուսինն էր, տեսաւ որ նա չկար. Թադանը նստեց թմբիկի վրայ և սկսեց ողբալ իւր տան վրայ գալիք թշուառ վիճակը։

Յարութիւն աղան նոյն դրութեամբ միայնակ դեռ նստած էր, երբ դաշոյնը կախած անսպասելի կերպով երևաց Մարկոսը։ Նրա բարկացկոտ դէմքով երևալը կատարեւապէս վախեցրեց Յարութիւն աղալին։ Նա հազիւ ուղղուեց իւր տեղում, երբ Մարկոսը կանգնելով նրա առջև բղաւեց.

— Անօրէն, աւազակ...

Յարութիւն աղան չուելով աչքերը նրա երեսին ուզեց պատասխանել, բայց Մարկոսը հերթ չտուեց։

— Ասե՛ք նա կին է, խելքը ոչինչ չէ կըտրում, ինքն իրեն գլխին եկել է քեզ պէս մի անհաւատի մօտ խօսելու. մի՞թէ դու պէտք է մարդավարութիւն չունենայիր, և նրան էնպէս պէտք է ճանապարհ գնէիր, դուրս անէիր, հա՛:

— Է՛յ, բերանիդ չափը ճանաչիր... ուղարկում ես, լետոյ էլ դեռ... Դիտե՛ս ես ով եմ:

— Ո՛վ է ուղարկել... ես լայեղ կանեմ՝ նրան քո դուռն ուղարկել... Դիտեմ դու ո՛վ ես. դու աշխարհի տունը քանդող-աւերողն ես. դու սարեւում ու ձուերում աւազակութիւն, սպանութիւն անողն ես, որ էնքան ժամանակ էլ կանդալները ոտներիդ բանդումն էիր. շառով ու շլթաղով որ էսքան կարողութիւն ես հաւաքել՝ կարծում ես թէ դու մարդ ես. էն թուրքն ու շունը քեզանից հազար անգամ լաւ են. ա՛յ դու ով ես:

— Քեզ ասում եմ խօսքդ ճանաչիր—, բղաւեց Յարութիւն աղան:

— Ո՛ւմ վրայ ես գոռում. ուրիշներին որ վախեցրել ես, կարծում ես թէ ինձ էլ կարող ես վախեցնել: Ինձ Մարկոս են ասում, ես մինչև Սիբիւրն աչքս եմ առել, լաւ գիտենաս:

— Ի՛նչ ես ուզում ինձանից:

— Պատիւ: Ուզում եմ, որ ետ կենաս շառիցդ: Յարութիւն աղան տեսնում էր, որ այդ գաղան դարձած մարդու հետ չէր կարողանալու գրլուխ ելնել, տեսնում էր, որ ընդհակառակն ինքն էր ճնշում՝ ուստի որոշեց լուել:

Մարկոսն այդ ժամանակ ետ դարձաւ, տեսաւ, որ Հազրօն կանգնած էր իւր ետեւը:

— Դու էստեղ ես, հա՛, բոլոր աշխարհի խայտառակ. դո՛ւ, ես իմ կնոջ թեւից բռնել դուրս ձրգել, հա՛. դո՛ւրս:

Հազրօն ոչ պակաս վախեցած քան իւր աղան՝ լուռ մնաց:

— Դո՛ւրս կորիր էստեղից:

Բայց Հազրօն սպասելով տիրոջ հրամանին դեռ կանգնած մնում էր:

— Քեզ ասում դո՛ւրս կորիր, շան որդի, թէ-չէ էնպէս մի ապտակ կհասցնեմ, որ մինչև, դժոխք մէկէն կգնաս—, սաստիկ բարձր գոռաց Մարկոսն և ուզեց յարձակուիլ նրա վրայ. բայց Հազրօն վախից փախաւ:

— Էս բոլորը որ հաւաքել ես, գիտե՛ս քանի անմեղների արիւն ու արտասուք ես թափել: Քո ունեցածդ թոյն է. մեղք է ձեռ տալը. հացդ որ ճղես՝ միջից արիւն դուրս կգայ: Սպանածներիդ արիւնը դեռ տաք-տաք հոսում է: Նրանց հոգին ամեն օր երկնքից անիծում է քեզ:

Յարութիւն աղան տեղում քարացած մնալով՝ այդ սարսափելի մարդու առջև համարձակութիւն չէր ստանում խօսելու, բառ չէր գտնում պատասխանելու:

— Աշխարհ թալանեցիր բաւական չէ, հիմայ էլ ուզում ես իմ ունեցածս խլել: Դրանով էլ մարդ չես դառնայ: Էսօր-էգուց սատկին բոլոր ունե-

ցածդ շներոց-գէլերոց է լինելու. որդի չունիս, բան չունիս. Հազրօի պէս աննամուսներն են ուտելու: Դու որ կաս՝ երկնքից իջած, դժոխքից եկած մի կրակ ես: Աւալ Աստուած, էնպիսի մի կրակի՞ն դաս, որ ինքդ էլ չիմանաս. էս հիշտե՛կ գիշերով ուրիշ խնդրուածք չունիմ:

Յարութիւն աղան աւելի և աւելի ճնշուով էր նրա խօսքերից և կատաղի տէքերից:

— Կարճ —, շարունակեց Մարկոսը, — շառք թողնելո՞ւ ես, թէ չէ:

— Զէ... Տը... — դողդողալով խառն պատասխանեց Յարութիւն աղան:

— Զէ —, յօնքերը վրայ բերելով և աչքերը նրա երեսին չռելով բղաւեց Մարկոսն և ձեռք տարաւ դաշոյնի դաստակին:

Յարութիւն աղայի երեսի գոյնը մի վայրկեանու՛մ թռաւ: Այդ սարսափելի մարդը, որ աշխարհ էր վախեցրել, այժմ մի գիւղացու առջև կատու էր դառել: Նա վախից ետ քաշուեց թաղթի վրայ և ձեռք տարաւ դէպի զէնքերը:

— Զէ —, կրկնեց Մարկոսն և մտածելով ապագայի մասին, կատաղութիւնը զսպեց և ձեռք հեռացրեց դաշոյնից. — թփե՛ւ —, թքեց նրա երեսին և շարժուեց դէպի դուռը: — Կրակ թափուի տունդ, կրակ —, խօսեց Մարկոսն և շարժուեց դէպի դուռը: Նա ոտը դուրս դնելուն պէս տեսաւ, որ Հազրօն բակում, մթութեան մէջ կանգնած էր:

— Էս դու էլք էստեղ ես —, կատաղութեամբ նրա վրայ բղաւեց Մարկոսն և այնպիսի մի սաստիկ ապտակ հասցրեց նրա ծնօտին, որ հռժկո հարուածից Հազրօն փռուեց գետին, և դէպի վայ: Թանող սանդուխներով գլորուեց ցած:

Մարկոսն ելաւ դուրս:

Յարութիւն աղան հազիւ ազատ շունչ քաշեց:

Հազրօն ականջն ու երեսը բռնած ներս մտաւ:

— Սպասի՛ր դու շառլաթան, սպասի՛ր, ես քեզ ցոյց կտամ —, սկսեց գոռալ Յարութիւն աղան:

— Աղա —, ձայնեց Հազրօն, ինքն էլ չիմանալով թէ ինչ ասէր նրան:

— Հիմալ տեղը չէ՞ թուր ու թիւանք առնի՞, գնամ ողջ տունը կտոր-բրդու՛ճ անեմ Հա՛: Եղպի ի մլթոնան գալ իմ տուն և համարձակուի եղպիս յրթութիւն անե՛լ. չէ, ես իմ նամուսիս չեմ ուտեցնի. գնա՛ էս ըսպէիս իւզբաշուն կանչի՛ր: Հա՛ —, լանկարծ երեսը դէպի Հազրօն շուռ տալով խօսեց նա, — դու որ ջրհանլամը կորար, որ...

— Ես, ես... ես...

— Դու քնչ

— Ես ինչ ու...

— Դու զահրու՛մար, լիմար անասուն. հիմա բոլոր բարկութիւնս քեզ վրայ կթափեմ. չէիր կարող վզսի՛թին տալով դուրս անե՛լ. տեսա՛ր, որ ելայեղ...

— Աղս, ախր ինձ...

— Քեզ ի՞նչ:

— Ապտակ տուեց. ես...

— Դու ի՞նչ—, իւրը մոռանալով, կամ ճիշտն ասած Հաղորին իւր մասին մոռացնել տալով կրկնեց Յարութիւն աղան,— դու ի՞նչ:

— Ուզում եմ ը՛ը... ծոծրակը քորելով խօսեց Հաղորն,— գանգատ տալ, որ...

— Որ ի՞նչ:

— Որ միքանի...

— Մանէթ առնես, հա՛—, զայլադատ հարցրեց Յարութիւն աղան:

— Հա՛—, աւելի պատկառանքը քան խելքը կորցրած պատասխանեց Հաղորն և նայեց իւր տիրոջ ոտներին:

Թփիւլիւ, անամօթ, ես նամուսի համար եմ խօսում, ինքն ի՞նչ է դուքս տալիս. էն որ ամեն անգամ ծեծուելուդ համար գանգատ ես տուել և մի քանի մանէթ առնելով բաց թողել, էս անգամ էլ կարծում ես թէ էնպէս է. գնա՛ էս սահաթիս իւզբաշուն կանչիր—, խոթող հայացքով խօսեց Յարութիւն աղան:

— Ա,՛ս —, գետնին նայելով և ծոծրակը քորելով երկիւղած խօսեց Հաղորն,— իւզբաշին էստեղ չէ:

— Կատարեալ խայտառակութիւն, կատարեալ... հապա հիմայ ես ի՞նչ անեմ, հա՛... ի՞նչ անեմ, աստ է —, աչքերը չռելով Հաղորի վրայ ճչաց նա: — Սպա-

սիր, դու շառլաթան, սպասիր, ես քեզ չեմ ուտեցնի. . . —, ապա երկու քայլ անելով դէպի Հաղորն նոյն կատաղութեամբ գոռաց.— դո՛ւքս կորիւ տնսուն...

XIII.

Անցնում էին օրեր օրերի ետեւից: Դատի օրը հետզհետէ մօտենում էր: Քանի գնում Սահակի համար աւելի տանջող էր դառնում նրա վկայ լինելն, և նրան աւելի ու աւելի էր մտածել տալիս: Ծատ անգամ երբ նա ճնշուած, երկիւղի և ամօթի նման մի տեսակ բանից տիրապետուած մրտածու էր այդ գործի մասին, և խորն ընկզմում իւր մէջ՝ նրա մտքերը խառնուում էին և աչք մտքերի խառնակութեան մէջ նա շփոթւում, կորցնում էր իրեն և չէր կարողանում հասնել մի վերջնական վճռի:

Մի կողմից Յարութիւն աղայի արած բարիքը, ցոյց տուած յարգանքն ու պատրաստականութիւնները, որ աւելի և աւելի կապում, մօտեցնում էին իրեն նրա հետ և երախտապարտ դարձնում, որ նա չէր կարողանում մոռանալ, մանաւանդ տեսնում էր որ Յարութիւն աղայի արած օգնութեամբ հետզհետէ իւր տան դրութիւնը բարելաւանում էր. միւս կողմից խօսում էր նրա մէջ այն դառը գիտակցութիւնը, թէ ինչն էր այդ բարելաւութիւնը ձեռ բերելու պատճառը, որը նրա վրայ

պանիչ տպաւորութիւն էր գործում, մանաւանդ որ նրա համար կասկածելի, մինչև իսկ անհաւատալի էր թւում, թէ վնասն անողը Մարկոսի ոչ խարն էր, որի մասին զրպարտութիւն լինելու համար խօսւում էր հասարակութեան մէջ, և մեղադրանքներ էին բարդում իւր վրայ. և այդ հասարակաց վատ կարծիքի նախատինքն ամենադառն կերպով ազդում էր նրա վրայ. և նա այդ տանջանքից յաղթահարուելով մի ըոպէ կարծես վրձնում էր անմաս մնալ այդ գործից և պատճառ չդառնալ մի օջաղի աւերման... Բայց յանկարծ նրա առաջ պատկերանում էր իւր տան վերաբերեալ մի աւելի սոսկալի և վատթար դրութիւն.— Յարութիւն աղան կարող էր նրա տունուտեղը տակնուվրայ անել, նրա գերդաստանը չոր չլի վրայ նստեցնել: Այդ սարսափելի դրութիւնը պատկերացնելիս բոլոր մարմնով փշաքաղւում էր նա, քրանում ու դարձեալ ընկնում նոյն խառն նոյն և անորոշ դրութեան մէջ:

Մինչ Սահակն ամեն օր այդպիսի տանջող մտքերով իրեն հաշիւ է աալիս, Մարկոսն ամեն կերպ աշխատում էր նրան տեսնել, հետը խօսիլ. բայց այդ չէր աջողւում, որովհետև Յարութիւն աղան Սահակին իւր մօտ այնպիսի գործերով էր զբաղեցնում, որ նա բոլորովին ազատ ժամանակ չէր ունենում այլմանից դուրս գալու, Յարութիւն աղայի մօտից բացակայելու: Այս բանն հետզհետէ

Սահակի համար անգգայ-անհասկանալի էր դառնում, իսկ Յարութիւն աղայի համար ուրախալի:

Բացի այս, եթէ Սահակն ուզենար էլ Մարկոսին տեսնել, մի տեսակ երկիւղ և ամօթ զգալով դէպի նրան՝ չէր համարձակւում այդ անել: Մինչև անգամ Մարկոսին հեռուից տեսնելը, նրա ձայնը լսելը Սահակի վրայ սարսափ է ձգում: Նա կարծես փախչում էր այդ մարդուց որին մի ժամանակ զթոսիւրտ և բարի էր ճանաչում, այժմ՝ անգութ, դադան... Բայց ամենայն ժամանակ նա զգում էր, որ ինչ որ գաղտնի բան իրեն ձգում — քաշում էր դէպի Մարկոսն և խղճահարեցնող դարձնում:

Այդպիսի խառնաշփոթ դրութեան մէջ, երբ նա արդէն մի լոկ առարկայ, խաղալիք էր դարձած իւր երկու հակառակ մտքերի մէջ՝ մի անգամ մի քանի դրացի պատահելով՝ անպատուեցին նրան իւր արարքի համար: Նա սաստիկ յուզուեց և ոչ մի տեղ հանգստութիւն չգտնելով՝ շտապեց այլման: Սաստիկ կատաղելով՝ դրացիների դէմ, միևնոյն ժամանակ նեղանալով իւր վրայ՝ ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս մտաւ Յարութիւն աղայի սենեակն, և ինչպէս պատմեց տեղի ունեցող դէպքն, և քիչ էր մնում, որ ասէր, թէ չէ կարողանում տանել այդպիսի մի դրութիւն, ուզում է թողնել, հեռանալ երբ Յարութիւն աղան պատիր ձայնով, աչքերին ու երեսին գրաւիչ ժպիտ խաղացնելով ասաց.

— Չուզենալուց, Սահակ ջան, չուզենալուց,

իմանում ես. նրանց աչքը չէ վերցնում, որ դու ինձ մօտ ես. հասկանում ես: Սպասիր դու, ես քեզ էնպիսի մի վիճակի հասցնեմ, որ ինքդ էլ զարմանաս, ժամանակին օրհնող լինիս, և նրանք որ իմանան իմ արած լաւութիւնը քեզ նախանձից տրաքուին: Սպասիր դու: Նրանք ուզում են, որ քեզ խաբեն: Դու գլուխդ խելք ճարիր, երեսայ մի լինիր: Ես աշխարհիս երեսին մարդ, որ իւր գործը չգիտցաւ քաղցած կմեռնի: Դրուստ չեմ ասում:

— Դրուստ ես ասում, աղա՛ ջան:

— Ի՛է, որ դրուստ է, քեզ ինչ որ ասում եմ, ինձ լսիր—, երեսին նորից ժպիտ խաղացնելով խօսեց Յարութիւն աղան, որպէս խօսում էր ընդհանրապէս:

Սահակն այնքան ոգևորուեց այդ խօսքերեց, որ քիչ առաջ տեղի ունեցող յուզմունքը փարատուեց և մտքում ունեցած վճիռը նա փոխեց: Այդ րոպէ Յարութիւն աղան նրա աչքում այնպիսի մի ազնիւ և կարեկից մարդ երեւաց, որ նա իւր մտքում մինչև անգամ նախատեց իրեն քիչ առաջ մտածածի մասին:

Այսպիսով Սահակը մնում էր նոյն դրութեան մէջ և շարունակում Յարութիւն աղայի քթի տակ ծառայել: Նա արդէն այլանի մէջ նախապառուութիւն էր ձեռ բերել Հազրօից:

Աղայի կողմից գլխաւոր հրաման արձակողն արդէն Սահակն էր. նրան էին լսում դաշտի պա-

հապան ծառաները: Այդ բանը Հազրօի համար շատ ծանր էր, և վերաւորական. նա տեսնում էր որ իւր այդքան երկար ժամանակուայ հաւատարիմ ծառայութեան փոխարէն աստերախտութեան էր հանդիպում Յարութիւն աղայի կողմից, որի համար ոչինչ, այն, ոչինչ չէր խնայել և գլուխը դրած ունէր: Նրա կատաղութիւնը ծայրայեղութեան հասաւ, երբ մի անգամ Յարութիւն աղան նրան մի աստակ տուեց այն առթիւ, որ նա Սահակին հայհոյելով նրան հակառակ կարգադրութիւն էր արել, և Սահակը գանգատուել էր Յարութիւն աղային: Այդ դէպքից յետոյ Հազրօն բոլորովին հիասթափուել էր, տեսնելով, թէ ինքը որքան խաբուած է եղել... և չէր կարողանում տանել կրած վերաւորանքները, որոնք քանի գնում նրա սրտի մէջ աւելի մեծ ծաւալ էին ստանում: «Ես նրա համար ոչ մի բան չխնայեմ, ամեն բան տանեմ, և նա ինձ... լաւ, ես մարդ չլինիմ, թէ քո հախէդ չգամ», ինքն իրեն շարունակ կրկնում էր նա:

— Հազրօն ո՞վ, դու ո՞վ—, Սահակին շարունակ կրկնում էր Յարութիւն աղան:

Մինչ այս մինչ այն ամառն արդէն վրայ էր հասել և դատի օրը մօտեցել էր:

Ախալքալաքի դատարանում վաղ առաւօտից խոնուել էր ամբօխը: Այլուած, կոպիտ դէմքով, ծակուած ու շորացած տրեխներով, մաշուած, հազար ու մէկ տեղից կարկտուած հագուստներով,

շաբաթներով չսափրած երեսներով դատարանի առջև խուր-խումբ կանգնած էին գիւղացիները:

Դրանց հետ միախառնուում էին նոր եկողները, քաղաքացիներն և աղաները, որոնք իրենց շարունակ անցուդարձով հետաքրքիր էին դարձնում խօսակցութիւնը:

Ժողովրդից քիչ հեռու իւր հովիւներով շրջապատուած, կանգնած էր Խիւղամը, Նրանից քիչ հեռու Սահակին և Օսմանին իւր հետ առած ման էր գալիս Յարութիւն աղան:

Ամեն մարդ իւր հետինի հետ խօսում էր և խորհում էր իւր գործի մասին:

Գողգոր, բարո՛վ, դու էլ գործ ունի՞ս—, հարցրեց մի գիւղացի դէմից եկողին:

— Հա՛, Պետո՛ ջան, էս մի շաբաթ է քաշ եմ գալիս:

— Ի՞նչ է որ:

— Է՛հ, ոտով — գլխով կրակն ենք ընկել —, լուսահատ ձայնով պատասխանեց Գողգորը, — մեր գիւղի անաստուած աղան գիւղի կէսի վրան գանգատ է տուել, իբր թէ զօրով մտել չայիրը քաղել ենք: Գիտես, ինքն առաջուց իրաւունք տուեց, ասելով, թէ թողլո՞ւ — բան հարկաւոր չէ, քաղեցէք: Ետոյ իմանաք, որ թղթով ծախել է Ա...ցի թուրքերին: Նրանք գանգատ են տուել աղայի վրայ, աղան էլ մեզ վրայ: Հիմայ իսկի խելքս չէ հասնում, թէ ի՞նչ տեսակ գործ է, ի՞նչ պիտի անենք:

— Ծ՛ր, ծ՛ր ծ՛ր —, գլուխը պտտեցնելով շրջընջաց Պետոն:

— Է, դո՛ւ ինչի ես եկել:

— Սրանից մի ամիս առաջ եկել եզս աղլից գողացել տարել էին արտերի մէջը մորթել, կաշին քերթել տարել՝ լէշը թողել: Էս երեք շաբաթ է ընկել եմ գլաւայի ետեւը, որ գայ քննի, տեսնի՝ ոչ գալիս է, ոչ էլ...

— Ո՛վ է տարել, գիտե՞ս:

— Սառճի մանչը:

— Թի՛ւ, անաստուած, էս քանի տարի է խալխի տունը քանգելով ման է գալիս, տէրն եղող չկայ:

— Էսպէս օրով, խալխը հերկ է անում, խոտերը կրելու օրերն հասան, ցանքս էլ կիսատ մնաց, լուծս մնացել է գետինը: Ձեռս չկայ, որ մի եզ առնիմ, գործս եօլա տանիմ... Երկու օր առաջ էլի գնացի գլաւու ետեւը, ասացի-ասացի, իսկի տէրը չեղաւ, մի լաւ էլ թակեց, թէ կորի՛ր, հերիք է զահլէս տանիս:

— Ձեր գլաւան հիմայ ո՞վ է:

— Չուխ Յովակը:

— Օ օ օ — երկարացրեց Պետոն, — Սառճի մանչու ընկերը, գիտեմ: Տարածն իրար հետ են կիսում, իհարկէ տէրը չի լինի: Դա քու Մատոսին էլ մոռացրեց: Հերու էլ խեղճ Մալխասենց մալը Յարութիւն աղան տանել տուեց: Տեղն իմացան, գնացին գլաւու մօտ՝ ոչ աէրն եղաւ, ոչ էլ. Անն,

գիտես թէ՛ դրանց օրով ինչքան օջաղներ քան-
դուեցան...

— Ո՞վ էր տարել:

— Չլտրցի Օսմանն. էլ ո՞վ կայ:

— Օսման՝ը. հրէն, նա էստեղ է, ման է գա-
լիս: Հետինն ո՞վքեր են:

— Էն մէկին չեմ ճանաչում. մէջ տեղինը
Յարութիւն աղան է:

— Յարութիւն աղան. հա՛ն, տեսնիս էլի
ինչո՞ւ է եկել. մի գանգատ կունենայ:

— Ո՞ր օրը չէ գալիս, որ էսօր եկած չլինի:
Օրէնը տասը գանգատ է տալիս:

Խօսող գիւղացիներին մօտ եկան ուրիշ երկու
գիւղացի: Նրանք համառօտակի պատմեցին Յարու-
թիւն աղայի տուած գանգատի մասին:

— Շատ անգո՞ւթ աղա տեսել եմ, համա դրա
վրայ հատած է—, վրայ բերեց Պետօն:

— Է՛հ, աղայի լաւը կլինի՞. բոլորն էլ դրա
պէս տուն քանդողներ, ֆախր-ֆուխարի արիւնը
ծծողներ են. հրէն, քանիսն են ման գալիս: Մենք
բոլորս էլ դրանց քանդածը չենք...

Մի քանի գիւղացի էլ հաւաքուած դատա-
րանի պառչգամբի վրայ, անհամարձակ քայլերով
մօտենում էին դռան ու լուսամուտներին և ներս
նայում: Նրանցից մէկը տեսնելով դատարանում
թարգմանի պաշտօն վարող ծառայողին, որ թըղ-
թերը ձեռին անցուղարձ էր անում՝ ասաց.

— Տեսնո՞ւմ էք մեր գիւղի տէրտէրի մանչուն,

Մուքայիլին, ձեռը — ոտը մաքուր, ամսական ոռճիկն
առնում, թագաւորի պէս ապրում է:

— Ապա մեզ պէս էր, խելք ունէր. էնքան էս
ու էն կողմն ընկաւ, կարգաց, որ վերջը մարդ
դառաւ. հիմայ սիւղիայի պէս մարդկանց հետ է
նստում, վեր կենում:

— Տեսնիս ամսական ինչքան է ստանում:

— Մի երեսուն մանէթ կլինի:

— Երեսուն մանէթթ. տեսար փո՞ղը. կեր ու
պո՞ռի:

— Տես, մարդն էնքան մեծ աստիճան ունի, որ
Յարութիւն աղայի պէս մարդն եկաւ, դէմը կանգնեց:

— Ո՞ւր է. հա՛ն, տօ —, վրայ բերեց միւսը զար-
մանքով:

XIV.

Յարութիւն աղան Մուքայիլին որ տեսաւ,
Սահակին թողեց Օսմանի մօտ, միևնույն ժամանակ
վերջինիս պատուիրելով, որ նրանից չբաժնուի,
մտաւ ներս:

Նա դատարանում թարգմանի պաշտօն վարող
ծառայողի հետ քիչ խօսելուց լեռոյ նրա թւից
բռնած տարաւ մի առանձին կողմ: Նա ձեռի և
գլխի զանազան շարժումներով խօսում էր: «Իմա-
ցայ, իմացայ, լաւ...», նրա ասածներին ժպտալով
վրայ էր բերում Մուքայիլը:

Սահակն ու Օսմանը Յարութիւն աղայի ներս

յրանելուց յետոյ քաշուեցին մի անկիւն: Սահակը պատի տակ շուռքում նստեց քարի վրայ և վառեց պապիրոսը: Նրա մէջ վերստին ծագել էր առաջուայ տանջող միտքը, որ բաւականին ժամանակ էր, ինչ թուլացել էր: Տատանուող դրութեան մէջ նա չէր իմանում, թէ ինչպէս անի և զօր էր տալիս պապիրոսին: «Արդեօք Մարկոսի ոչխարն էր» կասկածը մարմին առած ակամայ դուրս էր թլուչում նրա շրթունքներից և նրան մտածել տալիս:

Մարկոսը, որ մինչ այդ օրը ոչ մի կերպ չէր կարողացել Սահակին տեսնել և հետը խօսիլ՝ երբ նկատեց, որ նա Օսմանի մօտ շուռքում նստած է քարի վրայ՝ մօտեցաւ նրան:

Սահակը նրան տեսնելուն պէս մեքենայաբար վերկացաւ տեղից և երեսը շրջեց մի կողմ:

— Սահակ - , ձայնեց Մարկոսը:

— Ի՞նչ է — , Սահակի փոխարէն առաջ անցաւ Օսմանն և ուզեց խանգարել նրանց տեսութիւնը:

— Քեզ հետ չեմ, թուրք. Սահակ — , կրկնեց Մարկոսն և կանգնեց նրա առջև:

— Ի՞նչ է — , շշտաց Սահակն և նայեց Մարկոսի երեսին:

Մարդկային երկու աչքերը երբէք այնպէս չէին նայել Սահակի երեսին, որպէս այդ րոպէ Մարկոսի աչքերն. այդ աչքերը կարծես՝ թէ կարեկցում էին Սահակին և թէ միևնույն ժամանակ տանջում, հալածում նրան:

Օսմանը նկատելով թէ բանն ինչու՞մն է, Սահակին աչքով—յօնքով էր անում, որով ուզում էր ասել. «տէրը մի լինիր, թող խօսի-խօսի հեռանայ»:

— Սահակ, եղբայր Սահակ, խիղճդ մի կորցնիր, մի թողնիր օջաղս մարելու. դու էլ տանուտեղի տէր ես, դու էլ մանրութոյցի տէր ես. հոգիդ մի սևացնիր. քեզ խաբել է, սուտ վկայ է բերել:

Այդ խօսքերն այնպիսի աղերսանքով հնչեցին, որ Սահակն ակամայ փշաքաղուեց: Նա տեղում անհանգիստ շարժում գործեց և մի ծանր հառաչանք դուրս թռաւ նրա կրծքից:

— Տեսնում ես չէ խօսում, էլ ի՞նչ ես ուզում:

— Քո բանը չէ, թուրք, դու ո՞վ ես էստեղ — , յանկարծ բռնկած կատաղութեամբ աչքերն Օսմանի երեսին չռելով աղաղակեց Մարկոսը:

Թուրքը կարծես վախեցաւ և ակամայ փոքր ինչ ետ քաշուեց:

— Սահակ ջան, ազատիր ինձ էս կրակից — , նորից դարձաւ Մարկոսը. — «տուն քանդողին տուն չի լինի», ասում է թուրքը:

Սահակն աւելի և աւելի տանջւում էր և չէր իմանում ինչ անէր և ինչպէս անէր որ ազատէր թէ իրեն և թէ՝ Մարկոսին: Նա վերև նայեց և ուզում էր ասել. «ինչպէս ասեմ, Մարկոս ջան, որ ինչպէս լինի...», բայց ասեց. — եղբայր ի՞նչ ես ուզում ինձանից:

— Ուզում եմ որ ետ կենաս սուտ վկայ լինե-

լուց, ճշմարիտն ասես. ուզում եմ, խնդրում եմ, աղաչում եմ, որ չթողնես օջաղս մարելու. քեզ եմ մնացել:

— Տէր Աստուած, թնչ է ուզում էս հայր—, նրանց երկսի երեսին նայելով խօսեց Օսմանն և կանգնած տեղում մի անհանգիստ շարժում գործեց:

— Սահակ, որդոցս անէծքը վրէժ մի առնիր, հոգիդ սատանին բաժին մի դարձնիր...

— Ի՞նչ ես կանգնել, արի այս կողմը—, Սահակին թևից բռնելով ուղեց հեռացնել Օսմանը:

— Ձէնդ կտրիր, թուրք, և թող դրան, թէ չէ էս րուպէիս... համբերութիւնից դուրս եկած բղաւեց Մարկոսն և ձեռք տարաւ դաշոյնին:

— Զօրով է...

— Ձէնդ, քեզ ասում եմ: Սահակ—, դէպի նըրան դարձաւ Մարկոսը, — լաւ մտածիր, մեր լոյս հաւատին ու կաթին չի ընկնի անաստուած գործ բռնել: Մենք դուռուդրկից ենք, իրար աւելի մօտիկ ենք, իրար ցաւերն աւելի լաւ ենք հասկանում. մեր կտրած աղուհացը մի մոռանար, պատճառ մի դառնար օջաղս աւերուելու:

Օսմանը տեսնելով, որ անկարող է Մարկոսի հետ կռուել, նրան խանգարել՝ ձեռով ու գլխով շարունակ անհանգիստ շարժումներ էր անում և չորս կողմը նայելով անհամբեր սպասում էր Յարութիւն աղայի դուրս գալուն:

Սահակը մի րուպէ կարծես ուղեց բղաւել, գոռալ Օսմանի վրայ, լուեցնել նրան, սրտէ ի սիրտ

խօսել Մարկոսի հետ, բայց վերին աստիճանի կաշկանդուած զգալով իրեն, կարծես չէր կարողանում այդպիսի բան անել:

— Սահակ ջան, օջաղդ եմ ընկել. դու գիտես: Սահակն այլ ևս անկարող էր տանել այն զարհուրելի տանջանքը, որ լարուցանում էր նրա մէջ այն խղճահարուլթիւնը, որ նա տածում էր դէպի Մարկոսը: Նա ոչինչ չխօսեց և ուղեց գլխով համաձայնութեան նշան անել, երբ աննկատելի կերպով մօտեցաւ նրանց Յարութիւն աղան, որ դատարանից դուրս գալով՝ հորթը կորցրած կովի պէս դէսուդէն էր նայել և տեսել էր Մարկոսին Սահակի ու Օսմանի մօտ կանգնած:

— Ի՞նչ ես ուզում խեղճ մարդկանցից, եկել ես հանգիստ չես տալիս,— ասաց նա Մարկոսին:

— Ապա դու ինչ ես ուզում, որ խաբել սուտ վկայ ես բերել էս խեղճ մարդուն:

— Սուտ է հա՛. համ անես, համ էլ...

Մարկոսը չուած աչքերով նայեց նրա երեսին և ձայնեց. — անամօթ, աւագակ:

Յարութիւն աղան լաւ համարեց լուել, չգրգռուել նրան, տեղի չտալու երկար խօսակցութեան, որ աւելի վտանգաւոր էր:

— Ես նրան ու նրա Աստուծո՛ւն եմ թողնում, ուրիշ ոչինչ—, խօսեց Մարկոսն և նայելով Սահակի երեսին հեռացաւ:

Սահակը կատարելապէս չէր իմանում, թէ ինչ էր պատահում իրեն: Նրա սիրտը Մարկոսի կողմն

էր, բայց այժմ նրա առջև կանգնած էր Յարութիւն աղան: Սոյորած աչքերով նա մնաց միայն Մարկոսի ետեւից դիտելիս և խորը հառաչեց:

Յարութիւն աղան հասկացաւ նրա — դրութիւնը, բռնեց նրա թւից և ասաց. — Եկ գնանք, քաղցած ենք, գնանք մի քիչ բան ուտենք:

— Վատ եմ, Յարութիւն աղա:

— Ոչինչ չկայ. մրսած՝ կլինիս, ղոչաղ կաց —, խօսեց Յարութիւն աղան և նրան Օսմանի հետ տարաւ գինետուն:

— Նիկոլ —, կանչեց նա կեղտոտ սեղանի մօտ նստելով:

Նրա ձայնը լսելուն պէս կեղտոտ շորերով, քթանէ գոգնոցն առաջը կապած վաղ տուեց գինետան աշկերտը:

— Զուկ, խորոված, գինի, ինչ ունիս բեր: Առաջուց դեռ կէս չարեկ արաղ բեր: Ծովս, շուտ:

— Ե՛ս սահաթիս —, խօսեց աշկերտն և վաղ տուեց պատուէրը կատարելու:

— Խմեցէք, որ մի լաւ քէֆ անենք, աշխարհումս միայն էս կմնայ —, արաղի բաժակը նախ Սահակին և ապա Օսմանին մօտեցնելով խօսեց Յարութիւն աղան:

Սահակը բաժակը ձեռն առած մտածում էր:

— Խմիր, տօ ինչ ես միտք անում. էլ մարդ չէ հիւանդացել, խմիր, որ անցնի, տղամարդ չես: Առջաղ կաց:

Սահակը դողդողալով բաժակը դատարկեց:

Յարութիւն աղան երկրորդ բաժակը խմելով նորից առաջարկեց Սահակին:

Սահակը դժուարանում էր խմել:

— Խմիր, տօ քէֆիդ նախիր, ինչ ես վախենում, խմիր, որ Մարկոսի հէրը մի լաւ անիճենք, խմիր: Սահակը ստիպուած դատարկեց երկրորդ բաժակը:

Նիկոլը կերակուրներն և շշերով գինին շարում էր սեղանի վրայ:

— Ես մարդ եմ, մարդ. ինձ լաւութիւն անողի համար հոգիս որ ուզեն՝ չեմ խնայի: Ինչ ես միտք անում. փող է հարկաւոր. ահա, քսան մանէթ. ես գիտեմ տանդ համար պակասութիւն կուենաս. առ, գնա տանդ պակասութիւնները հոգա —, Խօսեց Յարութիւն աղան և քսան հատ մի ընկելանոց դրեց նրա առջևը:

Օսմանը փողերը տեսնելով աչքերը բանից դուրս խաղացրեց և թուքը կուլ տուեց:

Սահակը նայելով փողերին կարծես ուշքի եկաւ և ազատ զգաց իրեն հոգեկան տանջանքից: Նա նայում էր դեղնակարմիր թղթերին և չէր համարձակում վերցնել:

— Ա՛ռ, առ դիր գրպանդ, քէֆ արա. ես էս պէս մարդ եմ. դու դեռ ինձ յետոյ պիտի ճանաչես: Գինի խմեցէք:

Սահակն առաւ փողերը, դրեց գրպանը:

Մի քանի ըոպէից նրանք արդէն գինու բաժակներն իրար էին չրխկացնում:

Գինու ազդեցութիւնից, Յարութիւն աղայի սիրալիր և զուարճալի խօսակցութիւնից և մանաւանդ քսան ըուբլի նուէրից Սահակի մէջ կարծես հրաշքով չքացաւ հոգեկան յուզումը:

— Դու դեռ համբերիր, քեզ էնպիսի լաւութիւններ անեմ, որ բոլորը զարմանան, դու էլ ասես, «իրաւ որ Յարութիւն աղան լաւ մարդ է»:

— Կանես, ես ու իմ Աստուածս, կանես, դու էնպէս մարդ ես —, նրա խօսքին վրայ բերեց Օսմանը:

— Դու մէկ տես սիւղեան չեկաւ —, դէպի Օսմանը դառնալով խօսեց Յարութիւն աղան:

— Ասելիքդ գիտես, էլի —, Օսմանի դուրս գնալուց յետոյ խօսեց նա, — ինչպէս որ ճանապարհին ասացի. ինչ որ կհարցնեն՝ նրա պատասխանը կտաս, հասկացար: Կհարցնեն՝ «տեսել ես»։ Ասա «այո՛, տեսել եմ»:

— Ես գիտեմ, դու անհոգ կաց —, քաջալերուած և գինու ազդեցութիւնից տաքացած պատասխանեց Սահակը:

Օսմանը մի քանի ըոպէից ներս մտաւ և յայտնեց, որ դատաւորն արդէն եկած է:

— Դէհ խմեցէ՛ք, որ գործերս աշող գնայ:

Սահակն արդէն խմել էր բացի արաղից և գինու վեցերորդ, եօթներորդ բաժակը. նա խմեց և այդ բաժակը:

— Գատարանում իսկի նրա երեսին մի նայիր, ինչ գործ ունիս, դու քո բանիդ կաց. իմ մօտից իսկի մի հեռանար, իմացար: Թէ քեզ բան կասի՝ տէրը մի լինիր: Էսօր է, նեղն է ընկել՝ աղաչանք — պաղատանք է անում. վաղը որ մի գրոշ պարտք լինիս կբաշխէ, հա՛, կամ թէ չէ չորսհարիւր մանէթանոց բարաթ կճղէ:

— Զէ աղա՛ —, այդ խօսքերի վրայ աւելի համոզուած, համարձակ պատասխանեց Սահակը:

— Դէ որ չէ, էլ ինչ ես մտածում, հէրն էլ անիծած. տես, առանց ուզելու քսան մանէթ բաշխեցի. նա կանի, մի գրոշ կբաշխի:

— Զէ —, բոլորովին քաջալերուած խօսեց Սահակն և կանգնեց ոտքի:

— Դէ որ չէ, քեզ ինչ որ ասացի լաւ միտդ պահիր:

— Լաւ կ'լինի —, պատասխանեց Սահակն, և նրանք դուրս գնացին գինետնից:

XV.

Գատարանի դահլիճից լսուեց զանգակի ձայն: Ժողովուրդը իրար բոթբռնելով գիմեց ներս: Գիւղացիները նստեցին ետեւի մասում նստարանների վրայ, վայր առան մեծ փափաղները, դրին կողքերին և կոշտ ձեռներով շփեցին ճակատները, որ իբր թէ մազերը կոկեցին:

Գատաւորն հարևան-խորհրդարանի սենեակից

ներս մտաւ. Տիրեց ընդհանուր լուսթիւն: Գիւղացիները բոլորը ոտի կանգնեցին, հայացքներն ուղղեցին դատաւորի երեսին, որն իւր պէնսնէյով և վզի փալուն շղթայով մի անմերձենալի անձնաւորութեան տպաւորութիւն թողեց նրանց վրայ:

Դատաւորն յայտնեց, որ քննուելու է Կարգադ գիւղի հողատէր Յարութիւն աղայի և Մարկոս Վարդիկեանցի գործը:

Ժողովրդի հետաքրքրութիւնն աւելացաւ:

— Ես խնդրում եմ Յարութիւն Դիրմազանովի վրէպներին երդուեցնել տաք —, առաջ անցնելով խօսեց Մարկոսը:

Յարութիւն աղայի վկաների դէմքերի վրայով մի ալլալմունք անցաւ: Նրանք անհանգստութեամբ շարժուեցին իրենց տեղերում, նայեցին իրար երեսի, կարծես ուզում էին մի և ան ասել, բայց լռեցին: Մարկոսի առաջարկութիւնը, որ նրանց մտքով համարեա չէր անցել՝ գրեթէ վախեցրեց նրանց:

Խիւղամն առանձին — առանձին նրանց ականջին փսփսաց և ձեռն դի մէջ գէպի ցած շաւթեց, որ նշանակում էր. «հանգիստ կացէք, ոչինչ չկայ...» Այդ ժամանակ նա տեսաւ Յարութիւն աղային, որ Սահակի և Օսմանի մէջ տեղում նստած՝ ետ գառնալով աչքով ու գլխով դանազան շարժումներ ! ր անում: Խիւղամն աչքերը վրայ բերելով գլխով նշան արեց:

Գինու աղբեցութեան տակ, ինքն իրեն մոռա-

ցած՝ Սահակը մինչև անգամ չլսեց Մարկոսի խօսքերը: Յարութիւն աղայի մօտ նստած՝ նա անտարբեր կերպով նայում էր դիմացը. կարծես բոլորովին մի կողմնակի հանգիստես լինէր:

— Ե՛հ, երգում. մեղք որ չունենամ, կուգէ հազար էլ երդուեցնեն —, խօսեց Յարութիւն աղան և դիտեց Սահակի դէմքը: Բայց Սահակը նոյն դրութեամբ, ոչխարի աչքերի նմանութիւն ունեցող աչքերով շարունակում էր նայել դիմացը:

Այդ րոպէ ամեն բան նրա համար մեռած էր. այլ ևս ոչ մի բան նրան չէր հետաքրքրում: Նրա ուղեղն և սիրտը թմրել էին կատարելապէս:

Երդուեցնող հոգևորականներն եկան: Հայ քահանան ձգեց փորուրարն, և աւետարանը վսեմաբար բարձրացնելով, բարձր ձայնով, հատուորոշ խօսքերով սկսեց երդուեցնել:

Ժողովուրդը ոտքի կանգնելով լուսթեամբ և զգացուած սրտով նայում էր մերթ աւետարանին, մերթ երդուեցնող քահանային:

Գունդուկծիկ մարմնով դատաւորի սեղանի առջև կանգնած, թեւ ծռած, մատը բարձրացրած, քահանայի խօսքերը կրկնում էր Սահակը. կրկնում էր առանց լսածի — կրկնածի իմաստն ըմբռնելու, կրկնում էր թուժակի նման և արբած աչքերով նայում էր քահանային: Ինչպէս վերջացաւ երդումն, ինչ ասաց, ինչպէս մտաւ հարևան սենեակը՝ նրան անըմբռնելի և անզգայ թուաց: Այնուհետև միայն, երբ հարևան դատարկ սենեակի խո-

նաւ օդը դիպաւ նրան, մտապատկերեց երգութեց-
նող քահանային նայող այն բազմաթիւ աչքերը,
որոնք իրեն նայեցին ետ դառնալու ժամանակ:

Կապոյտ խալաթով, գլխին սպիտակ չալմա
փաթաթած՝ առաջ անցաւ թուրք մօլլան: Նա
սեւ ձեռներով բռնելով ղուրանը՝ սկսեց Հաստ
շրթունքները բացուխով անել, որոց միջից ե-
րևում էին նրա ուռած ընտերքների վրայ շարուած
սպիտակ ատամները:

Նա այնպիսի մի եղանակով էր նայում եր-
գողներին երեսին, որ կարծես ուզում լինէր ասել.
«Հասկացէք, ինչ եմ ասում, հա»:

Օսմանն ու քիւրդ հովիւներն ևս երգութեան
յետոյ մտան հարևան սենեակը:

Անցան խորհրդաւոր, սրբազան ընթացքներ: Ժո-
ղովուրդը զգածուած սրտից հոգոցներ հանելով
նստեց:

— Ի՞նչ ունիք ասելու —, յօնքերը վրայ բե-
րելով հարցրեց դատաւորը Յարութիւն աղային,
որին նա վաղուց ճանաչում էր նրա տուած ստո-
րութիւններ պարունակող անթիւ գանգատներով:

Յարութիւն աղան համարձակ կերպով, կոպիտ
ու սխալ ռուսերէնով յայտնեց, թէ ինքը Սահակի
ու Օսմանի հետ մի առաւօտ գնալիս է եղել Սուլ-
տա, ճանապարհից նկատել է իւր — Մահմուդի չա-
լիքի միջից մի սպիտակ բան դուրս գալիս, երկու
վկաներով հասել է այնտեղ և բռնել Մարկոսի
ոչխարը, որի մասին վկայում են և խիւղամի հո-

վիւները, որ նոյնպէս տեսել են, ինչպէս կանչել է
հասկացողներ և վնասը կտրել տուել: — Ըստ օրինաց
պահանջում եմ իմ երկու հազար մանէթ վնա-
սըն, — իւր խօսքը վերջացրեց նա:

— Սահակ Պատուեան —, կանչեց դատաւորը:

Սահակը դուրս եկաւ: Գունդուկծիկ մարմ-
նով կանգնեց դատաւորի առաջ և ապուշ կտրած
հայեացքով նայեց նրա երեսին:

— Քո տեսածն ասա:

Սահակը մի անգամից կարծես դժուարու-
թիւն էր զգում ասելու: Նա թուրք կուլ տուեց,
աչքերը բացուխով անելով նայեց ղուրդը, դատա-
ւորին, որ կարծես ուզում էր ճանաչել, և հասկանալ
թէ ինչ էր ասում իրեն: Նայեց, բայց գինու
ազդեցութեան տակ ամեն ինչ խառնուեց նրա
մէջ, և նա չկարողացաւ որոշել, թէ ինչ էր մը-
տածում և ինչ պիտի անէր:

Յարութիւն աղան կողքից նայեց նրա երեսին
և հազաց: Սահակը թարգմանի խօսքի վրայ յարեց.

— Գիշերն ը՛ր՛... Օսմանը... ես, Յարութիւն
աղան գնում էինք Սուլտա. ճանապարհից տեսանք
որ մի սպիտակ բան է դուրս գալիս Յարութիւն
աղայի չալիքի միջից. ձիերս քշեցինք, տեսանք, որ
ը՛ր՛ Մարկոսի ոչխարն էր:

Վկայութիւնը տալուց յետոյ նա նստեց Յա-
րութիւն աղայի կողքին: Թէ ինչ խօսեցին այնու-
հետեւ քիւրդ հովիւներն, ինչ խօսեցին Մարկոսն
ու նրա հովիւներն՝ այդ բոլորը Սահակի համար

անհասկանալի մնացին: Նա բուրբուրով անզգայացած՝ այլևս ոչ մի կիրք և ոչ մի տանջանք չէր զգում, որ իրեն ազդում կամ տանջում լինէին:

Նա այդ դրութեամբ նստած, ապշուած ինքն արտայայտող աչքերով նայում էր դիմացն առանց որևէ հետաքրքրութեան, և երբեմն-երբեմն գլուխը քիչ ներքև խոնարհելով յօրանջում էր, երբ Յարութիւն աղան ասաց:

— Ոտքի ել:

Սահակն առանց հասկանալու, թէ բանն ինչումն է, կանգնեց:

Երբ ժողովուրդը խոնուեց և ցածր խօսակցութեան շուրջ բարձրացաւ դահլիճում, այն ժամանակ միայն Սահակն իմացաւ, որ արդէն դատը վերջացել էր:

— Ինչնք —, երեսին ուրախ ժպիտ խաղացնելով խօսեց Յարութիւն աղան —, վերջացաւ, տարանք:

Սահակն առանց ձայն հանելու մեքենայաբար հետևեց Յարութիւն աղային:

XVI.

Կեսօրն անցել էր:

Երկար ժամանակ անձրև չգալուց՝ երկիրը չորացել, ձեղքճըղքուել էր: Ախալքալաքից դէպի Կարգազ տանող ճանապարհը ծածկուել էր փոշիով ու կոշտերով:

Յարութիւն աղան իւր սովորական զուարճալի խօսակցութեամբ գիւղ էր վերադառնում Օսմանի հետ: Նրանց ետևից մի քանի քայլ հեռաւորութեամբ գնում էր Սահակը: Նա գլուխը խոնարհած կրճքին մտածում էր երազի նման անցնող իրականութեան մասին. Քանի մտածում էր նա, այնքան այդ եղելութիւնը նրան անհասկանալի էր թւում: Նա տակաւ առ տակաւ զգաստանալով՝ հետզհետէ զգում էր, թէ ինչ էր եղել այդ օրն և ինչ էր արել ինքը: Գիտակցութեան ջօրեղանալուց ճնշում էր նա և յաղթահարում: Այդ տանջող դրութեան մէջ, երբ նա իրեն ձիւ վրայ հաղիւ պահելով երկիւղած հայացքն լառել էր գետին՝ յանկարծ ետևից լսեց սրարշաւ ձիու ոտների տրոփիւն, և շուտ գալով թամբի վրայ՝ տեսաւ Մարկոսին: Վերջինս նրանց հասնելուն պէս ձին կանգնեցրեց, վայր թռաւ նրա վրայից և գոռաց:

— Սպասեցէք:

Յարութիւն աղան և Օսմանը վարկենաբար նայեցին իրար երեսին: Մարկոսի յանկարծ երևալը, նրա արիւնով լցուած կատաղի աչքերն, երեսի այլալուծած արտայայտութիւնը կատարելապէս շփոթեցրին, երկիւղ ազդեցին նրանց:

— Սպասեցէք —, կրկնեց Մարկոսն և հանելով գաշոյնը շարժեց օդի մէջ: Յարութիւն աղան և Օսմանն երկիւղից ձգեցին ձիերի սանձերն և թեքուեցին դէպի ետ: Բո-

պէն վճռական էր: Օսմանը ձեռք տարաւ սրին և ուզեց յարձակուել Մարկոսի վրայ:

— Հեռո՛ւ, չնչհաւատ թուրք, թէ չէ մոռնաւ արիւնդ էստեղ և եթ կլթափեմ—, տեղում կանգնած մնալով խօսեց Մարկոսն և չոքեց գետին:

Յարութիւն աղան կատարելապէս վախեցած, այդ արիւնն աչքն առած մարդուց, մնաց միայն քարացած նայելիս:

Մարկոսը բաց արեց կուրծքը, դաշոյնի ծայրով փորեց գետինը, բռեց հողը և նայելով դէպի երկինք խօսեց—, հէյ, արդարադատ Աստուած, Բեզ եմ թողնում անարդար մարդու և նրա սուտ վկաների դատաստանը: Դո՛ւ գիտես—, և երեք անգամ հողը ձգեց դէպի երկինք: Հողն օդում ցրելի գալով թափուեց նրանց երեքի և Սահակի գլխին:

Այդ այնքան արագ և այնքան ազդու կատարուեց, որ Յարութիւն աղան չնկատեց, թէ ինչպէս վեր կացաւ Մարկոսն, ինչպէս մօտեցաւ ձիուն, որ ճանապարհից քիչ հեռու կանգնած, դունչը գետնին երկարացրած՝ փռուած էր և աչքերի տակով իւր տիրոջը նայում: Մարկոսը թռաւ ձիու վրայ, դաշոյնը շողացրեց արևի գլմաց և դէպի երկինք նայելով խօսեց.—Նրան եմ թողնում, Նրան. Նա թող դատաստան անէ—, և մտրակեց երկվարին:

Սահակի մէջ վայրկենաբար ամեն ինչ տակն

ու վրայ եղաւ. Մարկոսի ալլալուած գէմքը, լուսահատական, արդար զայրոյթից բղխած խօսքերն, անէծքը սարսափեցրին նրան: Հողի մասնիկները, որ վերևից ընկան նրա գլխին սւ երեսին՝ կարծես ելկնքից թափուող կարկուտ, կայծակ լինէին:

Գինու ազդեցութիւնը ըռպէսապէս վերացաւ այդ անէծքից, որպէս վերանում է նա արբած լանցաւորի միջից մահուան դատաւճիռը լսելիս: Այդ ըռպէ նա ազատ կերպով խօսել էր ուզում, բայց թուլացած մարմինը չէր հնազանդում նրան: Իներքուստ և արտաքուստ կարծես նա կապուած կաշկանդուած լինէր: Նա կուչ եկաւ թամբի վրայ, ամուր բռնեց ղաշից և աչքերը փակեց:

Խելօք երիվարն երկու անգամ վեր ցնցեց գլուխն և հետևեց իւր ընկերներին:

Կէս ճանապարհին Օսմանը բաժանուեց:

Երբ գիւղ հասան՝ Յարութիւն աղան պառկեց հանգստանալու, իսկ Սահակը գնաց տուն:

Նա բախում ոչոքի չպատահեց. և չէր էլ ուզում որ մէկը տեսնէր իրեն, հետը խօսէր: Ինչ որ ծանր երկիւղ զգալով իւր սրտում, նա լուռ մտուզումի օդէն, նստեց սադրի վրայ և գլուխը խոնարհելով կրծքին ընկղմեց մտածմունքի մէջ: Նա մրտածում էր այդ օրուայ եղելութիւնների մասին. և քանի շատ էր մտածում՝ այնքան նրան տանջող էր դառնում տեղի ունեցած իրականութիւնը: Երազ, սպանիչ դանդաղութեամբ անցնող երազ էր թւում այդ օրը նրան: Մտածելիս երբեմն-եր-

բեմն նա, նայում էր դէպի գոմի դուռը, թէ արդեօք մէկը չէ՞ ներս մտնում և տեսնում իրեն: Այդ ըոպէ նա այնպիսի մեծ ամօթ էր զգում իւր արածի համար և այդ արածով այնքան մեղապարտ էր համարում իրեն, որ իւր անձն, իւր գոյութիւնը մի սարսափելի ատելի բան էին ներկայանում իրեն: Այդ ըոպէ նա իբրոյր սրտէ ցանկանում էր ջախջախուել, ոչնչանալ, գետնի տակը անհետ կորչել, որ գոյութիւն չունենար և ոչոք նրան չտեսնէր, նրա մասին ոչինչ չգիտենար, ոչինչ չխօսէր:

Նրա աչքի առաջ շարունակ պատկերանում էր Մարկոսը, որ խնդրում, աղերսում, համոզում էր, հող էր ձգում գլխին և անիծում էր. ահա հողը կարծես դեռ թափւում է նրա գլխին... «Ի՞նչ արի ես...». քթի տակ հազիւ արտասանեց նա: Հոգեկան ծանր յուզմունքից նրա վրայով մի տենդային սարսուռ անցաւ: Նա գլուխն ամուր սեղմեց երկու ձեռների մէջ և արմուկները դրեց ծնկների վրայ: Այդ դրութեան մէջ ինչ որ խուլ ձայներ լսուեցին: Նա այդ ձայներից վախեցած գլուխը դողալով վեր բարձրացրեց և տեսաւ, որ գոմը մի ակնթարթում յանկարծ լուսաւորուեց: Այդ երևոյթից սաստիկ վախեցած նա բարձր ձայնով ճչաց և ուզում էր դուրս փախչել, երբ դռան մօտ տեսաւ մի պատկեր, որից այդ լոյսը տարածւում էր գոմի մէջ: Սահակը սարսափից փրուուեց դետնին և երեսը դարձրեց միւս կողմը:

Պատկերը օդի մէջ ձայն հանելով թափ անցաւ. միւս կողմն և աչքերի զարհուրելի արտայայտութեամբ կանգնեց նրա դիմաց: Յանկարծ չքացաւ լոյսն և տիրեց թանձր խաւար: Նա չորս կողմը նայեց, տեսաւ, որ ոչոք չկար: «Ի՞նչ էր սա», լեղապատառ եղած հազիւ շշնջաց նա, և մեռելի գոյն ստացած, ձեռներն ու ոտները կարծես հաշմացած, ցնցուելով դառաւ դէպի դուռն և պատերը բռնելով հազիւ կարողացաւ դուրս փախչել. ճանապարհին մի քանի անգամ պատէպատ դիպչելով և վայր ընկնելով նա հազիւ կարողացաւ տուն հասնել և նստեց թնդրափի վրայ: Սրտի սաստիկ բաբախելուց, ջղերի ցնցումներից նրա կուչ եկած մարմինը արագ-արագ բարձրանում էր և ցածանում:

— Էս ի՞նչ է երեսիդ գոյնը, վնւյ, ի՞նչ է եղել, բողանամ ես, հիւանդ հօ չես—, ներս մտնելով վախեցած խօսեց Սարվին:

Աշխատելով կոշ մօտ իրեն արիացնել՝ Սահակն ուղղուեց տեղում և ճնշուած կոկորդով ասաց, — ոչինչ չկայ:

— Ինչպէս թէ. . . Վնւյ, հողն իմ գլխիս, քաղաք գնացիր, ետրաբ ի՞նչ պատահեցաւ, տեղ ձրգեմ, քիչ պառկիր, հանգստացիր: Գնամ տէր-տէրանց տանից քիչ չայ ու շաքար ուզեմ, բերեմ չայ եփեմ խմիր, քրտնիր, տնցնի:

— Զէ, ոչինչ հարկաւոր չէ, լաւ եմ. մէկ դուրս գնամ... ծանր շունչ քաշելով և քաղաք բառի

տպաւորութիւնից նորից տանջուելով խօսեց նա և տեղում մի անհանգիստ շարժում գործեց, ինքն էլ չիմանալով, թէ ուր էր գնալու:

— Այվանը պիտի գնաս:

— Այվանը —, կրկնեց Սահակն և օրոտում մի դառն նողկանք զգաց դէպի այդ շինութիւնը, որ այդ բոպէ սարսափեցնող տպաւորութիւն գործեց նրա վրայ: Օ՜հ մի ջուր տուր. սիրտս սաստիկ այրւում է:

Սալվին մօտեցրեց թասով ջուրը, ձեռը դրեց նրա լայրժիւն ճակատին, որի վրայ գնդասեղի դըլխի նման դուրս էին ծորել սառն քրտնքի մանր կաթիլները: Սահակը ջուրը խմելուց յետոյ գլուխը վերև բարձրացրեց և նայեց տան ձեղունին, որի գերանների վրայ խաղում էն արևի թեք ընկած ճառագայթները:

Սալվին տեսնելով նրա գունատուած դէմքն, ապուշ դարձած հայեացքը, փոս ընկած աչքերը՝ ծանր հառաչեց և երեսն ետ դարձնելով՝ սրբեց աչքերում փալլող արտասուքը:

Սահակի աչքերի միջով մի կենդանութեան շարժում անցաւ և նա նստած տեղից յանկարծ ոտի կանգնեց: Նրա դէմքի արտայայտութիւնը մի ակնթարթում փոխուեց և վայրկեանաբար հոգումէջ ամեն ինչ կարծես լեղաշրջուեց:

— Ե՛տ եմ կենալու, ետ —, աչքերը լալն բաց անելով խօսեց նա և տեղում շարժուեցաւ, — վաղն և եթ կգնամ դատարան, կասեմ, ինչ որ գիտեմ:

— Վճույ, ի՞նչ է՞ խօսում Աստուած ջան. սրան խօսեցնում են...

— Բայց, առաջ կգնամ իրեն Յարութիւն աղային կասեմ. յետոյ Մարկոսին, յետոյ ամենքին: Եղաւ, եղաւ, կանեմ —: Այդ բոպէ նրա աչքերը վառւում էին. նա կարծես տենդի մէջ լինէր:

— Ի՞նչ է, այ մարդ, ում հետ ես խօսում, վճույ, քուանսմ ես, ուս ո՞ւմ հետ է խօսում —, տրորուելով ծնկանը խփեց Սալվին:

Սահակը մի քանի վայրկեան անթարթ նայելով ամուսնու երեսին, կարծես աշխոյժի եկաւ, կանգնեց ոտքի և հաստատ քայլերով շարժուեց դէպի դուռը:

— Սա ուր է գնում... Ո՛ւր ես գնում, այ մարդ —, խօսքը նրան ուղղելով դէպի դուռը գնաց Սալվին:

— Գնում եմ ալվան —, խրոխտ ձայնով կրրկնեց Սահակը:

— Ի՞նչ հաւար է հիմայ ալվանը. հիւանդ ես, արի՛ տեղ գցեմ պառկիր, հանգստացիր:

— Զէ, գնալու եմ:

— Ի՞նչ մի շտապով բան կայ, որ... կէս համոզեցուցիչ կէս ստիպողական ձայնով խօսեց Սալվին և ուզեց նրան խանդարել:

— Շտապով է, ապա, թո՛ղ —, նրա վրայ գոռաց Սահակն և ելաւ դուռս:

Շուտ կգնա, տեղդ պատրաստեմ:

— Կգամ —, ձայնեց Սահակը, որ արդէն անցել էր փողոցի միւս կողմը:

Սալվին ձեռք ծոցումը մնաց նրա ետեւից նայելիս: Այդ ըոպէ ինչ որ անհասկանալի բան կարծես ստիպում էր նրան գնալ ամուսնու ետեւից, բռնել, ետ դարձնել նրան, չթողնել հեռանալու, բայց Սահակն արդէն չէր երևում:

XVII.

Փողոցներում մարդիկ չէին երևում: Մի քանի մանուկներ կտուրներում հողերի վրայ տարածուած մանր քարերից փոքրիկ տներ էին շինում տունտուրիկ էին խաղում: Սահակը գնում էր գողտագողի կերպով նայելով չորս կողմը, կարծես չէր ուզում, որ իրեն տեսնող լինէր. նրա մըտքի ու հոգու մէջ ամեն բան յեղաշրջուել էր:

Գնալիս նա մտածում էր, թէ ինչպէս գնայ Յարութիւն աղայի մօտ, ինչպէս սկսի խօսակցութիւնն և ինչպէս յայտնի մտածածը, որոշածը: Նրա շփոթուած ուղեղի մէջ մտքերը հետզհետէ սկսում էին հանդարտել, հանգչիլ որոշ կէտերի վրայ: Բայց յանկարծ ինչ-որ մութ երկիւղ տիրապետեց, կաշկանդեց նրան: Նա կանգնեց աւելի լաւ մտածելու, խորհելու: — Ե՛հ —, գլուխը վեր բարձրացնելով արտասանեց նա, — կգնամ, ուղղակի կասեմ: Ի՞նչ պիտի անի. պիտի սպառնան, պիտի վնասի... ես կասեմ որ Մայր-Աստուածածինն է

ինձ հրամայում... չեմ կարող. բարաթը կուզի՝ բարաթը կտամ. տուածը կուզի՝ ետ կտամ. Բնչ պէտք է անի: Կգնամ, այո՛, կգնամ —: Այդ խորհրդածութեան մէջ ընկղմած նա գլուխը վեր բարձրացրեց և նայեց դէպի այվանը: Այդ շինութիւնը յանկարծ նրա վրայ այնպիսի մի ահարկու սարսափ ազդեց, որ նա ցնցուեց. նա զգաց, թէ որքան ծանր էր այդ շինութեան մէջ կատարելիք գործը և որքան մեծ: Նրա վրայով մի սարսուռ անցաւ և նրան նորից տիրեց անհամարձակութիւն:

— Այս որ ասում եմ, յետո՛յ —, գետնին նայելով և դէպի մի կողմ քաշուելով, ձեռները գրկպանը դրած շշնջաց նա, — չէ՛ որ բոլոր տունսուտեղս կքանդի, աւերակ կդարձնի. մանրուխոշորըս աւուր հացի կարօտ ու մերկ կըթողնի... Ի՞նչ անեմ, Աստուած իմ... Նրա մտքերը նորից խառնուեցին և նորից նա ընկաւ տանջուող ու տատանուող դրութեան մէջ. նա ձեռք դրեց ճակատին և մնաց կանգնած: — Ի՞նչ պիտի անի —, մտած մուռքի մէջ կարծես մի բան գտնելով յանկարծ դուրս թռաւ նրա շրթունքներից. — Բնչ ուզում է լինի. պիտի չարչարի, տանջի, սպանի՝ ես պատրաստ եմ. սպանուելուց էլ հօ աւելի սարսափելի բան չկայ: Կմեռնիմ, այս բանը չեմ տանի. այո՛, չեմ տանի:

Այդ ժամանակ փողոցի ծայրից լսուեց ձիու ոտի տրոփիւն, որից նա զգաստացած ետ նայեց և տե-

սաւ Մարկոսին: Նրան տեսներուն պէս Սահակի վրայով մի ցուրտ սարսուռ անցաւ, որ փոխուեց վախի:

— Մարկոս ջան —, դէպի նրան գնալով հազիւ խօսեց նա և բռնեց նրա շորից:

Մարկոսը զգուանքով նայեց նրա երեսին և նոթերը վրայ բերելով աչքերը չռեց:

— Մարկոս ջան, կ'աց... բան եմ ասելու:

— Ի՞նչ է... անհոգի, անաստուանձ. տունս քանդեցիր, դեռ էլի...

— Ա՛խ. ինչ ասեմ... մէկ կ'աց Մարկոս ջան, տես ինչ եմ ասում —, ճնշուած ձայնով նրան ընդհատեց Սահակը:

— Էլ ի՞նչ ասելու բան մնաց. ինչ որ ունէիր ասելու՝ դու էնտեղ պէտք է ասէիր. հիմայ գնա՛ք աւազակ աղայիդ ասա՛, որի համար սուտ վկայելով տունս աւերեցիր, գնա՛...

— Մարկոս ջան, իմացիր, թէ ինչ եմ ասում. ա՛խ... իմացիր ինչ եմ ասում, յետոյ էլի նեղացիր, էլի խփիր. ես մեղաւոր եմ, ես, ես, ես... Լեզուն բռնուելով կրկնեց նա:

Մարկոսը լսելով Սահակի պաղատաւից խօսքերը, նրա դէմքի բարի և տանջուած արտայայտութիւնը՝ մեղմեցաւ, կատաղութիւնը զսպեց և խօսեց. — նոր ես ասում «մեղաւոր եմ». ինչո՞ւ չըլսեցիր էնքան աղաչանքս, պաղատանքս:

— Ես էլ դրա համար եմ ուզում խօսիլ. մէկ

իջիր ձիուցդ Մարկոս ջան, մէկ իջիր, ինչ լսի՛ր. ազատիր ինչ էս կրակից, ես մեռած եմ..

Մարկոսն իջաւ ձիուց և կանգնեց նրա տուօջ:

— Ես փոշմանել եմ .. արածիս համար տանջւում եմ, կենդանի այրւում եմ. ես չեմ կարող տանել սուտ վկայութիւնս. չեմ կարող տեսնել օջաղիդ աւերուելը: Ես... որոշել եմ ետ կենալ արածիցս... ես...

— Ի՞նչ ասացիր, ինչպէս —, յանկարծ ուրախացած աղաղակեց Մարկոսը, որին Սահակի խօսքերը կարծես անհաւատալի էին թւում:

— Ես որոշել եմ վաղն և եթ գնալ դատարան ասել, որ ցուցումս փոխեն. սուտ եմ վկայել, խաբել են, արբած ժամանակս եմ ասել:

— Ի՞նչ ես ասում —, բարութեամբ Սահակի երեսին նայելով խօսեց Մարկոսը, որի մէջ դէպի Սահակն եղած ատելութիւնն արդէն վերացել էր և փոխուել մի տեսակ սիրոյ, համակրանքի:

— Ձէ, եղբայր, մարդուս խօսքը որտեղից դուրս է գալիս, հոգին էլ էնտեղից է դուրս գալու. թո՛ղ իմ օջաղս աւերուի, քան պատճառ լինիմ ուրիշի օջաղն աւերուելուն:

— Ուղի՞ղ ես ասում, Սահակ ջան, չե՞ս խաբում —, ուրախութիւնը սաստկացած հարցրեց Մարկոսը:

— Էն երկնքի գետնի Ստեղծողը վկայ, սուտ չեմ ասում, չեմ խաբում. վաղն և եթ գնալու եմ

դատարան, ամեն ինչ դատաւորին ասելու եմ.
Ինչ ուզում է լինի:

— Սահակ ջան, իմ կէս-աստուածս, իմ ազա-
տարարս. էլ ինչ ասեմ, ինչպէս-ինչպէս շնորհա-
կալ լինիմ. էլ ինչ լաւութիւն կ'լինի...

Սահակը քիչ էր մնում այդ բոլոր յայտներ,
թէ ինչո՞ւ էր ինքը սուտ վկայ եղել, ինչ կար,
բայց աւելի ամաչելուց, քան անհամարձակութիւ-
նից զսպեց իրեն և գլուխը կախեց ցած: Նրա ե-
րեսը վայրկենաբար կարմրեց:

— Սահակ ջան, ես քո Ստեղծողիդ մատաղ—
խօսեց Մարկոսն և շրթունքները հպեց նրա շրթ-
թունքներին: Նրա աչքերից ուրախութեան ար-
տասունքի երկու կաթիլ գլորուեցան Սահակի երե-
սին:

— Անհոգ կաց, Մարկոս ջան, խօսք տուի՝
կանեմ:

— Ե՛, երեկոյեան արի խօսինք, մի լաւ խոր-
հուրդ անենք:

— Կգամ, կգամ—, մեքենայաբար կրկնեց
Սահակն և նրանք բաժանուեցան:

Սահակը գնաց այլմանը:

Յարութիւն աղան փափուկ անկողնում պառ-
կած դեռ խումվացնում էր: Ինի խաղաղութեան
մէջ նա երազում էր օրուայ եղելութիւնը, աջո-
ղութիւնը. և ահա վերջին յաղթանակը, նպատա-

կին հասնելը.— ամառային տաք օր է. Դէօզդադ
սարի գլխին արածում է Մարկոսի հօտը, դատա-
կան պրիստաւն եասաուլներ ու մի քանի ուրիշ
անձնաւորութիւններ հետն առած բարձրանում է
այդ սարով: Ահա հասնում են ոչխարին: Դատա-
կան պրիստաւն սկսում է վեր գրել ամբողջ հօտը:
Մարկոսը խելակորոյս, արտասուենքն աչքերին, ծը-
խի կծու քուլաներն ագահութեամբ կուլ տալով,
յուսահատ դրութեամբ ետ ու առաջ է գնում: Ա-
հա Թազանն իւր մանր որդիներով սկսել է լալ,
աղաչել... «Ձի լինի», լսում է սենեակի խաղա-
ղութեան մէջ, «գրիւր, վեր գրիւր»: Ահա Մարկոսը
մօտենում է, կնոջը թեւիցը քաշում, նախատում:
Որդիքը լաց ու աղաղակ են բարձրացնում: Մար-
կոսի հովիւները կզակները գետնին երկարացրած
մահակների ծայրերին դրած՝ յուսահատ արտա-
յայտութեամբ նայում են դատական պրիստաւի
շարժուող, գրող ձեռին, խորը հառաչներ են ար-
ձակում: Ահա եասաուլներն իրենց յատուկ ան-
գթութեամբ հաւաքում են ոչխարն և համարում:
Դատական պրիստաւն առաջարկում է յետաձգել:
«Ձի կարելի», նորից լսում է քնածի շրթունքնե-
րից: Ահա Թազանը նորից մօտենում է ոչխարնե-
րին, փարւում է նրանց վզով, համբուրում նրանց
աչքերն և արտասուք թափելով հրաժեշտի ողջոյն
տալիս. նրան հետևում են մանուկները. նրանցից
ամեն մինը մի ոչխարի մօտենալով գրկում է նրա

վիզն և աշխատում թեև Երի մէջ պահել: Բոլորը տխուր են: Դատական պրիստաւը գրում է...

— «Անօրէն, ահա քո պատիժդ», լանկարծ նրա վրայ յարձակուելով գոռում է Մարկոսն և դաշույնը խրում սիրտը: «Ե՛յ, է՛յ», բղւում է նա և վեր թռչում:

— Օ՛հ... անօրէն, ինչպէս վախեցայ... Բայց ինչ լաւ երազ էր... է՛յ, Հազրօ — տեղում ուղղուելով կանչեց նա և կանգնեց ոտքի, ապա կուչ բերած ցուցամատերով տրորեց աչքերն և հազաւ սենեակի մուծակները:

Հազրօն ներս բերեց քլթքլթացող հեշտանուն և վառեց լամբարը:

Յարուժիւն աղան շուրջուեց, թրջուած երեսսրբիչը կախեց պատից իւր տեղում, սանրուեց, գնաց պատշգամբ և նստեց փոքրիկ սեղանի մօտ, որի վրայ դրած էր մի բաժակ թէյ: Նա հրամայեց Հազրօին Սահակին ասել, որ գնայ նոր հընձած խոտերին նայի և տեղեկութիւն բերի, թէ էլի քանի նոր դէզ է դրած:

XVIII.

Գիշերային խաղաղութեան մէջ սենեակում միայնակ ման էր դալիս Յարուժիւն աղան: Նրա հանդարտ քայլերի ձայնը հազիւ էր լսւում տիրող լուրժեան մէջ: Սենեակի յատակը կամաց դողդողում էր նրա ոտները տակ:

Օրուայ աջողութիւնից նրա գէմքին մերթ փալում էր խորհրդածութիւն, մերթ՝ ուրախութիւն: Գիշերից բաւական անցել էր, որ դաշտից վերադարձաւ Սահակը: Սլոքքան ու շանաւուց լետոյ նրա ալվան վերադառնալը Յարուժիւն աղային փոքր ինչ տարօրինակ թուաց, և նա հարցրեց. — խոտերին աշեցիր. ինչո՞ւ էլ տուն չգնացիր: Ասենք, հա, ինչ լաւ եկար. Հազրօն տեղ գնաց, գուցէ ուշանայ. ալվանում մարդ չկայ:

— Այո՛, նայեցի: Քեզ բան ունիմ տսելու՝ եկայ —, հազիւ համարձակուելով պատասխանեց Սահակը:

— Ի՞նչ բան —, նրա ալլալուած գէմքին նայելով հարցրեց Յարուժիւն աղան:

— Հարկաւոր բան է —, դեռ անհամարձակութեամբ տիրապետուած արտասանեց Սահակը:

Յարուժիւն աղան նորից նրա երեսին խորհրդաւոր հայացք ձգելով մի քանի վայրկեան ընկմեց մտածմունքի մէջ և ապա խօսեց. — Ի՞նչ է, աստ տեսնենք:

— Աղա —, սիրտը քաշելով արտասանեց Սահակը:

— Ի՞նչ կայ, որ քաշոււմ ես, աստ՛, էլի:

— Աղա —, ճնշուած ձայնով խօսեց Սահակն —, ես րուայ արածիս համար... Ը՛ր՛... խիղճս տանջում է. եկել եմ քեզ ասելու, որ... և չկարողանալով շարունակել՝ լռեց:

— Որ ի՞նչ —, նրա խօսքերից մի բան կասկածելով հարցրեց Յարուժիւն աղան:

— Մարդուս խօսքը որտեղից որ դուրս է գալիս, էնտեղից էլ հոգին է դուրս գալու —, սիրտը քաշելով շարունակեց նա. — ճշմարտութիւնը լաւ է ան է:

— Ինչ է որ —, սրտում կասկածն աւելանալով նորից հարցրեց Յարութիւն աղան:

— Ես... ես... երկիւղից տատանուելով հազիւ խօսեց Սահակը, — վաղը գնալու եմ դատարան, գետնին նայելով շարունակեց նա, — ցուցումս ետ...

— Ի՞նչ ես ասում —, չսպասելով նրա խօսքին սկսեց երկիւղով խօսեց Յարութիւն աղան —. դժուր է ես, քնչ է, թէ հանաք ես անում...

— Ձէ, աղա, ինչպէս կ'համարձակուիմ քեզ հետ հանաք անել. ես եկայ առաջուց քեզ ճշմարիտ կերպով իմաց տալու:

Յարութիւն աղային տիրապետող երկիւղը, որ նա գեռ աշխատում էր ցոյց չտալ, փոխուեց սարսափի: Նա հայեացքը չհեռացնելով Սահակի երեսից՝ խորասուզուեց մտածմունքի մէջ, տեսնելով, որ Սահակի հաստատակամութիւն յայտնող խօսքերից ինչ որ վատ հոտ էր փչում: Այդ դրութեան մէջ նա մի երկու անգամ շփեց ճակատն, և երեսին ժպիտ խաղացնելով խօսեց. — նստիր տեսնենք ի՞նչ է պատահել:

— Ոչինչ չէ պատահել —, նրա դիմաց նստելով խօսեց Սահակը, — խիղճս սաստիկ տանջում է ինձ, որ երգուելով հաստատ չտեսած բանիս սուտ վկայ եմ եղել, ես —, սիրտը՝ նորից քաշելով շա-

րունակեց նա, — չեմ կարող Աստուծոյ անունով խաբելով մէկի օջաղն աւերուելու պատճառ դառնալ:

Յարութիւն աղան պարզ տեսնում էր, որ մի մեծ վտանգ էր սպառնում իրեն այդ մարդը, վրտանգ՝ որից դուրս գալը ոչ միայն դժուար, այլ և անհնար էր լինելու: Սպառնացող վտանգից երկիւղը նրա սրտում հետզհետեւ սաստկանում էր: Նա մտածեց հանգստութեամբ վերաբերուել գործին և հարցրեց:

— Ի՞նչպէս չես տեսել. ապա էն Մարկոսի ոչ խարը չէր, որ սարի գլխից տեսանք:

— Չգիտեմ, ոչխար տեսել եմ, բայց չգիտեմ ո՞ւմ ոչխարն էր. գուցէ...

— Ի՞նչ գուցէ:

— Գուցէ Խիւղամի ոչխարն է եղել:

— Ինչպէս թէ Խիւղամի —, նեղացած վրայ բերեց Յարութիւն աղան. — ապա Օսմանը, Խիւղամի հովիւները սո՛ւտ են ասում:

— Չգիտեմ. միայն էս կայ, որ ես իմ աչքովս հաստատ չեմ տեսել. ուստի, ուստի —, արիանալով կրկնեց Սահակը, — սուտ վկայ չեմ կարող լինել:

Յարութիւն աղան տեսնում էր, որ ինքն երկիւղից ճնշւում է, վերկացաւ տեղից և աչքերում պատիր ժպիտ խաղացնելով մօտեցաւ նորան:

— Խաբել եմ քեզ, Սահակ ջան, խաբել. դու ինձ մօտիկ արա՛, լաւ է, որ ինձ առաջուց տուցիր թէ չէ նրանք գլխիդ մի փորձանք կրերէին:

— Ի՞նչ փորձանք —, արեացած հարցրեց Սահակը։
Ուզե՞նալով գործ դնել իւր բոլոր միջոցները զանազան երկիր ղներով, թէ խաբուսիկ ճարտար լեզուով, առաջարկութիւններով՝ Յարութիւն աղան ասաց։— Որ զնա՞ս դատարան է՞ք բանն ասես, որ քեզ Սիբիր քշել տան, կորցնեն։ Սրէնքն երգումով ցուցումը փոխողին գիտէս ինչ կանէ։

— Ինչ էլ որ լինի, ես ետ եմ կենալու. միայն թէ էս ծանր բանը սրտիցս հեռանայ։

Այդ խօսքերի վրայ երկիւղը կատարելապէս տիրեց Յարութիւն աղային։ Նա արգէն բոլորովին վախենում էր այդ գունդուկծիկ մարդուց, նրա համարձակ ասած խօսքերից, յայտնած որոշումից։ Ամեն բան մոռացած՝ նա մտածում էր, թէ ի՞նչ հնար, ի՞նչ միջոց գործ դնէր, որ համազէր, խաբէր այդ մարդուն, կորուստ սպառնացող վտանգի առաջըն առնէր։

— Սահակ ջան —, քաղցր ձայնով խօսեց նա, — նրածք խաբել են, ուզե՞նալով քեզ էլ վնասել, ինձ էլ, լու մտածիր։ Ի՞նչ լսիր, ես քեզ ինչ որ կասեմ, գիտցիր՝ որ քո լաւն եմ կամենում։ Ինչ որ մտածել ես...

— Ոչ —, դրական կերպով նրա խօսքը կտրեց Սահակը, — չեմ կարող։

Այդ պատասխանի վրայ Յարութիւն աղան մնաց բոլորովին շուարած։

— Սահակ ջան —, նրա ձեռք բռնելով երեսին ժպիտ խաղացրեց Յարութիւն աղան, — լսիր,

ինչ եմ ասում քեզ. ինչքան որ լաւութիւն չեմ արել՝ նրա պէս էլի տառն անեմ. ի՞նչ ես ուզում ասա ինձ, էս ըսպէիս տամ, Աստուծոյ անունով քեզ հաստատ խօսք եմ տալիս, բոլոր ունեցածս քեզ լինի, մի անիր։

— Ո՛չ մի բան չեմ ուզում —, կտրուկ կերպով վրայ բերեց Սահակն և գլուխը շարժեց։

— Ապա ի՞նչ —, սրտում զայրոյթն աւելանալով նեղացած խօսեց Յարութիւն աղան, և բարկութիւն արտայայտող աչքերով նայեց նրա երեսին. — ապա ի՞նչ ես ուզում, ասա՛ տեսնենք. ես քո երեխան եմ, ի՞նչ է, որ խաղացնում ես։

— Ոչինչ չեմ ուզում —, նոյն հանգստութեամբ կրկնեց Սահակը։

Յարութիւն աղայի մէջ երևան եկած զայրոյթը վայրկեանաբար փոխուեց կատաղութեան։ Նա նեղացած և բարկացած այն բանից, որ չի կարողանում համոզել, խօսք հասկացնել նրան, հետըզհետէ կրքոտող աչքերով նայում էր Սահակի երեսին և մի ըսպէ ուզում էր յարձակուել, ոչնչացնել այդ փոքրիկ ողորմելի մարդուն, որ իրեն այդպիսի ընդգրկմութիւն և հաստատամտութիւն էր ցոյց տալիս —, սարսափելի վտանգ սպառնում իւր չնչին գոյութեամբ։

— Ի՞նչպէս թէ չեմ —, կատաղի աչքերով նրա երեսին նայելով յանկարծ գոռաց նա. — եթէ էդպէս էր, ապա ինչո՞ւ էն գլխից վկայ էիր գտնում. քեզ ո՞վ աղաչեց։

— Ի՞նչ —, նրա հայեացքից սարսափելով խօսեց Սահակն. — այնժամանակ չգիտէի՝ վկայ էի լինում, իսկ այժմ գիտեմ ետ եմ կենում:

— Որ խաբեբայութեամբ բարաթդ առնէիր սպտուէր, հօ, որ ինձանից էնքան լաւութիւններ տեսնէիր... գիտէս ետ քեզ ինչ կանեմ:

— Բարաթդ առնայ, պատուեցի, նոր բարաթ կտամ. տուած հացիդ նոյնպէս բարաթ կտամ... Բնչու ես...

— Ի՞նչպէս թէ «ինչու». զեռ իմ դէմ հա՛տարձակում ես խօսել, ես քեզ Սիբիր քչել կտամ... տունդ ու տեղդ մօխիր կցանեմ... ճանաչում ես ինձ, ես ո՞վ եմ:

— Ինչո՞ւ ես նեղանում —, նրա բարկութիւնից ճնշուած հազիւ խօսեց Սահակը, — որ չեմ կարող, որ ..

— Ի՞նչ չես կարող... ապա ինձ վնասել կարող ես. ես քեզ կսպանեմ. ինձ Յարութիւն աղա ես ասում:

— Չեմ կարող, ուզում ես սպանիր. ես կանգնած եմ —, գործանալի յամառ հաստատակամութեամբ ասաց Սահակը. թուում էր, թէ նա մինչև անգամ ամենևին չէր վախենում իւր առաջ կանգնած այդ կատաղի մարդուց, որ այդ բոպէին պատրաստ էր անխնայ յարձակուել նրա վրայ և պատառ պատառ անել:

Յարութիւն աղայի ճակատին հետզհետէ առաջանում էին կնճիւռներ, որոց մէջ դուրս էին

ծորում քրտնքի մանր մասնիկները: Կապուտկած դէմքը արտայայտում էր զարհուրանք և զաղանութիւն: Բարկութիւնից նա արագ-արագ շնչում էր, որից նրա քթածակերը շուտ-շուտ մեծանում էին և փոքրանում: Այդ սարսափացնող դրութեամբ նա կանգնած էր Սահակի դիմաց և նայում էր նրա երեսին:

— Իմ ամեն լաւութիւններս ոտի տակ տաս, էն գլխից խօսք տաս, գործը վճուռի և այժմ էլ ասես, թէ չեմ ուզում, որ ինձ կորցնէս... ես քեզ շան սատակ կանեմ. շան սատակ —, նորից ճչաց Յարութիւն աղան և յարձակուեց նրա վրայ:

Սահակը կուչ եկաւ, բայց Յարութիւն աղան բռնեց նրա կոկորդից. — չէս, հօ, չէս... ասա, շուտ թողնելո՞ւ ես թէ չէ...

— Աղղղայ աղ՛ղղ՛ —, սեղմուած կոկորդի միջից արտասանեց Սահակը, որի դէմքն արդէն կապուտիկ էր և արիւնով լցուած աչքերը դուրս էին եկել բներից:

— Ի՞նչ աղա, հիմայ խանջալս փորդ կկոխեմ, ասա՛, չէս:

Սահակի շունչը կտրուել էր և դէմքը բոլորովին կապուտիկ էր, նա անդօր էր խօսելու:

— Ասա՛, ա՛յ, խեղդելո՞ւ եմ, ետ չէս կենալու:

— Չէ —, ետ ցնցուելով և կոկորդը նրա ձեռից ազատելով ճչաց Սահակն, — Բնչ, ուզում ես սպանել, կանգնած եմ. ես միայն իմ Աստծուցս եմ վախենում —, հեալով աւելացրեց նա:

Սահակի աչքերը դեռ լիքն էին արիւնով. նրա բերանից—քթից վազում էր թուր, փրփուր: Նա կարմրած երեսով կանգնած էր պատի մօտ և բոլոր մարմնով ցնցւում էր:

—Տօ, անօթի, համ իմ լաւութիւնս վայելես, համ էլ իմ վրայ գողան. էս ըստէիս ըիվնիւրս ջանիդ կքաշեմ,—կատաղութեամբ գոռաց Յարութիւն աղան և ձեռը տարաւ ատրճանակին:

—Կանգնած եմ, սպանիր: Ա՛յ, Նա՛, Նա՛, ամեն բան տեսնում է—բարձր ձայնով կրկնեց Սահակն և ձեռը բարձրացրեց դէպի վեր:

—Ես քեզ կտոր-բրդուճ կանեմ, անօթի շուն—, նորից ճչաց նրա վրայ Յարութիւն աղան և դուրս քաշեց դաշոյնը:

—Կանգնած եմ կանգնած. խի՞ր, ես չեմ կարող Աստծու անունով խաբել—, սաստիկ զայրացած ոտը գետին խփելով բղաւեց Սահակն և շարժուեց առաջ:

Յարութիւն աղան մերկացած դաշոյնը բռնած երկու քալ առաջ վազեց, ձեռը բարձրացրեց, բայց յանկարծ կանգ առնելով դաշոյնը մի կողմ շարժեց:

Նրանք տեղերում կանգնած մի քանի վայրկեան մնացին իրար երեսի նայելիս: Դեռ ցնցւում ու արագ-արագ շնչում էր Սահակը, որի երեսի գոյնը լամբարի լոյսի առջև յուզմունքից՝ բոլորովին գնացել էր: Դողում էր և Յարութիւն աղան, որ կատաղութիւնից աչքերը չռած, արագութեամբ

շնչում էր, որից բարձրանում և ցածանում էին նրա ուսերը:

Նա երեսն ետ դարձրեց, երկու անգամ արագ-արագ անցաւ սենեակի երկարութեամբ և գլուխը պտտեցնելով քթի տակ ինքն իրեն ինչոր մրմռաց:

Սահակը նոյն դրութեամբ դեռ կանգնած էր տեղում և նայում էր նրան: Նրա մէջ կատաղութիւնը քանի գնում աւելանում էր դէպի Յարութիւն աղան:

Յարութիւն աղան մօտեցաւ սեղանին, ձեռը դրեց ճակատին և խորը հառաչ հանելով ընկաւ մտածման մէջ: Նա պարզ տեսնում էր, որ զանազան միջոցներով համոզելը, սպառնալը ոչինչ օգուտ չէր բերում: Նա համոզւում էր հաստատ, թէ որպիսի մեծ վտանգ էր կանգնած իւր առաջ, որ միանգամայն յուսահատեցնում, սարսափեցնում էր իրեն: Եւ այդ բոլորը մի ողորմելի մարդուց, մի թշուառական գիւղացուց, որին ամենեւին մարդու տեղ չէր դրել մինչև օրս: Բայց ա՛յժմ... Նա նորից հառաչեց և դիմեց նրան.

—Սահակ, դ՛ու գիտես. բոլոր, բոլոր ունեցածըս քեզ, մի՛ անիր այդ բանը, աղաչում եմ:

—Չեմ կարող—, կատաղութեամբ նրա երեսին գոռաց Սահակն և շարժուեց դէպի դուռը:

—Սպանիր—, առաջ գնալով ձայնեց Յարութիւն աղան,—խի՞ր... մի՛ խօսք էլ...

Սահակը կանգ առաւ և նայեց նրան:

Յարութիւն աղան մօտեցաւ սնդկին, բաց արեց և հանեց մի ծալած թուղթ:

Սահակն ամեն բան մոռացած նայում էր նրա երեսին:

— Ա՛յ, որտեղ որ Աստուած կայ, նա ամեն բան տեսնում է. տեսնում ես... ա՛յ... այ, սա քո խկական բարաթդ է. ես այն ժամանակ քեզ, խաբեցի, չպատուեցի... ա՛յ —, դող-դող ձայնով խօսեց Յարութիւն աղան...

— Ի՞նչ —, սարսափելի ձայնով նրա վրայ գոռաց Սահակն և շարժուեց առաջ: Նրա բարկութիւնն այդ բոլոր այնքան սաստկացաւ, որ ուզում էր յարձակուել, խեղդել Յարութիւն աղային, որ այդ բոլոր նրա աչքում մի անենազգուշի արարած, մի սոսկալի հրէշ ներկայացաւ. — Ինչ ասացիր:

— Խկական բարաթդ է. ա՛ռ, պատուիր...

— Ի՞նչ —, աւելի սաստկութեամբ գոռաց նրա վրայ Սահակն և խլեց նրա ձեռից բարաթը. — դու դեռ երես ունիս էդ լրբութիւնդ ինձ յայտնելու, քո զգուշի դարձելութիւնդ՝ ցոյց տալու. և դու կարծում ես դրանով ինձ... թփե՛ւ —, թքելով նրա երեսին խփեց բարաթը. — չեմ ուզում, ա՛ռ, առանց էն էլ դա քոնն է. մի կոպէկդ ինձ հարած լինի. բոլոր ստացածիս համար բարաթ կտամ, ա՛ռ —. ձեռք գրպանը տանելով և ամբողջ մարմնով սաստիկ ցնցուելով նա հանեց

քսան ռուբլին և շփրտեց նրա երեսով. — ա՛ռ, ահա...

— Դեղին մէկանոցները օդի մէջ ցրել գալով ընկան նրանց ոտերի տակ:

Յարութիւն աղան քարացած մնալով երկիւղով նայեց Սահակի երեսին, որը նրան կատարելապէս սարսափեցնում, մինչև ոսկորները դողացնում էր: Նա մի քալ մօտեցաւ նրան և երկիւղով խօսեց. — ուրիշի բան ասել ես:

— Ասել եմ Մարկոսին, խօսք եմ տուել. հիմայ գնալու բոլորին եմ ասելու —, համարձակութեամբ խօսեց Սահակը:

— Ի՞նչ —, արտասանեց Յարութիւն աղան, որի դէմքն, այդ լսելուն պէս, բոլորովին գունատուեց և նա զգաց իրեն լիովին ոչնչացած, կորած: — Ասել է, ես կորած եմ —, յանկարծ դուրս թռաւ նրա բերանից... ուրեմն ես... ես —, գոռաց նա և կարծես մի բոլոր ուզեց խեղդել, սպանել նրան, բայց կանգ առնելով տեղում՝ նորից ընկաւ մտածմունքի մէջ: Նրա աչքերն այդ բոլոր փալեցին դժոխային արտայայտութեամբ և բոլորովին գազանային կերպարանք ստացած մի քանի վայրկեան յառած մնացին Սահակի երեսին:

Սահակը շարժուեց դէպի դուռը:

— Սպասիր, ապերախտ, ո՛ւր ես գնում. էս բոլորիս հաշիւ տուր բոլոր ստացածիդ —, հաշիւը պատրուակ բերելով գազանաբար գոռաց նրա վրայ Յարութիւն աղան և մի քանի քալ արեց դէպի Սահակը:

... Սահակը դռան մօտ պատի հետ կանգնեց և նայելով նրա դժոխային արտայայտութեամբ փայլող աչքերին սարսափեց, ականայից մի ճիչ արձակեց և յանկարծ սկսեց դողդողալ:

— Սպասիր —, կրկնեց Յարութիւն աղան և մօտեցաւ Սահակին: Նրա կռները կարծեւ, ելէքտրական զօրութեամբ արագ կերպով միասին առաջ շարժուեցին և նա երկու ձեռով ամուր բռնելով Սահակի կոկորդից սաստիկ ուժով խփեց նրան պատին:

Այդ ժուժկու հարուածից Սահակը բոլորովին շշմեց և անգիտակցաբար ձեռները տարաւ կոկորդիքն ազատելու. բայց նրա ոյժը չէր պատում: Նա յետոյ ուզեց դէն մղել, մի քանի անգամ բռռնեցքով ու աքացիով խփեց նրա երեսին ու փորին, բայց Յարութիւն աղան առանց ուշադրութիւն դարձնելու այդ հարուածներին պինդ բռնել էր նրա կոկորդից և հուպ էր տալիս պատին: Սահակը երկար չկարողացաւ դիմանալ այդ դրութեան: Նա սկսեց խռնալ և նրա քթածակերից հազիւ դուրս եկող օդը ֆսսում էր: Նրա գոյնը հետզհետէ փոխւում էր, և նա քիչ-քիչ թուլանալով սողում էր պատի հետ ներքեւ: Նրա աչքերը հետզհետէ լցւում էին արիւնով, կարմրում և դուրս էին գալիս բներից:

Յարութիւն աղան նրա գլխի մօտից խլեց կախուած քաթանէ երեսսրբիչն և ձախ ձեռով փաթաթելով նրա վզով՝ ծայրերն իրար մէջ անցկացրեց և սկսեց բոլոր ուժով ծայրերից ձգել:

Սահակը պատի հետ կուշ եկած խռնում էր և ձեռներն ու ոտները թափահարում:

Յարութիւն աղան ձգեց նրան մէջքի վրայ յատակին, աջ ծնկով չոքեց կրծքին և աւելի սաստկութեամբ ձգեց երեսսրբիչի ծայրերը:

Սահակի մարմինը հետզհետէ կուշ էր գալիս և խռնոցը կտրւում. միայն շարժւում էին նրա ոտներն ու ձեռները: Նրա գոյնը արագութեամբ կապտում էր և սևանում. աչքերը կորսւում էին արիւնի մէջ ու բներից դուրս գալով ետ շրջում, և անիմաստ արտայայտութեամբ փալլում: Լեզուն ուռած և երկարացած կախ ընկաւ բերանից, որի հատ արմատը հազիւ էր զետեղւում նորա բացուած ատամների մէջ:

Յարութիւն աղայի սեւացած և կնճռոտուած դէմքից քրտինքը անձրևի նման կաթում էր Սահակի սաստիկ ուռած և ալլանդակուած երեսին:

Սահակի մարմինն արդէն բոլորովին թուլացել էր և նրա շարժումները փոխւում էին սաստիկ արագութեամբ կրկնուող ցնումների: Քթածակերից, աչքերի շրջապատերից, ականջներից, շրթունքներից ու ատամների արանքից սև արիւն սկսեց դուրս ծորել և կուրծքն ուռչիլ:

Յարութիւն աղան հանգուցն ամրացրեց և մի քանի քայլ հեռու կանգնելով տեսնում էր, թէ ինչպէս էր ցնցւում և դէպի վեր շարժւում Սահակի մարմինը:

Դադարեցին ցնցումներն և հետզհետէ փո-

խուեցին դողի, որը կամաց-կամաց նուազելով վեր-
ջացաւ: Կուչ եկած մարմինը էլի մի ցնցում դոր-
ծեց, քիչ բարձրանալով ընկաւ յատակին, ձեռնե-
րն ու ոտները յատակի վրայ միմեանցից հեռու
տարածուելուց յետոյ բոլորովին հանգարտուեց:

— Վերջացաւ —, շշնջաց Յարութիւն աղան և
շարժուեց դէպի դուռը: Իռան մօտից մի քանի
վայրկեան դիտեց անշնջացող դիակին, որ բոլորո-
վին ալլալուել, ուռել, սեւացել էր, և յատակի վրայ
պարզուելով մի զարհուրելի բան էր դառել, որ
նայողին սարսափեցնում էր և ահւեցնում:

Յարութիւն աղան սարսափահար եղած այդ
ալլալուած դէմքից՝ փախաւ հարեան սենեակը...

Վ Ե Ր Զ

Ընթերցողի ներողամտութիւնն ենք խնդրում:

Տեսուեալ աչքի ընկնող սխալների համար:

Սխալ	Կր.	տող.	Ուղիղ
հարայ	9	8 վ.	հարայ տունին
այբան	13	6 »	այնքան
հաւաջ	27	4 ն.	հառաջ
Թերևորներով	28	7 վ.	Թերթերներով
լինիք —, աշուելով	33	2 ն.	լինի, քաշուելով
հանար	38	10 ն.	համար
համար	38	5 ն.	համար
մտանց	41	1 վ.	մտածեց
հոքից	43	12 ն.	հոկից
զարհուրմար	51	12 վ.	զահուրմար
աւետալու	52	2 վ.	աւետալու
տոտնուտէր	54	4 »	տոտնուտէր
շփոթուեց	72	3 »	շփոթուեց
լինէր,	78	10 »	լինէր:
նախդճայ	80	2 ն.	նա խղճայ
բացում են	90	2 վ.	բացում են
Թագաւորի	90	11 »	Թագաւորել
ցուցի	91	10 »	ցուցի
հալեացքը	92	13 ն.	հալեացքը
ծուրը, Թողեց	98	1 »	ծուրը Թողեց
չբերէր	98	7 վ.	չբերէր
սկեց	98	13 վ.	սկեց
մեն	102	4 վ.	մենք
հեշտեկ	109	4 վ.	հիշտեկ
արտասուէրն	110	2 »	արտասուէրն
եղ	111	14 վ.	եա
այալլուած	112	6 ն.	այալլուած
տոտմ	115	11 վ.	տոտմ եմ
հուժկու	117	3 վ.	հուժկու
վայ	117	4 »	վայը
տնտուն	119	4 »	անտուն
խուր	124	2 »	խուր

0014530

2013



